


7111



81
32

IV m.

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՎԿԵՍՏԻՑ ՑԵԿԵՆ-ՄԵՐԴԵԲԵՆԵԿԵՆ

ԴՐԱՄԱՐՄՆ


Նույր or. Մարիամ Արամեանից՝ ի յիշա-
սոկ իւր հօր՝ բժ. Միսամ Արամեանի.

240
993-րդ Կ Ա Մ Ա Կ Բ

281

ԳՐԱՎԱ ՎԱՐԴԱ ԽՈՎԱ ՎԱՐԴԱ ՎԱՐԴԱ

ԳՐԱՎԱ ՎԱՐԴԱ ԽՈՎԱ ՎԱՐԴԱ ՎԱՐԴԱ



Հայոց Ազգական Գրադարան

1331

Сергей Григорьевич Павлов
Министр внутренних дел З. Маркела Ильинича Штольца
14 октября 1907 г.

W. M. Burroughs Jr.

ՍՈՒՔԻԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՁԵԱՆՑԻ

280
993-914 Ն Ա Մ Ա Կ Ը

$$\frac{281}{7} = 39 \text{ r } 4$$

ԳՐՈՒԱՇ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՑՆԻ ՍԻՆՈՂԻ ԱՏԵՆԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
ԳԵՐԱՊԱՏԻՒ ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ:



b p b h u v

Տպարան Այլազեանց և Նազարեանց

1907

18.07.2013

ԲԱՐԵՍԻՏ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ.

Այս ընդարձակ նամակը՝ զոր ակամայ կամօք մեք գրած ենք 1892 թուականի Ապրիլի 20-ին Արեօլ քաղաքից— մեր առաջին աքսորավայրէն սուրբ Էջմիածնի Սինոդի Առենապետի Տեղակալ՝ գերապատիւ Երեմիա եպիսկոպոս Գալըստեանի անունով և վերադարձին քանի մի մասնաւոր և պաշտօնական գրութիւններով ու ծանօթութիւններով ամբողջացրած, հարկաւոր ենք համարում տապագրութեամբ հրատարակել բազմաթիւ տեղեակ անձնաւորութիւնների կենդանութեան ժամանակ և հրաւիրել նոցա արդարասիրութիւնն վկայել ճշմարտութեան։ Շատ հետաքրքիր էինք, թէ սորա իսկականն սրբազննի մահուանից յետոյ՝ լոյս աշխարհ կ'գայ հասարակաց ծանօթ կլինի, ինչպէս մեր մասնաւոր երկու նամակները նորա ընակարանի կայքերը ցուցակագրելու միջոցին յայտնուած են սրբազնն Սինոդի անդամներին։ Մինն նորա մեզանից առաջ եպիսկոպոս ձեռնադրութեան շնորհաւորութեան մասին, և միւսն՝ աքսոր գնալու առթիւ մեր սեփականութեան՝ իբրև ուխտեալ միաբանի, մայր Աթոռին պատկանելուն համար, եթէ կենդանի չ'վերադառնանք, որին և յանձնած էինք կացարանի և արկղների բանալինները հանդերձ կայք ու կարասիքով։

Սակայն սխալեցանք մեր ակնակալութեան մէջ, երկի անհաճոյ լինելով հանգուցելոյն մատնացոյց արուած անսարդարութիւնք՝ ոչնչութեան է մատնուած այն. բայց „չիքինչ ծածուկ՝ որ ոչ յայտնեցի՝ և գաղտնի՝ որ ոչ ծանիցի“ Տեղական ամենահաւատարիմ վկայութիւն է։

Աշխարհալուր էր այն խայտառակ մատնութիւնն՝ որին
ենթակայ էինք ես, գերապատիւ Ներսէս, Արիստակէս
եպիսկոպոսներ և բարձրապատիւ Դեռնդ վարդապէտ (այժմս
եպիսկոպոս) իբրև արքունի բանկային տոմսակներ ունեցող,
բայց ենթարկուած բամբասանքի, կասկածանքի և բողոքի
որպէս գողակից Յակովը Կիրակոսեանի: Աստուածային
արդարագատութիւնն նպաստեց արգեօք մարդկային ճշշ-
մարտասիրութեան՝ դատաստանով մեզ անպարտ համարել
մինչև այսօր՝ գոնէ մեզ, պաշտօնապէս ոչինչ յայտնի չէ:



ԳԵՐԱՊԵՏԻՒ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ

ՏԵՐ ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Իմ պատասխանս Արարատ ամսագրում հրատա-
րակուած անձշտութիւնների մասին Զեր սրբազնու-
թեանն եմ ուղղում, ըստ որում նորանք հրատա-
րակուած էին յատկապէտ Զեր յանձնարարութեամբ և
թոյլտութեամբ: Նախապէս մի քանի խօսք ինձ նե-
րում եմ ասել:—Առաջին՝ Արարատի մէջ տպագրուած-
ները չ'են խկական պատճառները իմ և սրբազն
ներսէս եպիսկոպոսի աքսորման, ինչպէս Դուք՝ ի-
հարկէ ուրիշների թելաղբութեամբ, ցոյց էք տուած:
Սողունի նման ոլոր մոլոր ընթացք ունեցող, առաջ-
նասեղծ կմոջ խաբող բանսարկու չարը Զեղանով
կամեցել է պատրել մերազգի ընթերցողներին: Այդ
պատրիչ խարդաւանը քաղաքագիտութիւն կոչման
վերաբերն հանած՝ բարակ, թեփոտ, արգարութեան
նշանակ սպիտակ շապիկ է հազել, որ միամիտներն—
ինչպէս պատահում է ցայսօր գիւղական տղաների
հետ, իրենց գլխարկի մէջ տեղաւորելով՝ դնեն զլուխ-
ներին, հաւատալով թէ՝ նա մազ կերկարացնի. Դուք
հաւատացիք, որ այդ շապիկն իշխանութիւն կաւելա-
ցընի: Ծատ անգամ մեծ պետութիւններն ահագին
որոտմունք յարուցանող շրջահայեցների ասած-
գրածների ազգեցութիւնը կոտրելու համար՝ ժողո-

վըրդի տրամադրութեանը նայելով, այնպիսի աննշան առիթներով են անուանարկում նորանց՝ որ բանագէտ հանդիսատեսների ծիծաղն է շարժում։ Այդպէս էլ մեզ պատժելու համար պէտք էր „անբարեյոյս և անհնազանդ“ անունները տալ և այդ բառերի շուրջը պատելու վայել եղած իրողութիւններ յառաջ՝ բերել։ Միթէ հոգևոր Դիտապետ, Եկեղեցական իշխան չեղած ժամանակ, Հայրապետական աթոռի թափուր և սգաւորութեան քօղ կրած միջոց „անհնազանդութիւն“ կարող էր տեղի ունենալ հայ բարձրաստիճան Եկեղեցականների կողմից։ Միթէ անգրագէտ և օտարասէր եպիսկոպոսներին՝ որոնք կառավարական շըրջաններում կաթոլիկոսական թեկնածուներ են նկատուած, անհամակիր լինեն մեր կողմից „անբարեյութիւն“ կարող էր կոչուիլ։

Եւ երկրորդ՝ Զեր սրբազնութեան հետ խօսում եմ ընդհանրապէս սոյն պատասխանի մէջ այնպիս, որպէս թէ յիշողութեանս հեռաւոր, փոքրիկ լուսամուտից տեսնում լինէի Զեր 1860 թուականի արժանիք, իսկ փորձառութեանս մերձաւոր և մեծ դարպասից Զեր 1891 ամի փառախնդրութիւնն։ Այսպիսի՝ անցեալը ներկայի հետ շաղկապող, հայեացքը մտացածին թող չերկի, այլ յարմար և բնական, ըստ որում Դուք էլ ինձ վերայ ներել էք Զեզ նայել նինու նոր դէպքերի տեսակէտով, 1877 թուականի Հայաստանեացս Եկեղեցւոյ ընդհանրական Հայրապետի անհնազանդ գտնուելուս և 1891 տարուայ Սինօդի Ատենապետի Տեղակալիդ՝ առանց Հայրապետութեան օրինաւոր Տեղապահ ճանաչելու, գործողութիւններին

և հրամաններին դատմունք կցորդելուս պատճառներով, որոնք ինձ և սրբազան անդամակցացս լիակատար թոյլատրուած և շնորհուած էին օրէնքով։ Բաւական եմ համարում այսքանս։ Արդէն գիտակներին մի հարևանցի ակնարկն ևս բաւական է, անտեղեակներին և չարամիտներին հազարաւոր խօսքերով համոզելն էլ անհնարին է։ Ուրեմն սկսեմ գրաւոր առարկութիւններին գրով պատասխանել։

Ա.

Սուրբ Էջմիածնի Արարատ պաշտօնական հրատարակութիւնը Զեր գերապատութեան նախընթացքարեհաճութեամբ, անցեալ 1891 թուականի Դեկտեմբեր ամսականից սկսած մաս առ մասն հրատարակել է այն ամէն անախորժ հանգամանքներն՝ որոնք իբրև թէ առիթ են եղած իմ և Ներսէս սրբազան Եպիսկոպոսի աքսորման։ Ամենէն յառաջ նորանում մէջ է բերուած պարոն Պետրոս Սիմէօնեանցի մասին սրբազան Սինօդի չորս անդամների՝ նախագահիդ կամքին հակառակ, կայացրած օրագիրն, որով նա հանգուցեալ Հայրապետի տնօրէնութեան համաձայն մնում է խմբագրութեան գործակցի պաշտօնով սուրբ Էջմիածնում։ Որովհետև նոյն ամսականի ծանօթութիւն գրող միաբանը պարոն Սիմէօնեանցի կրկնակի խընդըրագրութիւնից է յառաջացած տեսնում անդամների և սրբազնութեանդ մէջ տեղի ունեցած տարածայնութիւնն, իսկ Յունվարի և Փետրվարի ազգային բաժնի հաւաքողը միակողմանի հայեացքներով յեղացր-

ջում է ճշմարտութիւնն՝ ինչպէս և Զեղ լի ու լի յայտնի է, ուստի ես պէտքէ աշխատեմ՝ որքան կօդնէ ինձ յիշողութիւնս—առանց ձեռքի տակ ունենալու եղած գրագրութիւնները, մի առ մի յառաջ բերել եղելութիւններն և ապացուցանել՝ որ պարոն Պետրոս Սիմեօնեանց գեռ ոչինչ լինդիր չ'ներկայացրած իւր Տփխիս գնալու մասին և Զեղ բերանացի առաջարկ չ'արած՝ արդէն անդամների և նախանդամիդ մէջ բաւականին խոր արմատ ձգած էին տարածայնութիւններն։ Այն, ապացուցանել՝ որ եղելութիւնները չեն արձանագրուած այնպէս, ինչպէս կ'վայելէ պաշտօնական, անկողմնապահ հրատարակութեան։ Տեղապահիդ և անդամների գժտութիւնը յառաջացած էին խապէս յետագայ պատճառներից։

Նախ՝ կաթուղիկոսի թաղման երկրորդ օրն՝ այն է Ապրիլի 23-ին, Բագու քաղաքի յարգելի պատգամաւորները՝ Զեր գերազատուութեան նախընթաց հաճութեամբ, սուրբ պատարագ էին մատուցանում էջմիածնի տաճարում նորա յիշատակին և միաբանութեան սեղանատան ճաշ պէտք է տային։ Նոյն օրը գիշերուայ ժամերգութիւնից յետոյ՝ երբ Զեր հետ եկեղեցուց սենեակ էինք դառնում, Դուռ ինձ ասացիք։ «Սրբազն, այսօր վեհարան չ'բանանք»։ Այս հարցին ես պատասխանեցի. «Սրբազն Հայր, չ'գիտեմ որքան յարմարութիւն ունի բագուեցոց պատարագը թողնել և վեհարան գնալ, բոլոր պատգամաւորները ներկայ կ'ինին, մեր բացակայութիւնը կարծում եմ սառնութիւն թուի ընդունուած սովորութեան առաջ»։ Այն խօսքերից յետոյ Դուք աւելացրիք. «Այդ ես էլ եմ

զգում, բայց պարոն Ամբարդանեանցը կամենում է շուտառվ գնալ, նորա համար ասացի»։ Ես իսկոյն վերայ բերեցի. «Նորան մեք ոչինչ արգելք չ'ենք լինում, երբ կամենայ՝ կարող է գնալ։ Շատ տեղեր սովորութիւն է տան տիրոջ մահուան տարելցից կամ քառասունքից յետոյ կտակ բանալ, կայքի մասին կարգադրութիւն անել, մեք գոնէ եօթնօրեքից յետոյ անենք այդ։ Արդէն գոները կնքուած են և պահապանները հսկում են, ինչ վտանգ ունինք»։ Սորանով վախճան առին իմ և Զեր նոյն օրուայ խօսակցութիւն վեհարանի գոները բանալու մասին։

Սուրբ պատարագից և գերեզմանի վերայ հոգեհանգիստ կատարելուց յետոյ՝ ամբողջ միաբանութիւնն և պատգամաւորները՝ որպէս հրաւիրուածներ, գնացինք սեղանատուն ճաշելու։ Ճաշկերութից յետոյ արժանապատիւ կիւրեղ վարդապետը Հայրապետի հոգւոյ փրկութեան համար բարեմաղթութեան բաժակ առաջարկեց և մի քանի սրտառուչ խօսքերով նկարագրեց մեզ նման վարանդի եբբայական ժողովրդի երեմնին վիճակը, միենոյն միջոց յորդորեց ինըրել Աստուծոյ այցելութիւնն և ազգայինների լրջամիտ ընտրութիւնը Հայաստանեայց եկեղեցւոյ Պետի մասին։ Սեղանից արձակուելուց յետոյ իւրաքանչիւր ոք առանձին և մէկը միւսի հետ սոյն օրուայ և յերեկուայ բանախօսութիւնների վերաբերութեամբ սկսան դատաստան առնել։ Նոյն իսկ Դուք, ինչպէս մոռացած չ'եք լինիլ, ասացիք ինձ. «Այն խօսքերն՝ ինչ որ յերեկի Սրիստակէս սրբազնն առաց սեղանատանն, ես ասացի էջմիածնի տաճարում

Մակար կաթուղիկոսի Քիշնեից եկած ժամանակ. ինչ յանցանք է ասելն «Հայոց ազգի արտասուբ պէտքէ սրբեն նախ Աստուած և ապա Ռուսաց կայսրն», որ զանազան աջ ու ձախ խօսքեր են լինում այդ մասին»։ Մէկ օր՝ յետոյ, այն է ամսոյ 24-ին կաթուղիկոսարանի դռները բանալու օրն, ինձ ՚ի միջի այլոց պարոն Ամբարդանեանն ասաց. «Հաւ չէր լինիլ՝ որ յերեկի ոչ միւս օրն սեղանատան Դուք խօսէիք իբրև վեհափառի մերձաւոր։ Արիստակէս եպիսկոպոսն խօսեց, պէս պէս մեկնութիւն են տալիս նորան, որ պէս թէ կաթուղիկոսի հետ չունէր։ «Պատասխանեցի նորան»։ «Ես շատ շնորհակալ եմ սրբազան Տեղապահից, ամէն բան լաւ էր կարգադրել իմ մեծաւորին արժանի պատիւ տալու մասին։ Նա վաղուց յանձնած էր՝ որ ես եկեղեցումն խօսիմ դամբանական, կամ սուրբ պատարագ մատուցանելով օծանեմ. ես թուլարտութեան պատճառով հրաժարուեցի, որպէս զի անտեղի բան չպատահի»։ Կարծեմ և Պոլիս իսկ հաղորդուեց հեռագրով սրբազան Արիստակէս եպիսկոպոս Սեղբակեանցի բանախօսութեան իմաստն, որ Արևելքի մէջ տպագրուելով՝ ստացուեց էջմիածին և Զեր Տեղակալութեան կուսակիցների հակառակորդ թշնամի խմբի գոյութեան կարծիք տուաւ։ Ինչպէս տեսնում է նոյն իսկ վեհափառի թաղման օրից խըմբերի նշարանք եղած են, և այն էջմիածնի պարսպից դուրս անձնաւորութիւնների մէջ։ Սակայն Դուք ևս չէք կարող մոռանալ, որ այսպիսի անդրապայման, բայց և արդարացի, զգուշաւորութեան դիրք տուաւ պարոն կառավարչապետի կողմից եկած պատ-

գամաւոր պարոն Ամբարդանեանի եպիսկոպոսներին ասած սոյն խօսքերն, «Կաթուղիկոսացուի անձնաւորութեան համար լաւ է որ դուք ամէնքդ ունենաք Զեր զգուշաւորութիւնն այս և այն մարդու անուն հրապարակ չ'հանելով, ըստ որում առանց կառավարութեան առանձին հաճութեան ոչ ոքի չ'պէտքէ յաջողի այն բարձր դիրքն ընել, և արդէն իշխանութիւնն ունի իւր ընտրելի եպիսկոպոսին»։ Իսկ ընտրելի եպիսկոպոսներ էլ անուանում էին Զեզ և Արիստակէսին նոյն իսկ կաթուղիկոսի մահուան վայրկենից՝ սկսած պարոն պրօկուրօրի տանից մինչև Սինօդի առանձին յանձնարարութեանց աստիճանաւորի բնակարանն՝ մէջ առնելով պարոն զաւառապետին և վարժապետ ատենադպրին։ Բայց և այնպէս, ամենայն խղճի մտօք դատելով՝ Դուք ինքներդ լաւապէս յիշում էք, որ ես ընդհանրապէս իմ հոգնոր ծնողի անակնկալ մահով խորապէս զգածուած, անմիտար սգաւորի նման ոչինչ այնքան չէի մտածում, որքան ամէն զրոյցներից հնարաւոր զգուշութեամբ վախուստ տալ, ինչպէս և Զեր հարցմունքին պատասխանեցի. «Ամեն չնչին բանի հետ չեն ընկնիլ և փոքր խնդիրը քրքրելով մեծացնիլ և խօսակցութեան առարկայ շինիլ»։

Հետևեալ օրն առաւօտուն, այն է Ապրիլի 24-ին, գիշերուայ ժամերգութիւնից յետոյ, Դուք մարդ էիք ուղարկել ինչպէս ինձ, նոյն և միւս անդամներին, ժողովիլ Զեզ մօտ և գնալ վեհարանի կնքուած դըռները բանալու։ Թէպէտ ես սպասում էի պարոն Ամբարդանեանին ընդունել, ինչպէս նա իմաց էր տուած

շաթիր Խաչատուրով, բայց և այնպէս փութացի ես սրբազնութեանդ սենեակը. ծառայն ասաց արդէն գնացած էք: Հարցրի նորան. «Սրբազանն միայն գնաց՝ թէ անդամներով», և պատասխան ստացայ՝ որ Դուք միայն էք գնացել և ապա Սարգիս և Արիստակէս եպիսկոպոսները եկել տեսել են՝ որ Դուք սենեակում չէք՝ իրենք ևս գնացել են, ես հետեւցի նոցա օրինակին: Ճանապարհին տեսնում եմ տփիսեցի, աղէքսանդրապօլցի, բագուեցի և այլ տեղացի պատգամաւորներ, որոնք յերեկի հրաժեշտի ողջոյններ տուած՝ պէտքէ այսօր գնացած լինէին, և լսում եմ որ Զեր գերապատութիւնը նոցա հիւրընկալ բարեցնորհ Նեսնդ վարդապետի միջոցաւ յանձնել է վեհարանի բացման ներկայ լինելու: Վեհարանի սանդուխներից բարձրանում եմ և նախասենեակի բազմոցի վերայ նստում: Այդ ժամանակ պարոն Ամբարդանեանցին յատկացրած սենեկից դուրս է գալիս պարոն Ռուբէն Մելիք-Աղամեանցն և հարցնելով հրաւիրում է. «Ի՞նչո՞ւ չէք ներս գալիս, համեցէք, սըրբազաններն այստեղ են»: Պատասխանում եմ. «Ի՞նչ հարկ կայ պարոնին ձանձրացնելու, հիմայ դուրս կ'գան և կսկսենք. առաջ այս դուռը պէտք է բանանք. ահա ես պատրաստ եմ»: Պարոնն ինձ թողնելով՝ վայր իջաւ և գաղպաշի Ստեփաննոս Համազասպեանցին պատուէր տուաւ՝ շուտով գնալ և գաւառապետին կանչել:

Այս յանձնաբարութիւնն լսելուս ժամանակ սըրբազան ներսէս եպիսկոպոսն ևս վեր բարձրացաւ. գնանք ներքե, ասացի նորան: Սանդուխների վերայ պատա-

հելով պարոն Մելիք-Աղամեանին վերադառնալիս՝ «Պարոն գաւառապետին ով և ինչո՞ւ համար են կանչում», հարց առաջարկեցի: Պատասխանեց. «Տեղապահն, որպէս զի ներկայ գտնուի ցուցակագրութեանն»: Պատուիրեցի Համազասպեանցին՝ չգնալ սպասել, և ապա գարձայ Մելիք-Աղամեանցին. «Թող սըրբազանը խելքը վլուխը հաւաքէ և զայ նախապէս մեզ համոզէ թէ՝ ի՞նչ հարկ կայ օրէնքի որոշ ցուցմունքներից հեռանալու, և ապա հանդիսականներ հրաւիրէ»: ¹⁾ Այս խօսքերից յետոյ ես և ներսէս սըրբազանն գնացինք գանձարան, ուր եկան և միա-

¹⁾ Զեմ կարծում թէ՝ Դուք մոռացած լինիք այդ խօսքերն, լստ որում Զեր իշխանասիրական և անձնասիրական զգացմանց այնքան դիպան նոքա՝ որ ինձ հետեւեալ օրը, Զեր սենեակում նկատեցիք. «Ի՞նձ ի՞նչ պէտք է անէք, որ յերեկի ծառաների ներկայութեան այնպէս զայրացաք. Երբ աչքերդ քեալէդ է թոչում՝ չես իմանում ինչ ես խօսում»: Եւ արդարե, իմ մեծ պակասութիւնն է, որ անիրաւացի և վատթար գործողութեանց վերայ շարժուած բուռն արդար բարկութեանս առաջին վայրկենում չեմ կարողանում պազարիմութեամբ ինձ տիրել: Այս թոյլ կողմս ամէն ոք ինձ ճանաչողները նկատած են, բայց գովեստի արժան գատած, այն ինչ իմ կրած թշուառութեանց աղբիւրն այդ է միայն: Երբ Տեղապահի սենեակ եմ կոչվում խորհրդի և Ամբարդանեանի կացարանն եմ հրաւիրվում տեսնել նորան՝ ի՞նչպէս կարողանայի ինձ տիրել: Կարծեմ հեզ Մովսէսն էլ երբ արտաքոյ ակնկալութեան գէպքի՝ հանդիպեց՝ պատգամաց տախտակներն կործանեց զայրութից: Կվայելէր՝ որ կառավարչապետից ուղարկուած՝ ի պատիւ կաթուղիկոսի թաղման անձնաւորութիւնն լինէր և կարգադրող՝ իրեն նախագահ սինօդական ժողովոյ, հայրապետական կայից ցուցակագրութեան եղանակին:

ցորդ անդամները, պրօկուրօր և Դուք: Բաւականին ջերմ վիճաբանութիւնից յետոյ՝ ես ասացի Ձեզ. «Սրբազն, բարձրագոյն կանոնադրութիւնն որոշ հրահանգով Սինօղի իրաւանց է թողել կայից ցուցակագրութիւնն, ինչ հարկ կայ կողմանկի մարդիկ հրաւիրել և ինչ վայելչականութիւնն ունի Հայրապետանոցը հասարակաց աչքի առաջ բանալ և այն այնպիսի անվայել, տակն ու վրայ եղած անշքութեամբ: Ինձ ձայնակցեցին միւս անդամներն էլ, և ապա ըսկըսաւ ցուցակագրութեան գործն առանց արտաքին անձնաւորութեանց միջամտութեան:

Իմ յատուկ գիտաւորութիւնս էր վեհարանի կայքի, գոյքի և թղթերի ցուցակագրութեան ժամանակ աւելորդ համարել և պարոն պրօկուրօրի ներկայութիւնն, ըստ որում նորա պաշտօնն է Սինօղում վճռուած գործերի վերահասութիւնն, որպէս զի լինին նորա համաձայն պետական օրինաց: Այսպիսի իսկ դիտաւորութեամբ և յայտնեցի արտունչ պարոն Ամբարդանեանցին՝ նորա (պրօկուրօրի) կողմանէ կաթուղիկոսարանի գուների վերայ դրուած կնքի մասին: Եւ արդարե, եթէ նա համարվում է Սինօղի շրջանում գտնուած անձնաւորութիւն՝ վերջինիս պաշտօնական կնիք գնելուց յետոյ, այլ ևս ինչ հարկ կար նորա պաշտօնական դրոշմին: Իսկ թէ նա արտաքոյ հոգեւոր բարձրագոյն ատենի կ'ձանաչուի մի վերահսկող, այդ դէպքում նա պէտքէ արձանագրաւկան ցուցակների կազմութիւնից վերջ իւր օրինական հակողութիւնը գործադրէր՝ թէ ստուգութեամբ արգեօք կազմուած են նորա՝ թէ ոչ: Սակայն սրբազ-

նութեանդ առանց դորան ևս վրդովուած կացութիւնը պրօկուրօրի ներկայութեանը նպաստեց, որովհետեւ նմանօրինակ դէպք պատահել էր և Գէորգ կաթուղիկոսի մահուանից յետոյ: Այդ ժամանակ Դուք՝ իբրև մտերիմ խորհրդական Տէր-Յովսէփիեանց պրօկուրօրի, սիրելի և հաճելի երևելու համար կառավարութեան աչքում, թոյլատրած էիք նորա ներկայութիւնն և նորա հրաւիրանօք կառավարչապետից ուղարկուած իշխան Թումանեանցի և այլ պատգամաւորների ներկայութիւնն:

Հետաքրքիր է այս մասին ինձ հետ ունեցած Վաղարշապատի պարոն քննչի խօսակցութիւնն հարցական ձեռվ և իմ պատասխաններն՝ որոնք, պէտք է ցաւելով ասել, ամբողջովին չ'մտան անձանագրութեան մէջ՝ Երևանի պրօկուրօրի օգնականի թոյլ չ'տալովս, իբր սուր առարկութիւնք և խնդրին չ'վերաբերուած բացատրութիւնք: «Դուք անպատիժ չ'ք մնալ՝ ասաց նա, կառավարչապետից ուղարկուած մարդուն՝ որ գեներալի աստիճան ունի, անպատուելու մասին, ըստ որում չ'թողիք կաթուղիկոսական կայքի ցուցակագրութեան ներկայ գտնուիլ»: «Պատժի մասին Դուք նեղութիւն միք քաշիլ ինձ ակնարկել, ասացի ես, այդ դատարանի գործն է: Պարոն Ամբարդանեանն եկած էր Հայրապետի թաղման ներկայ գտնուիլ և այդ մասին ոչ ոք արգելք չէ դրած նորա առաջ: Իսկ թէ կայքի ցուցակագրութեան ներկայ չ'գտնուելովս անարագուած է համարվում, այդ օրէնքից պէտքէ պահանջել և ոչ ինձանից, ըստ որում նա միայն Սինօղին է հաւատում այդ գործողու-

թիւնն»: «Երբ Տեղակալն նորան հրաւիրում է ներկայ գտնուիլ՝ Դուք ի՞նչ իրաւունքով հակառակում էք Զեր իշխանութեան»: «Որովհետեւ այդ սինօդական խորհրդի գործ էր և ոչ միայն Տեղապահի, ուստի ձայների բազմութեամբ վճռուած է այդ խնդիրն և ոչ Տեղապահի իշխանական հրամանով՝ որին Դուք ակնարկում էք, և ոչ ոք ցայսօր իմ ձայնի արտօնութիւնն առած չ'է ինձանից»: «Ի՞նչ յանցանք էր՝ որ Զեր ազգի աշխարհական պատգամաւորները ներկայ լինէին և իմանային թէ՝ ուր է գտնվում իրենց տուած նուէրներն, և Տեղակալի միտքն այդ է եղած նորանց հրաւէր ուղարկելով»: «Մեզանում այնպէս է ընդունուած՝ սուրբ Աթոռի անունով ազգից տրուած նուիրաբերութիւններն արձանագրվում են կնքուած և ժապաւինած մատենում. այս հաշիւները տեսնելու ժամանակ եթէ կանչուին ազգայինք՝ ես ոչինչ խօսք չ'ունիմ: Բայց կաթուղիկոսին և ուրիշ հոգևորականի արուած աջահամբոյր նուէրը մասնաւոր և անձնական է համարվում, որոյ հաշիւն տեսնելու ոչ ոք արտօնութիւն չունի, ինչպէս ես չ'եմ կարող աղքատին տուածս ողորմութեան հաշիւ և համարն պահանջեք: «Ամբարդանեանն կառավարչապետի անձն ներկայացնող էր, եթէ նոյն իսկ Փոխարքայն կամենար ներկայ լինել այն գործողութեան՝ ի՞նչ պէտք անէիք»: «Եոյնն՝ ի՞նչ որ արուեցաւ պարոն Ամբարդանեանին, ըստ որում Ռուսաստանում օրէնքից բարձր միայն և եթ Կայսեր անձնաւորութիւնն է ճանաչուած»: «Դուք ի՞նչ վնաս էք տեսնում կողմնակի մարդկանց ներկայութեան մէջ»: «Ես իմ անձիս—


Եբր Սինօդի անդամի արհամարդանքն կապնապատճեամբ
թիւնն եմ տեսնում այլոց ոկրագրմեամբ: Պետական օրէնքով բացուած և նորանում ծրագրով վարչութիւնն հոգևոր հաստատութիւնն պէտքէ թւղթիւն ունենայ իշխանութեան վստահութիւնն. քանի որ հիմնաւոր պատճառներ չ'ունի կասկածանքի»: «Ես եկեղեցական եմ համարում կաթուղիկոսական գոյքն և պէտքէ օտարների ներկայութիւնն չ'արգելուէր»:
«Ի՞նչպէս որ Զեր եպիսկոպոսներն և մետրապօլիտներն ունին իրաւունք իրենց սեփական կայքը կտակաւ թողուլ մերձաւոր անձերի կամ հաստատութեանց, նոյնպէս և մեր վանականք: Առաւել լաւ որ եկեղեցական էք ճանաչում կաթուղիկոսի գոյքն, ուշրեմն թողէք եկեղեցական իշխանութիւնն՝ որ Սինօդն է, տնօրինէ նորա մասին. ի՞նչ գործ ունին այդ տեղ գաւառապետ և այլ պաշտօնական անձինք»:
Այսպիսի ներհակընդդէմ ասուլիսով վերջացան մեր ընդգարձակ հարց ու պատասխանիք քննչի նետ:

Որովհետեւ խօսք եղաւ պարոն Ամբարդանեանի ներկայութեան արգելք լինելուս մասին, ուստի պատմական կարգի ամբողջութեան պահանջը պէտքէ կատարեմ և այդ առթիւ նորա հետ ունեցածս տուարկութիւնք յիշատակելով: Ի՞նչպէս փոքր ի՞նչ յառաջ ասացի, կաթուղիկոսարանի գոների բացուելու օրն, առաւօտուն նոյն պարոնն ցանկացել էր ի՞նձ մօտ գալ, բայց Զեր, պարոն պրօկուրօրի, ումանց անդամոց և պարոն Մելիք-Ադամեանցի վաղագոյն իւր սենեակ գալն արգելք էր եղել այդ դիտաւորութեան կատարմանն՝ որ և յայտնեց նոյն շամբեր Խաչատրի

բերանով թէ՝ այժմս—առաւօտուս, չեմ կարող գալ յետոյ կ'զամ: Երբ վեհարանից Յակովին հետս առած սենեակս դարձայ, իսկոյն պարոնն եկաւ մօտս, ներողութիւն խնդրեց՝ որ առաւօտուն չ'կարողացաւ գալ և ասաց, շուտով մտադիր եմ գնալու, իբրև հայ հարկաւոր համարեցի Զեղ տեսնել և մի քանի խօսք ասել: Իսկոյն ես Յակովին պատուիրեցի դուրս գնալ և դռանն ինձ սպասել ուրիշ տեղ չ'գնալ, որպէս զի՞ միասին գնանք ճաշելու: «Զեզանից խընդրում եմ նախ՝ ասաց նա, որ միւս անդամների հետ ձեմարանի պահպանութեան լաւ խնամք տանէք. նորա կանոնադրութիւնն եկած է փոքր ինչ փոփոխութիւններով, ափսոն, որ Կաթուղիկոսի մահն վաղահասեղաւ, ապագայ Հայրապետի հաւանութեանն կ'յանձընուի և յոյս ունիմ, որ ընդունուի: Երկրորդ՝ ապագայ թէկնածուի համար բացարձակ աշխատութիւններ չ'լինին Զեր և անդամների կողմանէ այս և այն անձնաւորութեան ընտրութիւնն յաջողցնելու, ըստ որում Տէրութիւնն ունի արդէն ՚ի նկատի իւր ընտրելին: Եւ երրորդ՝ Դուք և անդամք գ՞նի էք պարոն պրօկուրօրից՝ թէ ոչ».

Այս առաջարկներին ու հարցումին պատասխանեցի. «Զերդ գերազանցութիւն, երբ Դուք բարեհաճեցիք իբրև հայ խօսիլ, ես ևս իբրև հայ եկեղեցւոյ սպասաւոր պիտի խօսիմ անկեղծաբար: Ճեմարանի պահպանութիւնն հանդուցեալ Հայրապետի տնօրէնութեան համաձայն, մեր ամենեցուն սրբազան պարտաւորութիւնն կ'լինի: Թէ գերապատիւ Երեմիա եպիսկոպոսն և թէ մեք ամէնքս պատգամաւորներին

խօսք ենք տուած՝ տեսակցութեան առաջին իսկ օրն, ամէն կարդ ու կանոն պահպանել այնպէս, ինչպէս եղել են հոգելոյս Քահանայապետի օրերում՝ մինչև Աստուծոյ այցելութիւնն:—Անհնարին է՝ որ ես և միւս անդամք՝ իբրև ձայնաւոր ընտրողներ, չ'աշխատենք մեր ընտրելի հովուապետն ունենալ: Տարակոյս չ'կայ, որ բարեխնամ Կառավարութիւնն կունենայ իւր ընտրելին, բայց նա նորա մէջ ամէն յատկութիւններից բարձր կ'ցանկանայ տեսնել հաւատարիմ հպատակութիւն. իսկ մեր բաղձանքն պէտքէ լինի՝ որ այդ ընդունակութեան հետ ունենայ ընտրելին գերազանց չափով Հայստանեայց եկեղեցւոյ ինքնուրոյնութեանն նախանձախընդրութիւնն: Այս շահերն թէն միմեանց հետ անհաշտ են տեսնվում, բայց բանիմաց հայ հոգեորականի գլխաւոր առաքինութիւնն է հաւատարիմ հպատակութիւն օրինաւոր իշխանութեան, և կենդանի մարտիրոս եկեղեցւոյ հաստատութեանն: Պարոն պրօկուրօրի վերաբերութեամբ՝ իմ մասին կասեմ, բարի մարդ է. իսկ վրացի է. սակայն մի անզգուշութիւն ունեցաւ Հայրապետանոցի դռներին կնիք դնելով Սինօղի գրոշմից յետոյ, բայց և այսպէս՝ եթէ ապագայում օրէնքի անունով ուրիշ աչքի ընկնելու բաներ չ'անէ, մեզ համար միշտ յարգելի է:

Սոյն համառօտ փոխանակութիւնից յետոյ ինքս դարձայ նորան հարցմունքով. «Զերդ գերազանցութիւն, կցանկայի իմանալ՝ Զեղ Տէր Կառավարչապետից հրահանգ տրուած էր անշուշտ ներկայ գտնուիլ Կաթուղիկոսի կայից և թղթերի ցուցակագրութեանն, և երբ այսօր այդ մասին արգելք եղաւ՝ Դուք չէք

վշտացած մեզանից»։ Պատասխանեց. «Ինձ որոշակի չ'է յանձնուած անպատճառ ներկայ լինել, բայց և չ'է արգելուած եթէ Սիսօղի կողմանէ հրաւէր լիներ՝ ներկայ կդանուէի. իսկ վշտանալու ոչինչ չկաց, ըստ որում այդ տիսուր գործողութիւնն՝ ննջեցելոյ ունեցածի մասին զբաղուիլն, ինքն իրեն մի տեսակ վիշտ է»։

Ուրեմն՝ ինդրում եմ Ձեր ուշադրութիւնն շնորհել յետագայ քանի մի խօսքերին, որից կիմանաք սրբազն անդամոց դիտաւորութիւնն։ Պէտքէ ասեմ ստուգութեամբ՝ որ Ձեր գերազանցութեան ներկայ չգտնուելու մասին ինքս եմ առաջ ինդիր յարուցել և քանի մի անդամք ձայնակցելու՝ մեծամասնութիւն է կազմուել և ապա կատարուել, և այն շատ բարի նպատակաւ։ Ձեզ լաւ յայտնի կ'լինի՝ որ 1836 թուականին բարեյիշատակ Նիկողայոս կայսրից մեր եկեղեցական վարչութեան շնորհուած կանոնադրութիւնն երկար ժամանակ օտարահպատակ մերազգիների մէջ զայթակղութիւն դարձաւ և արտունջ բարձրացաւ՝ որ իբր թէ մեր եկեղեցւոյ հոգւոյն հակառակ է։ Այդ մասին եղած են շատ գրագրութիւնք կոստանդնուպօլիսի, Հնդկաստանի և Պարսկաստանի հայերից և ժամանակի կաթողիկոսներն՝ ինչպէս Յովհաննէս, Ներսէս, Մատթէոս և Գէորգ, հասուցել են Կտորավարութեան գիտութեան և բարեփոխութիւններ ինդրել՝ որոց մասամբ հասել են և մասամբ ոչ Դոյն կանոնադրութեան մէջ մի յօդուած մեր հայրենաւանդ նուիրական հնութիւնն է պահպանում և այս տագնապալից ժամանակ մեզ շատ շատ ձեռնտու է նորա իրազործութիւնն. այդ նոյն իսկ բարեկինամ պետութիւնն էլ ցանկա-

նում է։ Դա է ամէն տեղի հայերից յատուկ պատգամաւորներ գալ, ժողովիլ էջմիածին և այստեղ կատարել ապագայ եկեղեցական Պետի ընտրութիւնն։ Այս գործողութիւնն մի միջազգային մեծ նշանակութիւն կտայ Հայոց Ծայրագոյն Պատրիարքին. գորամասին թղթակցութիւնք եղած են հոգելոյս Հայրապետի և Պօլոյ կրօնական ժողովոյ մէջ։ Մեք յատկապէս պրօկուրօրի կողմից գրաների վերայ կնիք դնելու մասին արտունջ յայտնելով և Ձեր գերազանցութեան ներկայութիւնն չ'կամենալով ցանկացանք սուրբ պահպանել բարձրագոյն կարգադրութեան որոշումները, որպէս զի կարողանանք յարգել տալ մերայնոց այն նշանաւոր յօդուածն՝ նորանց ընտրողական պատգամաւորների այս վաղաւուրց տաճարումն գումարուելով, և այս անշնուշտ կ'յաջողի, եթէ միայն նորաշնչին արժէք ունեցող ինդիրների մասին գայթակըցութիւնից աղատ լինին։ Ահա, այս էր մեր գիրդութիւնը աղատ լինին։ Առաջ մեր գայթակըցութիւնը Յուլիոս, իբրև Ճշմարիտ հայ մարդ և ժամանակի քաղաքականութիւնն լաւ հասկացող, պէտքէ սրտակցէք մեր գործողութեանց և ուր որ հարկն է բացատրէք մեր միամիտ և բարի գիտաւորութիւնը։ Առանց որոշ պատասխան տալու այս խօսքերին՝ լաւ է, լաւ է, ասաց նա և արձակուեց պարոն պրօկուրօրի տունն գնալու ճաշի, առանց մեր սեղանատունն գալու, ուր պատրաստութիւն կար։ Սոյն տեսակցութեան ժամանակ եղաւ և սեղանատան կըրկնակի բանախօսութեանց մասին ակնարկութիւնն, զոր փոքր ինչ յառաջ յիշած եմ։

Երկրորդ՝ երբ ակնկալութիւնից դուրս Վեհաբրկուրդ երբ ակնկալութիւնից դուրս Վեհա-

փառի արկղում գտնուեց մի հազար ութ հարիւր ըուբ-
լի և իմ զեկուցագրիս վերայ հիմնուած Սինօդը քըն-
նութիւն կարգել տալով՝ յայտնեց գողունիքն, գերա-
պատուութիւնդ Ամատունի Սահակ աբեղայի ցուց-
մունքով տպարանի ծախքերի մատենից հանում էք
այն ամէն արքունի դրամանոցի տոմսակների թուերն՝
որոնք իրեւ դրամ գանձապահից յանձնուած են եղել
Տփխիս ուղարկելու, և Զեր առանձին գրութեամբ
ուղարկում էք պարոն քննչին որպէս կաթուղիկոսա-
կան յափշտակուած տոմսերի համարներ, և ինդրում
էք խուզարկութիւններ կատարել՝ նորանք ՚ի յայտ
ածելու: Դեռ այդ գրութիւնը չուղարկուած՝ Դաւ-
թեան Արիստակէս սրբազն եպիսկոպոսը՝ տպարա-
նական ժողովի նախագահը, բերանացի յայտնում է
Սինօդում՝ որ տպարանի մատենում եղած թուերը
պահանջուած են իրենից և ինքն իւր տոմսակների
համարները ՚ի բաց հանելով՝ միւսները յանձնել է:
Այս տեղեկութիւնն մեծ զարմանք է պատճառում
ինձ և Ներսէս սրբազնին, ըստ որում մեր սեփա-
կան տոմսերի թուերն յանձնուած էին, ուստի և
սրբազնութեանդ ատենական օր յայտնեցինք Սինօ-
դում թէ՝ «լաւ կլինէր ստացուած դրամատոմսերի
թուերն առանց մեր զիտութեան չուղարկուին քըն-
նըչին, ըստ որում մեք ևս ունինք այն թուերի մէջ մեր
սեփականը». և խոստացանք առանձին առանձին իւրա-
քանչիւր ոք իրենը նշանակէ և յանձնէ: Առանց ստու-
գութիւն գործելու և յարգելու մեր խնդիրը՝ Դուք ու-
ղարկում էք յիշատակուած գրութիւնը, որ ըստ էու-
թեան ամբաստանագրութիւն կ'համարուի և ոչ այլ ինչ:

Այս տեղեկանալով՝ դարձեալ ատենական նիստի
ժամանակ, ես և Ներսէս եպիսկոպոս ընտանի եղա-
նակով տրտունջ ենք յայտնում Զեր սրբազնութեան:
Ես ասում եմ մերձաւորապէս յետագայ խօսքերը:
«Զեր լաւ յայտնի է՝ որ մենք դրամատոմսեր ունինք,
ունին և ուրիշները միաբան եղբայրներից, դրամ ու-
նենալ յանցանք չ'է, այլ անարդար ճանապարհաւ ու-
նենալն է մեղք: Երեսուն տարի է դրամաւոր պաշտօն-
ներ եմ վարում, ինձ համար ամօթ չէ՝ որ աև օրուայ
համար չ'ունինամ յետ ձգած մի քանի հազար ըրութի,
մինչդեռ էջմիածնի դրութիւնը ինձ յայտնի է՝ որ
չ'ունի մի կանոնաւոր հիւանդանոց: Աբէլ, Յովհաննէս,
Եղիազար, Սարգիս և այլ շատ եպիսկոպոսներ յետին
անխնամ դրութեան մէջ են վախճանուել: Դուք իսկ,
սրբազն՝ որ դուքս չ'էք գնացած էջմիածնից և ոռն-
կաւոր պաշտօններ չ'էք վարած, չ'ունիք դրամ, և
ինք հազարի տոմսակ չ'կորցըք: Գէորգ կաթուղիկոսի
ժամանակ դեռ Աղէքսանդրապօլ յաջորդ էի՝ որ ինձ
համար նաև այլք համբաւում էին թէ՝ տամնաւոր
հազար դրամ ունիմ: Այժմս՝ երբ քսան և չորս տա-
րիներ անցած են այն օրերից, և տամնաւոր տարի-
ներ Նոր-Նախիջևանում, Աստրախանում և Երևանում
նշանաւոր գումարներով 2400—3600 տարեկան ոռն-
կով՝ թող արտաքին սովորական արդիւնքներ, պաշ-
տօններ եմ վարած՝ ինչու չ'պէտքէ ունենամ կարո-
ղութիւն, և ինչու պէտքէ Զեր տարակուսելի թուի: Ես
սովոր չ'եմ այնպիսիներին նմանի՝ որոնք ունեցածնին
ծածկերով՝ աղքատ են ձևանում և եկեղեցական շուր-
ջառ վաճառում, ինչպէս Սեղբակեան Արիստակէս եպիս-

կոպոսը, որպէս զի բժշկի և դեղօրէից ծախքի դրամ ձեռք բերեն»:

Սոյն խօսքերից յետոյ Ներսէս սրբազնն եպիսկոպոսը սաստիկ վրդովուելով՝ ասաց գերապատութեանդ. «Սրբազնն, Դուք այս գործում ոչ թէ էջմիածնին հարազատութիւն էք անում՝ կաթուղիկոսական կորուստներ որոնելով, այլ Զեր կարգակիցներին և եղբայրակիցներին զրպարտում, մատնում և դաւաճանում էք օրէնքի առաջ իբրև գող, սեղանակապուտ և անբարոյական. մըթէ Դուք չ'էք խղճահարվում մեզ բարոյապէս մահացնելով. Մենք Զեղ ասացինք, և այն պարոն պըօկուրօրի ներկայութեան, որ մեր թուերն ևս կան, Դուք պէտքէ հաւատայիք, կամ քննէիք՝ թէ Երբ և բնչպէս ենք ձեռք բերած, և ապա բողոքէիք. Իբրև գանձապահի ինձ յայտնի է թէ՝ ովքեր տոմսակներ ունին, ըստ որում նոյն կարունների դրամը ես եմ հատուցանում ժամանակին և կտրոնները իբրև դրամ յանձնում եմ ծախսարարներին, իսկ նոքա տպարանին կամ ուրիշ՝ որոնք իրենց կողմից Տվիսիս են ուղարկում»: Այս անախորժ խօսակցութիւններին վերջ տալու համար խնդրեցի ես Զեղանից. «Վնաս չ'ունի, սխալանք համարենք այն, որ մեզ չ'կամեցաք լսել և թուղթ գրեցիք քննչին, այժմ էլ գրեցէք՝ թէ ստուգեցինք, որ այդ տոմսակները պատկանում են Սուքիս, Ներսէս, Սրբատակէս եպիսկոպոսներին և Ղենդ վարդապետին և իրնդ գրեցէք Զեր առաջին գրութիւնը թողնել առանց հետեանաց»: Երբ այս առաջարկն էլ չ'յարգուեց, այն ժամանակ Սինողի կողմից գրուեց քննչին հարկաւոր

եղածը, որի հեռաւոր հետազօտութիւններից 'իհարկէ կ'յայտնուին թէ՝ նոյն տոմսակների թուերն ով, ուր և որքան ժամանակից հետէ ներկայացրած և տոկոսադիմներն ստացած է, կամ նոյն տոմսակներն ուր և ինչ արժէքով են ձեռք բերուած»:

Երրորդ՝ Բերք անուն ծառայողը Երբ բանտարկուեց՝ իբր կաթուղիկոսական սեփականութիւնների իւր տանն ծածկող, քննչի գրութեան հիման վերայ Սինօդում օրագիր կայացաւ նորան արձակելու պաշտօնից և Բենիամին Տէր-Գրիգորեանցին՝ որ արտաքոյ շտատի ծառայող էր, ժամանակաւորապէս նորատեղ կարգել. Դուք պահանջեցիք՝ որ Բերքի համար գրուի իսպառ արձակում է ծառայութիւնից, իսկ փոխանակ արտաքոյ շտատի ծառայող Բենիամին Տէր-Գրիգորեանցի նշանակուի Մինաս Պանձուլազեանցը՝ Այս առաջարկութիւնն անարդար գտնելով՝ ես պահանջեցի իսպառ չ'արձակել Բերք Տէր-Գետրոսեանցին, թերեւ նա արդարանում է և իւր պաշտօնն ստանձնում. ինչու ՚իզուր կորչի նորա հինգ տարուայ չափ ծառայութիւնը, և Մինաս Պանձուլազեանցին չ'յանձնուի այդ պաշտօնը, ըստ որում առժամանակեայ է և ես նորա մասին խնդրած եմ Երևանի թեմական տեսուչ Մեսրովլ քահանայ Մելեանցին կարգել Գայիանեան օրիորդական ուսումնարանում աւագ ուսուցիչ, ուր և ժամանակին եկեղեցական կ'դառնայ: Այդ մասին արդէն մասնաւոր գրագրութիւններ լինում են: Զեղ գիւր չեկան այս ասացուածները. հետեեալ օրը Դուք առաջադրութիւն գրեցիք Սինօդին և պահանջեցիք Բերքին իսպառ արձակել և նշանակել Պանձուլազեանցին:

Երբ առաջադրութեան համաձայն օրագիր էր կազմուած և առաջարկուեց ստորագրութեան՝ Սինօղի ատենում ներկայ էր պարոն պրօկուրօրը, ևս չ'ը-կամեցայ ստորագրել, մի քանի առաջարկներ անելով. ա) իսպառ չ'արձակել Բերքին. բ) նորա տեղ կար-գուի արտաքոյ շտատի ծառայող Բենիամին Տէր-Գրի-գորեանցը. գ) առաջադրութիւնը փոխուի հաղորդա-գրութեան. Այս առաջարկներից առաջնի պատճառը այն էր, ինչ որ վերև գրուած է. երկրորդինն այս էր, նախ՝ որ օրէնքով, եթէ մի տեղ պաշտօն է բացվում՝ նորան համար նելու թէկնածու համարվում է առաւելա-պէս նա, որ արտաքոյ շտատի, պաշտօնի յուսով եր-կար ժամանակ ծառայած է, և միւսը՝ որ Սինօղի իրաւունքն է իւր ծառայողին ընտրել, իսկ Ատենա-պետի-Կաթուղիկոսի արտօնութիւնն է հաստատել նորան իւր պաշտօնում. յայտնի է որ ընտրելն և հաստատելն միայն Տեղակալին չ'է վերպահուած: Իսկ երրորդի պատճառն էր՝ որ օրինակ բերելով Մակար Արք-Եպիսկոպոս Տեղակալի վարմունքը՝ ցան-կանում էի Սինօղը յարգուած լինի: Վաղուց արդէն Սինօղից՝ Գէորգ Չորրորդ Կաթուղիկոսի հաճութեամբ, հրամաններ արձակուած են թեմակալ առաջնորդ-ներին և յաջորդներին՝ որ վիճակային և գաւառային հոգեոր ատեններին նոքա առաջադրութիւն չ'գրեն, այլ հաղորդագրութիւն: Արդ, եթէ Արք-Եպիսկոպոս առաջնորդը և ծայրագոյն վարդապետ փոխանորդը շատ անգամ եպիսկոպոս, քահանայից ատենակալու-թեամբ գործավարող ժողովներին չ'են դառնում հրա-մայական եղանակով՝ թող և Զեր սրբազնութիւնն

իւր եպիսկոպոսաց ժողովը յարգէր, ցոյց տալով՝ որ իշխանական հոգւով չ'ենք գեկավարվում, այլ շինու-թեան, խաղաղութեան և սիրոյ՝ յօգուտ պայծառու-թեան մեր սուրբ եկեղեցւոյ:

Այս նկատմունքների վերայ, թէև ըստ էութեան աննշան իննդիրներ, այնքան տաք և պատուախնդիր վի-ճաբանութիւն եղաւ՝ մինչ Դուք բացարձակ ասացիք. «Ես՝ իւրեւ կաթուղիկոսական Տեղապահ, իմ արտօ-նութիւնները պէտքէ գործադրեմ և ճանաչելով Բե-նիամինին անընդունակ՝ կարգում եմ Մինասին, ուստի այդ օրագիրը կ'մնայ անփոփոխ»: Դորան ես աւելա-ցըրի. «Մենք շատ ընդունակ ենք մեր գրաւած դա-տողական աթոռին, այն ինչ աննուններս ստորագրել չ'ենք իմանում, որ պահանջում ենք և խօսք մէջ բե-րում այլոց ընդունակութեան մասին»: Յետին աստի-ճան վիրաւորեցին Տեղակալութեանդ արժանիքն այս նկատմունքը, ուստի և ասացիք. «Ես այն գերծալին և թագաւորի պատկերին եմ ինայում, ապա թէ ոչ ես գիտեմ թէ Զեզ հետ ինչպէս կ'վարուեմ, եթէ այդ խօսքերը դուրսն ասած լինէիք»: «Ո՛չ թէ գերծալին և կայսեր պատկերին, որոնք ՚ի հարկէ յարգելի են և մեծարելի, այլ ներկայ սուրբ խաչին և աւետարանին ինայելի է՝ որոնք պաշտելիք են մեզ և օրինադրում են հեղութիւն և խաղաղութիւն: Ի՞նչ կ'նշանակէ երբ Սինօղը կամենում է արձակել թարգմանին և այլ ըն-դունակը բերել, ըստ որում նա հայերէն չ'գիտէ, Դուք չ'էք թողնում, իսկ այժմս՝ երբ մի արտաքոյ կարգի աստիճանաւորի վաղանցեալ ծառայութիւնը գնահատ-վում է, պատճառաբանում էք անընդունակութիւն և

չէք թողնում նորան պաշտօն յատկացնել։ Ուրեմն եզական կամքով պէտքէ կառավարուի Սինօդը, և ոչ օրէսքով։¹⁾

Չորրորդ՝ կաթուղիկոսի մահուանից փոքր ինչ յետոյ Դուք բարեհաճել էիք կանչել տալ Երևանից պարոն Հէջուպեանց ճարտարապետին Սինօդի նոր շինութեան համար մակարդակ հանելու և անմիջապէս մշակներ էիք կարգել տուել հիմքերը փորելու։ Սինօդի անդամները նկատի ունենալով՝ որ սուրբ Աթոռի ամէն հարկաւոր շինութիւններին վերանորոգութեան կարևորութիւն կայ, խնդրեցին՝ որ նախ ամէն անհրաժեշտ շինութեանց նախազիծ հանուի, իւրաքանչիւրին յատկանայ իւր վայելուչ տեղը, և ապա ըս-

¹⁾ Այսպիսի տարապայման կամայականութեան արդինք եղաւ այն, որ Սինօդի ատենադպիրը ներքին գործերի նախարարութեան այլազաւան ազգերի գեղարտամենուի գիրեկարի տեսչութեան ենթարկուեց, իսկ մնացած ծառայողները կառավարչապետի, որպէս զի անձեռնմխելի լինին և Հայոց կաթուղիկոսին ենթադրուած հոգեւոր, բարձրագոյն ատենի գործավարներն կաթուղիկոսից բոլորովին անկախ լինին։ Նորա տան ծառայողները կարգուին և արձակուին օտարից, մանաւանդ որ ոսճիկներն ևս ստանում են յարգունուստ և ամէն ժամանակ իւրեանց անգործութեանն իրեկ քաջալերութիւն պահանջում են տարեկանի յաւելուած։ Այսուհետեւ նորընտիր Հայրապետին կ'մնայ Սինօդի բոլոր աստիճանաւոր ծառայողներին փոխանակել էջմիածնի վարդապետ և սարկաւագ վանականներով։ որոնց կարգելն ու արձակելը իրեն միայն և եթ վերապահուած կ'լինին և արտաքին ազգեցութիւններից աղատուած, վասն զի Սինօդի աստիճանաւորի միջոցաւ ազգի մէջ աղնուական սերունդ յառաջ բերելու կարիք վաղուց արդէն չէ զգացվում։

կըսուի Սինօդի կառուցումն։ Ոմանք առաւել յառաջ գնալով ասում էին, որ այլպիսի հիմնական և մնաց յուն գործի ձեռնարկութիւնն առաւել կաթուղիկոսին պատշաճաւոր է քան մի ժամանակաւոր կառավարչի, մահաւանդ որ հանգուցեալ Հայրապետը տաճարի վերաշինութեան մակարդակ հանել տուած լինելով ազգայնոց մէջ նոյն անունով հանդանակութիւն է հրատարակել և 43000 բուրլի գումար ժողովել. այժմս մենք վանքի վերանորոգութիւնն թողնենք և երկրորդական շէնքերի ձեռնարկենք՝ մեզ ոչ ոք հաւանութիւն չի տալ։ Այսպիսի առաջարկներին և առարկութիւններին սրբազնութիւնդ պատասխան տուաւ. «Սինօդի շինութեան համար դրամ պատրաստ ունիմ և կ'ցանկամ ձեռնարկել կառուցման»։ Դրամն, ինչպէս ասացիք, էր 13000 բուրլի խոստումն պարոն Աղէքսանդր Մկրտչեան Թայլիրեանցից, եթէ թոյլ կ'տրուի նորան իւր կենդանի կնոջ տկարութեան պատճառով անջատուել և ուրիշ հետ ամուսնանալ։ Սորա մասին արդարե Վաղարշապետի գաւառապետի միջոցաւ խնդրագիր է տրուել Սինօդին, որպիսի առաջարկութեանց ես միշտ պատասխանած էի. «Հանգուցեալ կաթուղիկոսի սեղանի վերայ գտնուեց թուղթ, որով մի ամուսնութեան լուծելու համար առաջարկվում էր նորան 25000—30000 բուրլի, բայց նա յօժարութիւն չէր ցոյց տուել, և մեզ հասարակաց գատաստանն ինչ կասի՝ երբ Սինօդ շինենք և նորա ծախքի գումարը ստանանք այն անձնաւորութիւնից՝ որ եկեղեցւոյ օրէնքով յանցաւոր է, իսկ Սինօդի վճուկ արդար՝ իւր կենդանի կնոջ վերայ այլ կին ածելովը։

Կարող ենք այդ շէնքի վերայ այսպիսի արձանագրութիւն դնել. «Կառուցաւ բարձրագոյն հոգևոր ատեանս արդեամբ յանցաւորին առաջի հրամանաց սրբոյ աւետարանին Յիսուսի և Եկեղեցւոյ նորա, զի սովաւ թողան յանցանք մեղաւորին»: Սինօդը Զեր գերապատութեան ինքնագլուխ մեծամեծ գործերի ձեռնարկութիւնը կամենալով չափաւորել՝ տաճարի վերանորոգութեան մակարդակը յայտարարութեամբ Զեզ ուղարկեց, որպէս զի պահպանէք և ազգընտիր Քահանայալետին յանձնէք ու հրաւիրէք 'ի գործադրութիւն: Այս խորհրդով և Արարատի խմբագրութեանն յանձնուեց մի առաջնորդող յօդուածով ճարտարապետ պարոն Կարապետ Եաղուբեանցի գրաւոր կարծիքն՝ յանուն Կաթուղիկոսի, հրատարակել ազգայնոց տրամադրութիւնն նախապատրաստելու և իմանալութէ՝ արդեօք նոր 'ի նորոյ հոյակապ տաճար շինուի, թէ հինն նորոգուի: Նոյնպէս պէտքէ վարուէր և այլ կարեոր շինութիւնների յատակագծերի մասին: Բայց Զեր գերապատուութիւնն չ'թողիք տպագրել Արարատում Եաղուբեանցի դատողութիւնն և Սիմէօնեանցի առ ազգայինս հրաւիրական առաջնորդող յօդուածը, իսկ միաբանութեան համար լինելիք շինութիւնք ըսկըսեցիք՝ ինչպէս լրագրերից իմացուեց, տաճարի վերանորոգութեան անունով հանգուցեալ Հայրապետի հաւաքած գումարով:

Հստ իս' Դուք բնաւին իրաւունք չ'ունէիք այն գումարին ձեռնամուխ լինելու, ըստ որում ազգային նուիրատուաց և հանգանակող Հայրապետի մէջ մէկ բարոյական պայման, մէկ դաշինք և ուխտ լինելու

հաւասար, մէկ անխախտ կտակ համարուելու հաւասարագոր խոստումն և առաջադրութիւն էր՝ լուսաւորչաշէն սրբարանի վերանորոգութիւնն կատարել նորանով. ուստի և պահեստի գումարների կարգումն էր պահպանվում մինչև նախապատրաստական նիւթեղինաց հաւաքելը, որպէս զի սրբութեամբ իւր նպատակին ծառայած լինի: Դոյն իսկ պատճառով քանիցս Վեհափառի հրամանաւ Սինօդը պահանջեց հեռագրով Տփխիսի առաջնորդ Մամբրէ սրբազնն եպիսկոպոսից վերաշինութեան յատակագիծն ուղարկել շուտով: Ասացէք ինդրեմ, այդպիսի ինքնակամ և առանց ազգայնոց հաւանութեան ծախսարարութիւնը մեզ մի տեսակ գայթակղելի ուխտազանց չէ դարձնում բանագէտների յառաջ: Կարծում եմ, Մակար Կաթուղիկոսի էջմիածնի սուրբ տաճարի վերանորոգութեան անունով՝ ըստ մեծի մասին անձամբ, հանգանակած և մինչև արտասահմանի ազգայիններէն ստացուած 43000 գումարի այլ անհրաժեշտ պիտոյից վերայ գործադրութիւնն՝ միայն նորա ազգընտիր յաջորդ Հայրապետն կարող էր առնել, և այն ոչ առանց նախրնթաց հաւանութեան ժողովրդեան: Զունէր իրաւունք ձեռնամուխ լինիլ նոյն գումարին և Սինօդն, զի կաթուղիկոսական նախաձեռնութեամբ գանձուած էր և ինքն առանձին և որոշակի գանձուց իւրեանց իսկական նպատակին ծառայելու անխոտոր կանոնին հետեւելու օրինական հարկադրութիւնն ունի: Հինգերորդ՝ ինչպէս շատերին յայտնի էր, Կաթուղիկոսն իւր կենդանութեան ժամանակ պատրաստել տուած էր առապանաքար՝ զոր կամեցան ան-

դամք եօթնօրեայ կարդ կատարելէն յետոյ ձգել վերան, բայց Դուք չ'թողիք պատճառելով՝ որ օրէնքով տարելիցը կատարելուց յետոյ է կարդ քարը ձգելու։ Այսպիսի մի կանոնի ծանօթ չ'լինելով՝ այդ առթիւ հարարակաց բերանում պատում էր խօսքեր՝ որպէս թէ Հայրապեան իւր մահուամք չ'է մեռած, այլ թունաւորուած է, և թէ մարմինը պէտքէ հանուի և քըննութեան ենթարկուի. լսուեց և այն, իբր թէ կայսրն արգելել է գերեզմանը բանալ։ Ես Սինօդում օրագիր կազմել տուի՝ որ հանգուցեալի քարը քաշուի գերեզմանի վերայ, իսկ եթէ կան հիմնաւոր պատճառներ՝ թող օրինական ճանապարհով յայտնուի այդ արգելքը։ Սարգիս սրբազն եպիսկոպոսն ուր ուրեմն կարողացաւ համոզել Զեղ տապանաքարն իւր տեղը դնելու համար, բայց արձանագրութիւնը չ'թողեցիք դնել՝ ապագայ Կաթողիկոսին թողնելով իրաւունքն, որով տուիք ապացոյց Զեր հակակրութեանն առ հանգուցելոյ յիշատակը։ Հանգուցելոյ՝ որ 'ի կենդանութեան մշտապէս զԶեղ անդք քան զարժանիս պատուած էր, բարերարած 'ի մանկութենէ և սիրած։ Ո՛չինչ քաղցրութիւն և խնամք, նաև առանձին շնորհարաշխութիւն պարգևաց՝ չէր խնայած Զեզանից։ Եւ այդ հայրական գորովանք առաւել թանկագին են, ըստ որում նա քաջապէս գիտէր՝ որ Զեր կացարանն է եղակի բամբասարանն իւր Հայրապետանոցի հանդիման։ Զեր բերանն է յատուկ աղբիւր արտնջանաց ամէն կարդ ու կանոնի դէմ և Զեր խորհուրդներն են քաջալերութիւն թէ՝ միաբանութեան թէ գիւղականաց և թէ՝ ճեմարանականաց համար

դեցական իշխանութեան անօրէնութեանց հակառակ զինուիլ. Բ՞ւր թողունք և պետական պաշտօնէութեանց միջոցաւ կենդրոնական իշխանութեան լսելիք Զեր հասուցած ամենակերպ ամբաստանութիւնք……

Վեցերորդ՝ Զեր սրբազնութիւն մեծ հակումն և յօժարութիւնն ունէր ինչպէս դպրոցական կառավարութիւնն ամէն վիճակներում՝ իբրև եզական պատասխանատու անձնաւորութիւնն, ձեռք առնել, նոյնպէս ճեմարանինը էջմիածնում։ Անդամները զգալով՝ որ Դուք այս և այն դպրոցներում և ճեմարանում ուսուցիչներ կարգել արձակելով՝ պէտքէ խանգարումներ յառաջ բերէք և ընդհարումներ տեղի ունենան հոդաբարձութեանց, տեսուչների և ուսուցիչների մէջ, և որ գլխաւորն է՝ մտագիր էք սրբազնագոյն Քահանայապետի ճեմարանից արձակած լսարանականներին ընդունել՝ որոնցից քանիսի համար տեսուչ սրբազն Սարգիս եպիսկոպոսն յայտարարած էր Սինօդին՝ որ գանուռում են ոստիկանական հսկողութեան տակ, և գորանցով թերևս վտանգի ենթարկուին դպրոցական հոգեսոր իշխանութեան ձեռքով կառավարուելու նշխարեալ իրաւունքները, քանիցս խորհուրդ տուին Սինօդի վերահսկողութեան թողնել համօրէն ուսումնարաններն ու ճեմարանը, իսկ նոցանմիջական կառավարութիւնն յանձնել տեղական հոգաբարձութեանց և վարչութեանց մինչև կաթուղիկոսի ընտրութիւնն և հաստատութիւնը։ Դարձեալ՝ Զեղ նուաստութիւն համարելով ուսումնական հաստատութիւններ զեկավարելու գործում չէզոքութիւնն՝

վիրաւորեցիք անդամների զգացմունք և եղակի կամքով գործել բարեհաճեցիք, որից յառաջ եկան ներսիսեան դպրանոցի ուսուցիչներ վարձելու և արձակելու ծանուցուած դէպքերը:

Եօթներորդ՝ բաւական չ'համարելով հոգելոյս Հայրապետի տիրացու Գալուստ Տէր-Մկրտչեանին ցոյց տուած խնամքները՝ նորա ողջապահութեան համար, Տփխիսու հիւանդանոցում և Աբասթումանում ծախսած հազարից աւել գումարը, Վիեննայից բերել տուած յատուկ գեղերն ու մեքենան, որոնք հինգ հարիւր արծաթից աւելի արժած էին, նորա սարկաւագներին հաւասար ստացած տարեկան երկու հարիւր բուքլի ոռճիկն, առաւել քան ամէն մի պատուաւոր միաբանի սնունդն և երբեմնին դրամական պարգևներն, երբ կամեցաք նորան էջմիածնի հաշուով հինգ հարիւր արծաթ տալով Պետիգօրսկի ուղարկել առողջանալու՝ անդամները, տեսնելով նորա անբժշկելի լինելն, աւելորդ ծախսարարութիւն համարեցին, Դուք դարձեալ վշտացաք և կարծելով թէ՝ մէնք չ'ենք կամենում գումար զոհել մայր Աթոռից իւր միաբանի առողջութեան համար, առաջարկեցիք Տփխիսի և Աստրախանի վիճակների ծախսով ուղարկել: Սակայն վերսատին հրաժարուեցինք համաձայնելուց, առարկելով որ՝ 'իզուր ծախսարարութիւններ են և վիճակների դրամներին խնայելու է ինչպէս և էջմիածնի: Իսկ որպէս զի բոլորովին անկարեկից չ'համարէիք մեզ առ ախտացեալն՝ յօժարութիւն յաշտնեցինք թոյլատրել նորան իւր սարկաւագական ոռճկով փոխադրուիլ իւր հօր տունն, Ախալցխայ գա-

ւառի Ծուրզութ գիւղը, մինչև ցմահ: Սոյն որոշման Դուք հաւանութիւն չ'տուիք՝ իբրև նուազ օգնականութիւն: Այսպիսով՝ թերեւս նա մերձաւոր Աբասթումանի ջերմուկներով առաւել օգտուէր՝ քան Փարիզ քաղաքում, ուր հազարաւոր բուքիներ կ'նսատի Աթոռին նորա բժշկութիւնն:

Բ.

Ահաւասիկ սորանք և այլ ուրիշ մեծ և փոքր առիթներ եղել էին Սինօղի անդամների և Զեր սըրբազնութեան միմեանց հետ ընդհարման պատճառ՝ երբ վերայ հասաւ պարոն Պետրոս Սիմէօնեանցի Աբարատի խմբագրութեան աշխատակից պահպանելու հարցը, և նորա անցագրով Տփխիս գնալու խնդրագիրը: Ուրեմն տարածայնութեանց խմորը նա չ'է եղած, այլ՝ արդարապէս ասած, երկուստեք կողմանէ անխոհեմութիւնը: Զեր կողմից անդրապայման իշխանասիրութիւն և ապագայի անսարժան թէկնածութեան պատրաստութիւն, ինչպէս իւր տեղում կ'յիշտակուի, իսկ մեր կողմից յամառ դիմագրութիւն և բացայաց յայտնագործութիւն գաղտնի դիտութների և նախապատրաստութիւնների: Արդ, երբ փոքր ՚ի շատէ գրժութեանց պատճառները յայտնուեցան, այժմս դառնամ պատասխանել Աբարատի Սինօղի անդամների՝ առաւելապէս ինձ վերայ, Զեր հասուն, նախանկատ խորհրդով կազմած մեղադրական արձանագրութեան, և որքան հնարաւոր է խիստ համառօտիւ, որպէս զի Դուք զգաք, հասկանաք դիմագրողների ուղղութիւնը և գալթակուած ազգայինք համոզուին իրողութեանց

հարազատ իսկութեանը՝ զբկուած արդարութեան
բաւականութեանը համար:

Սինօդի սրբազն անդամներն և ես՝ պարոն
Պետրոս Սիմէօնեանցին Արարատի խմբազրի գործակ-
ցի պաշտօնում պահապահնելու համար կազմուած օրա-
գըռով, պատուել ենք կաթուղիկոսի կոնդակով անօրէ-
նութիւնը, հաւասարի լինելով՝ որ Ճանայեաց Քահա-
նայապետի վստահութեան արժանի եղած անձնաւոր-
ութիւնը անիշխանութեան ժամանակ կրօնական-պաշ-
տօնական հրատարակութիւնը կարող է տանել այն-
պէս, որպէս զի վերջին ընթացքն առաջնոյն ընդդէմ
չ'լինի և կողմանակի հողմահարութիւններով չ'առաջ-
նորդուի մայր Աթոռի միաբանական ուխտի հրատա-
րակութիւնը:¹⁾ Սինօդն առանց օրագրի տուել է նո-
րան անցագիր, ինչպէս միշտ տուած է եղել ձեմա-
րանի ուսուցիչներին և բժշկին, որոնք Սինօդի ծա-
ռայողների շտատից դուրս վարձաւորներ են: Եթէ
անդամներիս վարմունքը Տեղակալիդ դիտաւորու-
թեան հակառակ է եղել՝ արձակուրդ տալու ինդրում,
դորանով մենք բնաւին Զեր բարձր իրաւասութեան

¹⁾ Մենք պնդագոյնս համոզուած ենք՝ որ եթէ պարոն
Պետրոս Սիմէօնեանցն իւր պաշտօնում մասցած լինէր՝ Արա-
րատը և Կաթուղիկոսի յիշատակին վարկաբարազի քարաձիդ
կ'լինէր և ոչ անխորհրդաբար Սինօդի ու առաջնորդների
պատուին՝ ձեռնադրութեանց վերաբերութեամբ կամ ծախ-
սաբարութիւնների համար. ըստ որում քաջագէտ կ'լինէր
այդ վարմունքի տէրերի ներքին ձգտումներին: Այլ թշնամի
այլ նալատակով մեր հասարակաց ուշադրութիւնն պատշաճ
եղած ինդրից խոտորեց, մեր տնականացս վիճաբանու-
թեամբ հրձուելու, և ինքն իւր խաղերն յառաջ տարաւ:

չ'ենք վնասած, այլ առաջնորդուած ենք եղել լոկ
մարդասիրական կարեկցութիւնից, որպիսի յատկու-
թիւն հոգեորական անձնաւորութիւնների վերայ
պարտաւորութեամբ ուխտի առաւել պէտքէ փայլին:

Նոյն Արարատը պնդում է՝ որ «Գերազատիւ
Տեղապահի անձնական պատասխանատուութեամբ իրա-
ւունքն է հսկել ամսագրի խմբագրութեան և հրատա-
րակութեան վերայ, այնպէս՝ եթէ նա յանձն չ'առնէր,
պէտքէ ենթարկուէր գրաքննչի»: Ուրեմն, իսկապէս
ասած, գրաքննչի պաշտօնն է՝ որ յօդուածը կամե-
նայ թոյլատրէ տպագրել, որը կամենայ կրծատէ, և
որը կամենայ արգելէ, տպագրական վերջին ուղա-
գրուած թերթի վերայ ստորագրելով «Թոյլատրեմք
հրատարակել»: Դորանից այն կողմն չ'է անցնում
գրաքննութեան արտօնութիւնը, և այդ իրաւունք
լիովին վայելած է Զեր սրբագնութիւն Կաթուղիկոսի
մահուան օրից: Իսկ թէ Արարատի աշխատակիցների,
խմբագրի և նորա գործակցի վերայ պէտքէ որոշ
իրաւասութիւն ունենայիք, այն ժամանակ պէտքէ
ենթագրել՝ որ տպարանական ամէն ծառայողները
ակսած մբազարկից մինչև տպագրիչը, ուղղակի կա-
խում՝ պէտքէ ունենային Զեղանից՝ իրոհ անձնական
պատասխանատու հսկողից: Այդպիսի ծաղրական բան
կարող չ'է լինիլ. այլ է հրատարակութեան բովանդա-
կութեան վերայ հսկելն, այլ է նիւթ տուող աշխա-
տակիցների վերայ դիտելը: Այս վերջինս կ'պատկա-
նէր ուրիշ իշխանութեան՝ եթէ հարկ զգացուէր:

Ոչ մի մակամտածական պատճառաբերութիւն
չ'էր կարող պարոն Պետրոս Սիմէօնեանցի ինդրով

Սինօդին դիմելը և վերջինիս նորան ապահովելը իւր պաշտօնի վերաբերութեամբ՝ կարգից դուրս իրողութիւն համարել, ըստ որում նա՝ նայելով փոփոխուած հանգամանքներին, կամեցաւ ստուգել թէ՝ ինքն որպէս վարձաւոր պաշտօնեայ և գործակից խմբագրութեան համարումէ, թէ՝ կաթուղիկոսի մահուամբ դադարեց իւր աշխատակցութիւնն ու գործունեութիւնը Արարատին նիւթեր տալու և եղածը դասաւորելու մէջ։ Սինօդն ևս պարտաւոր էր ասել բացորոշ, որքան Հովուապետի անունն յիշատակուում է եկեղեցում՝ հրամանն ևս պէտքէ յարգուի վարչութեան կողմից։ Սորանից այս կողմն անցնելը, խմբերի կադմակերպութիւն տեսնելը, Տեղապահական իշխանութեան դէմ ապստամբական ձգտումներ նշմարելն ևայն, ևայն, տղայական հասկացողութեան ե՞նչ կատարելութեան վիճակի պատկանած իրողութիւնք են, հիւանդու երևակայութեան, քան ողջամիտ ուղեղի արդիւնք են։ Մի ժամանակ սրբազն Տեղակալիդ խըստապահանջ նախանձաւորութեան՝ Զեր իրաւասութիւնն հզօր գօրութեամբ գործադրելու համար, որպէս լիակատար իրաւատէր, Մշակ լրազրի խմբագիրը բարեհածեց Զեզ ընծայել իւր օրէնսդիրութեան զինարանից «ժամանակաւոր կաթուղիկոս» զայթակղեցնող և շլացնող տիտղոսը, իսկ նորա համակարձիք աշխատակիցն իւր ախտագիտութեան ախթարքից «Տեղակալավախութիւն» կոչուած հիւանդութիւն տեսաւ էջմիածնի վանքում։ Ողորմելիք չ'զիտէին՝ որ «ժամանակաւոր կաթուղիկոս» չ'է եղած, չ'կայ և չ'է կարող լինել։ «Տեղակալավախութիւն» չ'կայ, այլ կայ

իրօք «զբակալավախութիւն», եկեղեցում զբակալի առաջ չ'կարողանալ կանգնել Զեր տիտղոսի պատշաճ գըրքեր և աղօթքներ կարգալու առանց անհեթեթ սխալների։ Զմոռանամ այստեղ համառօտիւ յիշատակել մի դէպք, որի վերայով Արարատի ճարտար աշխատակից միաբանը սահելով է անցնում։ 1891 թուականի Մայիս ամսականի մէջ կար տպագրուած վեհափառի վերջին ութօրեայ կենցաղի համառօտ նկարագիրն և պարոն բժիշկ Զարգարեանցի վկայագիրը՝ ինչպիսի մահով վախճանուելու մասին, որպէս զի հեռաւոր և մերձաւոր ազգայինք ծանօթ լինին նորա յանկարծահաս մահուան։ Նկարագրի մէջ՝ ի թիւս այլոց յիշատակուած էր թէ՝ նորին Սրբութիւնն գրեց պատասխան և նախարարի այս ինչ համարով գրութեան։ Պարոն պրօկուրօրի բողոքով Տէր կառավարչապետն ուշադրութիւն դարձրած էր նոյն նկարագրի վերայ և Զեզ ակնարկել էր՝ որ նորա բովանդակութիւնից այնպէս է երևում թէ՝ վեհափառի մահը յառաջացած է նախարարի գրութեան ազգեցութեամբ, և ապա յանձնուած էր Զեզ հսկել, որպէս զի այնուհետեւ նոյնպիսի անտեղիութիւններ չ'լինին։ Դուք՝ որ սկզբները գեռ բոլորովիմք չ'էիք յանձնուած Զեր մենտորների առաջնորդութեան, պատրաստել տուիք գոյն թղթին մի պատասխան և թարգմանել տալով նոյն նկարագիր ասուած յօդուածը՝ կամեցաք ուղարկել պարոն կառավարչապետին և խնդրել՝ փոխել իւր հայեացքը Արարատի մասին, ըստ որում նորանում այդպիսի կարծեաց ստուեր անգամ չ'կայ, միևնոյն ժամանակ յայտնել՝ որ Դուք յանձն էք առնում հսկո-

դութիւնը։ Սակայն յետոյ արտաքին ազգեցութեան ենթարկուելով, չպրեցիք Զեր մտադրուած թուղթն, որով իշխանութեան կարծեաց տակ թողիք մայր Աթոռոյ միաբանութեան պաշտօնական հրատարակութիւնը և այդ մասին եղած գրագրութիւնը յանձնեցիք Սինօդին։ Վերջինո՞ւ յայտնի տեսնելով այդպիսի վարման մէջ որոգայթագրութիւն, փութաց գրել պարոն Կառավարչապետին ինչ որ հարկն էր և ուղարկել՝ ի պաշտօնէ թարգմանուած յօդուածը՝ համոզելու անարդար ամբաստանութեան անձտութեան մասին։

Բացի այդ, Հայրապետի մահուանից յետոյ յայտնուեցան յանուն ներքին գործոց Տէր Նախարարի գրուած երկու գրութիւնը՝ որոց մէկն վեհարանում, և ստորագրուած, միւսն՝ նորա քարտուղարի մօտ, անստորագիր։ Սինօդի անդամները Զեր միաձայնութեամբ՝ հաւատարմութեան ճշմարիտ զգացմունքից և ապագայ անախորժ ասուլիսի վտանգներից երկուղ կրելով¹⁾ իսկութեամբ մատուցին նորին բարձր

1) Յայսօր առանց զգուանաց և զայրութի չենք կարողանում մտարերել այն անամօթ զրախօսութիւնը, որոնք տարածուում էին էջմիածնի վանքումն յայտնի քանի օջախներից թէ Տէր Նախարարը Կաթողիկոսին վշտացնելու համար արհամարհական վերադիրներով է դառնում դէպի նախը զրութեանց մէջ «պարոն կաթուղիկոս» անուանելով նորան։ Այդպիսի ժամանակ, եթէ հանգուցեալ Հայրապետի անստորագիր, բայց նախարարին կարգացած և հաւանութիւն տուած, գրութիւնն յետաձգուէր Սինօդից և չուղարկուէր, ինչ տեսակ առասպեկտական զրոյցներ արգեօք չէին հրատարակուիլ, և ինչ տեսակ մեղագրութիւնը չէին թափուիլ անպարտների գլխին։

գերազանցութեան այն թղթերը։ Պարոն պրօկուրօրն և վերջին անստորագիր գրութեան մասին իւր կարծիք գրած էր Տէր Նախարարին՝ իբրու թէ այն հաղորդագրութիւն նոր է և խարդաւանուած նորին Սրբութեան անունով, որովհետեւ թարգմանութիւնն հայբնագրին համեմատ չ'է։ Երբ Տէր Նախարարը՝ Զեր անուամբ գրութեան հետ, դարձրած էր անստորագիր թուղթն և անդամներին «զարմանք» յայտնած։ Հայրապետին սեփական չ'եղած գրութիւնն իրեն ուղարկելու մասին, դարձեալ Սինօդն իւր արգարութեան վերայ պնդեց՝ քարտուղար վարդապետի յայտարարութիւնն յիշատակելով։ Սորանից յառաջացաւ գլխաւորագիս պարոն պրօկուրօրի նախանձաւորութիւնը՝ մեծամասնութեամբ ձայնից կայացած օրագրեր չ'ըստորագրել իբրու անկանոն՝ յարգանք տարով Զեր կամակատար հաճութեան և հնագանդութեան։ Իսկ թէ այդպիսի անձնական կարծեաց գերակշուութիւնից ապագայում ինչպիսի փորձանք և վտանգներ են յառաջանալու Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ սահմանագրական հոգւով կազմուած ատենական վարչութեան մէջ՝ բնաւին տարակոյսներ չ'կան։ Մեզ շատ լաւ յայտնի են, և Սինօդի գործերում բաւական թուով գտնուում են օրագրական արձանագրութիւնը՝ որոնց կաթուղիկոսն անդամ համաձայն չ'է, բայց մեծամասնութեամբ ձայնի կատարուած է, և ժամանակի պարոն պրօկուրօրն անկանոն չ'է համարած։

Իզնաւ է Արարատի ջանքը Սինօդի անդամներին օրէնսդրդգիմ յանցանք վերագրելն՝ պարոն Պետրոս Սիմեոնեանցին խմբագրութեան գործակից պահպա-

նելու և Տփխիս գնալու թոյլտուութիւն ընձեռելու մասին, և որպէս թէ մեր աքսորանք ըստ մասին յառաջացած լինի դորանից: Գլխաւորապէս մեր գժբաղդութիւնն յառաջ՝ եկաւ վերոյիշեալ երկու թղթակցութեանց մասին՝ կառավարչապետի և Նախարարի անուամբ, թէ նոր անդամներ կարգելու դիմադրութիւնը, վարչական կարգով յանցաւոր ճանաչուած հոգեորականների համար վանքեր չ'յատկացնելը, Ղարսի Մինաս քահանայի աքսորման խնդրին միջամտելը ևս օգնեցին այդ տարաբաղդութեան յառաջանալուն: Պակաս դեր չ'կատարեցին և բանաւոր ամբաստանութիւններն իմ և Ներսէս սրբազանի վերաբերութեամբ Զեր սրբազնութեան, պրօկուրօրի և գաւառապետի կողմից պարոն Ամբարդանեանի և այլ պաշտօնական անձնաւորութեանց առաջ՝ թէ հանգուցեալ Հայրապետն մեր խորհրդովն էր ղեկավարուում, ինչպէս և քահանայից ոռւս լեզուաւ երդումն տալը չ'թողնել, մինչդեռ Նորին Օծութիւնն 'ի մանկութենէ խորհրդականի կարօտութիւն չհնէր: Իսկ պարոն Պետրոս Սիմէօնեանցի մեղքն այն էր՝ որ չգոյշ էր և զգայուն իւր շուրջն գործուող բոլոր նպատակաւոր խաղերի խորհուրդն հասկանալու մէջ, ուրեմն և Տփխիս գնալով կ'գտնէր նա հրապարակ յունկանէ լսածն քարոզելու և դարանադործ նախագիծներ խափանելու, որոնք տարակոյս չ'կայ, որ արգելք կ'լինէին Զեր սրտագին բաղձանքներին և ոմանց հրապուրանքներից խրախուսուած ձգտումներին:

¶.

Տարւոյս Յունվարի Արարատում տպագրուած սրբազան Սինօդի օրագրութիւնը Ներսիսեան հոգեոր դպրանոցի երկու ուսուցիչների փոփոխութեան մասին, և դոյն պաշտօնական թղթին՝ որպէս բացատրութիւն կցուած, նախընթաց ազգային բաժնի վերջընթեր ուշագրաւ հատուածը կարգացողներն արդէն ունին իրենց դատաստանը խնդրի վերաբերութեամբ: Ես կարևորութիւն չ'եմ տեսնում այստեղ երկայն բարակ կանգ առնել Տեղակալական խնդրի վերայ՝ որ գրեթէ Արարատի վերջին խմբագրութեան յատկորոշ հիւանդութիւն—իդէֆիկուն է դարձած, և դպրոցների վարչական ձեւի մասին: Միայն չ'եմ զանց առնում երկու խօսք առ միշտ ասելով՝ իմ վարկումնս դորանց մասին ամփոփել, ինչպէս շատ անգամ խօսքով և գրով յայտընած եմ: Ուշ մի պետական իշխանութեան մէջ չ'կայ այսօր քուէարկութեամբ ընտրուած որևէ է հաստատութեան գլխոյն փոխարէն դնել սոսկ մարդ՝ առաջնի պակասած ժամանակ: Ուրեմն ուղեղի աւելորդ ձնշումն է ասելը. «Օրէնքը ճանաչում է Սինօդի նախանդամին կաթուղիկոսական Տեղապահ»: Նոյն իսկ պետական օրէնքով կառավարուում են և քաղաքային վարչութիւնները, բայց քաղաքագլխին փոխարինող՝ նորա բացակայութեան ժամանակ, ոչ մի տեղից վերկացող անձնաւորութիւն չ'է կարող լինիլ, եթէ ոչ ընտրութեան միջոցին նորանից երկրորդական կարգում շատ քուէ ստացող անձն: Եթէ Հայոց Հայրապետութեան համար Պետական օրէնքով պահանջուած

Երկու առաջարկելիների մինը կաթուղիկոս հաստատուելով՝ երկրորդին նոյն օրէնքն ունենար աչքի առաջ իբրև Տեղապահ, կամ բացորոշ սահմանած լինէր՝ անշուշտ երկրորդ անձին Սինօղական բաղկացութեան մէջ մտնել, այն ժամանակ ոչինչ տարակոյսների տեղիք չ'ին մնալ: Կամ գոնէ Տեղապահն ընտրուէր Սինօղի անդամների, միաբանութեան եօթն ձայնատուների և Ռուսաստանի վիճակաց առաջնորդների հաւաքական —ընտրական քուէով:

Մի սովորական երկոյթ դարձած պատմական ստոյգ իրողութիւն է՝ որ կոստանդնուպօլսոյ Հայոց Պատրիարքը նոյնն է Թուրքիոյ մերայնոց համար՝ ինչ որ սուրբ Էջմիածնի կաթուղիկոսը Ռուսահայոցս համար, միայն օծութիւնն կ'պակասի. կարծես թէ վաղեմի յունական և պարսկական բաժինների դրութիւնն ունինք և որոշ Հայրապետներ: Ի՞նչն է արդեօք յառաջ բերել այն անդիմադրելի ուղղութիւնն՝ որ շատ անդամ, երբ հանգամանքները ստիպել են պատիարքական փոխանորդով կառավարուիլ վերջնոյս ընտրութիւնն առանց քուէարկութեան չ'եղել: Անտարակոյս պէտք է խոստովանել՝ որ ազգային հոգւոյ և սովորութեան անխախտելի դրոշն է այդ. Հայաստանեաց նախանդրանիկ սուրբ եկեղեցւոյ առաքելական անկապտելի աւանդն է այդ. ինչպէս Պատրիարքի ընտրութիւնն է քուէով, նոյն և փոխանորդինը:

Գալով գալրոցական կառավարութեան Տեղակալի միջամտութեանը՝ պէտք ասեմ, երբ որ բարձրացաւ գալրոցական յեղափոխութեան հարցը և նոր օրէնք սահ-

մանուեց, այն ժամանակ ևս կար սրբազն Սինօղ և կաթուղիկոսական Տեղապահ, բայց իրենց ձեռնհասութիւնից վեր համարեցին ուղղակի ենթարկուիլ հրատարակուած կամոնագրութեան, մինչև նոյն իսկ ուսումնարանի Տէր, ամենայն Հայոց կաթուղիկոսը ընտրուեց և առկախ խնդիրը վաղճան ստացաւ քանի մի բարեփոխութիւններով՝ որոց կարգում շատ խոստացուեց, բայց փոքր շնորհուեց: Արդ, եթէ ցընտրութիւն և հաստատութիւն Քահանայապետի որեկիցէ մի գալրոցական խնդիր՝ յատուկ սրբազնագոյն Հայրապետին վերապահնուած, առաջարկուի Զեղ՝ իբրև Սինօղի նախանդամի, Դուք Զեղ բաւական և կարող կ'համարի՞ք նորան վերջնական որոշումն տալու: Յայտնի է՝ որ Հայրապետի մահուանից յետոյ Սինօղը չ'կարողացաւ կատարումն աալ պարոն կառավարչապետի առաջարկութեանը՝ վանքեր նշանակել վարչական կերպով աքսոր ուղարկուելիք հոգեորակամնների համար, իմանալով՝ որ սրբազնագոյն Հովուապետը ներքին գործերի նախարարի դոյնպիսի առաջարկութեան հանդէպ պահանջ է դրել՝ պատժել յանցաւոր եկեղեցականին ցայսօր տեղի ունեցած քննական և գատական կարգով:

Եթէ այդ խնդիրն այժմս իսկ Զեր սրբազնութեան ուղղուի պատշաճաւոր իշխանութիւնից՝ Դուք Զեղ ապահովուած կ'համարի՞ք «կաթուղիկոսական Տեղապահ» տիտղոսով վերջնական որոշումն տալու, և ներկայի ու ապագայի առաջ, Զեր խղճի և ազգի ձայնի հանդէպ լիազօր կ'գտնուի՞ք խոստովանի՝ որ ուղիղ հանապարհով էք գնացել պատմութեան և

Եկեղեցւոյ աւանդութեան գծագրած շաւղովն էք ընթացել։ Եթէ այն, ուրեմն Տեղակալ էք բառիս ձիգ, ընդարձակ նշանակութեամբ, և ունիք որոշ շրջան Սինօդից դուրս գործելու, իսկ թէ ոչ՝ նախանդամ էք Սինօդի, և նորա կոպարումն գործող։ Որովհետև ես պաշտօնի վերաբերութեան տեսակէտով եմ խօսում, և ոչ անձին արժանեաց կամ ապիկարութեան, ուրեմն ներուի ինձ ասել. Սինօդի նախանդամների՝ որոնք գոնէ մի ազգընտիր Հօտապետի կոնդակ չ'ունին ձեռքի, Տեղակալութիւնը կաթուղիկոսական ճիշտ փոխանորդութեան նմանութիւնն է և ոչ իրականութիւնն։ Իսկ թէ դպրոցական կառավարութեան մասին նախանդամն այնքան անլիազօր է՝ որքան և ինքը Սինօդն, այլ երկուքն էլ եղած են վերահսկող և պահպանող լինելու մինչև Տէրն յայտնուի, կաթուղիկոսն ընտրուի և հաստատուի, յայտնի է առաւելապէս նուրաննվ, որ այժմս իսկ էջմիածնի ճեմարանի կանոնադրութիւնը ազգային լուսաւորութեան նախարարից վերագրածրած՝ գտնուում է Տփիս գլխաւոր Կառավարչապետի դիւնաստանն՝ սակաւ ինչ բարեփոխութիւններով՝ ինչպէս ասաց պարոն Ամբարդանեանց, բայց չ'է առաջարկուում 'ի հաւանութիւն և յընտրութիւն Զեր գերպատուութեան, այլ պահպանուում է ապագայ Քահանայապետի ընտրութեան։ Ուրեմն, կառավարութիւնն էլ չէ ճանաչում իսկապէս լիազօր Տեղակալութիւն Սինօդի գործողութեանց շրջանակում կամ դուրսը, որքան և իւր շնորհած օրէնքը «Կաթուղիկոսական Տեղապահ» է կոչում նախանդամ համարուած անձնաւորութեան և թողնում է

նորան համեստ շրջանակում պահպանողական գործող՝ միւս անդամների համերաշխ խորհրդով։ Այս հասկանալովն է անշուշտ՝ որ Սինօդի անդամներն և թեմակալ առաջնորդները 1884 թուականին միատեղ ժողովելով յետագայ արձանագրութիւնն կազմեցին՝ ուր և Զեր ստորագրութիւնն է գտնուում։

«Ներքոյ ստորագրեալքս Մկրտիչ Արք եպիսկոպոս, «Գրիգոր Արք եպիսկոպոս Սագինեանց, Թաղէոս եպիսկոպոս Զիւնական, Մեսրովը եպիսկոպոս Սմբատ-«եանց, Յովակիմ եպիսկոպոս, Գրիգորիս եպիսկոպոս «Աղուանեան, Երեմիա եպիսկոպոս, Ներսէս եպիսկ., «Գէորգ եպիսկոպոս և Մամբրէ վարդապետ Սանա-«սարեանց, Երկիցս ժողովեալ 'ի 20-ն Փետրվարի յետ «ընդ երկար խորհրդակցութեան միաձայն հաւանու-«թեամբ որոշեցաք չանցանել բնաւ զիրաւասութեամբ «Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի, որ նուիրա-«կան է վասն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, այլ «Ժողովը գտնութիւնութիւն նորոգ հրահանգութեան կա-«նոնաց հաստատելոյ 'ի 16 Փետրվարի վասն Եկեղեցա-«կան ծիսական ուսումնարանաց Հայոց 'ի բարեհաճ «կամս բարեինամ կառավարութեան։

«Մկրտիչ Արք եպիսկոպոս
«Գրիգոր Արք եպիսկ. Սագինեանց
«Թաղէոս եպիսկոպոս
«Մեսրովը եպիսկոպոս
«Յովակիմ եպիսկոպոս
«Երեմիա եպիսկոպոս
«Գրիգորիս եպիսկ. Աղուանեանց
«Գէորգ եպիսկոպոս Սուլբէնեանց

Շներսէս եպիսկոպոս
«Մամբրէ վարդապետ»:

Ցայտնի ճշմարտութիւն է՝ որ իւրաքանչիւր Հայրապետի բարձրագոյն իշխանութեան հետ սկսած հաղորդակցութիւնները էջմիածնի կալուածների մասին, կրօնի և հայոց լեզուի արքունի վարժարաններում դասատուութեան մասին, բարձրագոյն կարգադրութեան ինչ ինչ յօդուածների փոփոխութեան մասին, և այն, և այն, նորա մահուամբ դադար են առնում և յաջորդի հաստատութեամբ վերսկսում, թէպէտե Տեղականներ՝ օրէնքի ճանաչած սահմաններում, եղել են միշտ: Ուրեմն, կաթուղիկոսական սեփական գործողութիւններին միջամտել չ'է եղած բնաւին ոչ Տեղականներից անձնական իշխանութեամբ, և ոչ կառավարութեան խրախուսանքով: Այս այնքան յայտնի էր Զերդ սրբազնութեան՝ որ երբ Երևանի փոխանորդ՝ գերապատիւ Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեանցն, յայտարարութեամբ դիմեց Սինօդին և ուսումնարանական կառավարութեան մասին հրահանգութիւն ինդրեց, Սինօդն՝ նոյն իսկ Զեր համաձայնութեամբ, միևնոյն հրահանգները տուաւ նորան, ինչ որ Ներսիսեան գլազրանոցի հոգաբարձութեան յայտարարութեան իրեն հետեանք տուած է այլ առաջնորդներին: Կարծեմ թէ աստուածնալու քաղցրաճաշակ պտուղը յետոյ առաջարկուեցաւ Զեզ, և այն Ներսիսեան գլազրանոցից արձակուած երկու ուսուցիչների հզօրափաստ պաշտպանների կողմից, իսկ թէ ինչ վաստակ կարդիւնաւորէ ապագայն այսպիսի ընթացքից՝ դժուարին չ'է գուշակելը: Դժուարին չ'է գուշա-

կելը՝ որովհետեւ 1836 թուականին արուած բարձրագոյն կանոնադրութեան քանի մի կենսական յօդուածներն՝ ինչպէս պրօկուրօրի հայաղգի լինելը, գլազրոցների կառավարութեան ձկը, և այն, փոխարկուել են և շուտ շուտ փոփոխուում են, մանաւանդ վարժարանների մասին արուած հրահանգները: Սակայն Տեղակալութեան մասին անկատար յօդուածը տակաւին յօդուած մեզ չ'է փոխուած, թէպէտե ինդրուած է նախորդ կաթուղիկոսների թղթով: Ուրեմն, մի խորին խորհուրդ ունի Սինօդական մի սոսկ անգամի օրերի մէկում ձևանալ «Կաթուղիկոսական Տեղապահ» կամ ըստ Մշակի «Ժամանակաւոր կաթուղիկոս», և ապագայ ընտրութեանց եղանակն պատրաստել, ինչպէս Դուք ցանկացաք: Շատ փոքրն ասելով՝ այս նախապատրաստութիւն է մի անհատի յօժարութիւնից կախուած տեսնել Հայաստանեաց եկեղեցւոյ նույնապեսի ընտրութիւնն: Կարծեմ Զեր սրբազնութիւնն Բաբամեանց Մկրտիչ Արք եպիսկոպոսի, Մեսրովը եպիսկոպոս Սմբատեանցի և Յովակիմ եպիսկոպոս Տէր-Գրիգորեանցի հետ գոյնպիսի հեռանկատ խորհրդով Մակար կաթուղիկոսի տեղապահութեան ժամանակ յայտարարութիւն տուած էք Սինօդին՝ որով տեղակալի նոյն ատենի շրջանակէն դուրս գործողութիւնքն ապօրինի համարած էք և Հայրապետական իրաւանց միջամտութիւն. մինչև անգամ յառաջելով Զեր ջանից մէջ՝ կորզած էք Բաբամեանց Արք եպիսկոպոսի եկեղեցական գորգն՝ որպէս ոչ վայելչական Սինօդի Առենապետի Տեղակալին: Եթէ մոռացած էք Զեր յայտարարութիւնն՝ ահա նորա օրի-

նակն, որպէս զի վեջահասու լինիք, թէև, Դուք, չու-
րեքին եպիսկոպոսներդ, անհնազանդ էիք ժամանակի
իշխանութեան—Տեղապահին, բայց անպատիժ մնացիք:

«Ի լուսաւորչական Հայոց Սինօդն Ս. Էջմիածնի
«Անդամոց Դորին

«Յայտարարութիւն.

«Սրբազն Տեղապահ Ասենապետի Դորին յանցե-
«լումն աւուր հրաւիրելով առ ինքն զգելրապատիւ Ան-
«դամս Սինօդի ՚ի միջի այլոց բանից առաջարկեաց
«այնօրինել զինդիր ոռնկաց տեսչի ձեմարանի և չո-
«րից և եթ վարժապետաց, որոց եռամեայ պայմանա-
«ժամն արդէն լրացեալ է, մեք պատշաճ վարկաք յայ-
«տընել գայս մեր իրաւացի կարծիս թէ՝ նմին իսկ
«տեսչին հարկ է գրաւոր յայտարարութեամբ զիմել ՚ի
«Սինօդն և պարզօրէն բացարել զպէտս և զկարիս
«ձեմարանի, զթիւս ամենից ուսուցչաց, վերակա-
«ցուաց, զառարկայս գասաւանդութեանց, զքանակու-
«թիւս գասուց յիւրաքանչիւրում եօթնեկի, զպա-
«րապմունա և զպարտս իւրաքանչիւրոց, զքանակու-
«թիւն ստանալի ոռնկացն (զորս գանձարանն Ս. Էջ-
«միածնի ըստ նախկին կարգի անկարանայ այլ ևս
«լրացուցանել, մինչ զի առ ՚ի չզոյէ օժանդակութեան
«ինչ յուստեքէ, հարկ եղե ՚ի զլիսադրամոց ձեմարանի
«հոգալ զանհրաժեշտ պէտս նորին, այն ինչ հնարա-
«ւոր էր զարդիս փոփոխութեամբ պայմանաց տեսչի
«և ուսուցչաց և այլովք նորանոր օգտաւէտ տնօրէնու-
«թեամբ թեթևացուցանել զծախս ձեմարանի): Սա-
«կայն սրբազն Տեղապահ հօրն՝ որպէս երևեցաւ ՚ի
«նմին ժողովի, կամք էին միայն զիւրն ցուցանել

«Պնախապատուութիւն իրաւանց վերաբերմամբ պահ-
«պանութեան ձեմարանի, ըստ զօրութեան շնորհեալ
«ինքեան կոնդակի ՚ի հանգուցեալ Հայրապետէն, որ-
«պէս և խոստացաւ պահպանել զձեմարանն և ինքնին
«ղեկավարել իւրով յատուկ պատասխանատուութեամբ.
«Ընդ որ ուրախ եմք, զի հանգուցեալ Հայրապետն
«քաջ ճանաչելով զկարողութիւն Տեղապահ Հօրն,
«հաւատաց նմա կոնդակաւ զղեկավարութիւն ձեմա-
«րանի, զայս ծանեան նաև պատուարժան աշխարհա-
«կան պատգամաւորք ազգիս և զբուատեցին նմա
«զբաւորապէս (որոց թէև էին միմիայն իրաւունք
«ընտրել զկաթուղիկոս) զոր սրբազն Հայրն կարեոր
«դատեալ՝ ետ ընթեռնուլ ի լուր ամենիցս:

«Ապա ուրեմն զհետ գայ ասել թէ՝ որ կոնդա-
«կաւ Նորին Օծութեան համարի ունել ինքեան բա-
«ցառիկ եզակի իրաւունս պահպանութեան ձեմա-
«րանի առանց մասնակցութեան Սինօդական ամե-
«նից անդամոց, նմին և բարոյական պարտականու-
«թիւն է հետեւել օրինակի երանեալ հիմնադրի նորին
«և անձնական հոգատարութեամբ հոգալ զնիւթական
«պէտս ձեմարանի:

«Ուստի ՚ի զրկիլ Հայրապետական Աթոռոյս ՚ի
«Հայրապետէն իւրմէ, յիրաւասութիւնս առ հասա-
«րակ ամենից Սննդամոցս չգտանեմք բնաւին բացա-
«ռիկ առաւելութիւն ինչ քան հաւասար արտօնու-
«թիւնս ի տնօրինել և ՚ի կարգաւորել զամենայն
«գործս Աթոռոյ ըստ զօրութեան տուեալ ՚ի պետու-
«թեամբ Սինօդիդ օրինաց (պօլօժենից) զի յայսմիկ
«կու ՚ի սահմանի օրինաւորութեան է պաշտօն ան-

«Պամութեան մերոյ, յուրում կամք հաստատապէս և
«համոզեալս եմք, զի ուր իցեն օրէնք, անդ և պարտի
«պահպանիլ օրինաւորութիւնն յամենայն պաշտօնական
«գործառնութիւնս, ուստի ամենայն գործ և տնօրէ-
«նութիւն վերաբերեալ ճեմարանի Աթոռոյս հարկ է
«լինել գիտութեամբ, խորհրդով և համաձայնութեամբ
«Անդամոցս Սինօդի, և որ ինչ արագոյ է ՚ի Սինօ-
«դական խորհրդարանէ, ոչ ճանաչեմք»:

«Անդամք Սինօդի՝ Մկրտիչ Արք եպիսկոպոս
«Մեսրովը եպիսկոպոս
«Յովակիմ եպիսկոպոս
«Երեմիա եպիսկոպոս

«Ի 11 յունիսի 1884 ամի

«Ի Ա. Էջմիածին»:

Դ.

Փետրվարի բաժին Արարատն առաւել ճոխ է
ազգային տեսութեամբ և պաշտօնական քաղուած-
ներով: Տաճկաստանի և Ռուսաստանի ազգային հրա-
տարակութիւններն՝ որոնք թուլութիւն են ունեցած
ենթարկուիլ թերևս իմ ըմբոստական անհնազանդու-
թեան և գատելու եղանակին, միանդամայն արժա-
նացած են անպթեմայի: Իսկ իմ «կատաղութիւն և
անզուապ կիրքն՝ որ ամէն պատշաճից կանոն և հա-
սարակ վայելչականութեան սահման ունատակ են
տուած», ամենեցուն ուշադրութեան և զարմանքին է
յանձնուած. ինքս էլ՝ տարակոյս չկայ, ամենայն
արդարութեամբ և իրաւամբ արժանացած եմ աքսորի

և ոստիկանական հսկողութեան: Այստեղ՝ ներեցէք,
փակագծի մէջ մի քանի խօսք դարձեալ ասել ներկայ
Տեղակալութեան՝ պալաժէնիայից տրուած բոլոր
կարծեցեալ արտօնութեամբ հանդերձ, իմ ճանաչ-
մամբս ունեցած արժանեաց մասին, և ապա անցնել
բուն խնդիրներին՝ որոնք Արարատի սոյն համարի
գարգարուն պսակներն են կազմում:

Արժանապատիւ Մակար վարդապետ Բարխու-
դարեանի նու բառն ամսագրի խմբագրութեան և
Զեր գերապատուութեան դիւր չգալէն յետոյ՝ իբրև
կեղծ, սուտ, շնչու բառերին արտայայտիչ, ինձ
ևս հաւանելի չէ: Թերևս տառափոխութիւն եղած
լինի, փոխանակ ծ տառի ն գրուած, ըստ որում
ծու ծուռ բառի արմատն է, ծոել, ծոմել, ծոա-
զատիկ և այլն: Հաճեցէք՝ յարդոյաբանը խնդրեմ,
ընդունել «օր Տեղակալ» մակղիրն. իսկ եթէ գորան
ևս յօժար չէք, որոնեցէք Դուք ինքնին և գտէք վայ-
ելուչ կոչումն: Ըստ իս Հայոց եկեղեցւոյ հոգուց
գուրս է այդպիսի Տեղապահութիւնն՝ շնորհուած լոկ
օրէնքով՝ որոյ պարզեւողն կարող է ապագայումն և
ինքնին անուանել ոչ միայն Տեղապահ, այլև կաթու-
ղիկոս: Ուստի մի կողմից շնորհակալ լինելու է Զեզ,
որ յօժարել էք Արարատի միջոցաւ առաւել ընդհան-
րացնել նոյն իմ կարծիքն՝ բազմաթիւ ընթերցողների
առաջ տարածանելով: Արգեօք՝ «պատշաճից տար-
րական կանոններն» իրաւունք տալիս են իւրաքան-
չիւր ննջեցեալի յուղարկաւորութիւն պատուող այ-
ցելուներին պահանջել ժառանգներից նոցա հօր զինի
մահուան թողած կարողութիւնք և փոխնորդներ

իրենց ներկայութեան բանալ, որպէս զի յագեցնեն իւրեանց հետաքրքրութիւնն: Կամ թէ՝ պետական կառավարութիւնն Հայոց Հայրապետանոցն դաւա-դրութեան վայր էր կարծում, որ անշուշտ առանձին պատգամաւրի ներկայութեան ցուցակագրուին նո-քանում գտնուած պաշտօնական թղթերը: Եթէ մեր Քահանայապետներն՝ երբ և իցէ, ազգային դաւադրու-թեան գլուխ են անցել իրենց օրինաւոր քաղաքական իշխողի դէմ կամ յելուզակ բնաւորի, այդ միշտ քրիստոնեայ պետութեան և վերջերս Ռուսաց՝ օգտին է եղել, ինչպէս լիովին կապացուցանեն Էջմիածնի, Սսի, Աղթամարի և Աղուանից Հայրապետների պատ-մութիւնք: Ես չ'եմ կարծում՝ որ Եկեղեցւոյ Հոգուա-պետի վստահութիւնն վայելած և նորա կոնդակով Տե-ղապահութեան կոչուած մի Եպիսկոպոս այնքան բացսիրտ հրաւէր կարդար ազգային պատգամաւորաց, դաւառապետի, Կառավարչապետի ներկայացուցչի և այլոց ընթերակայ զտնուիլ վեհարանական կայից ցուցակագրութեանն և ուրոյն ուրոյն վարկումներ ունենալ: Ահա թէ՝ «Ճռ Տեղակալ» կոչումն որքան յարմարում է Զեր սրբազնութեան: Լսուած բան է արգեօք ուրկից՝ որ մի վանականի կամ վանահօք մահուանէն յետոյ, որկիցէ ազգի մէջ բացի միաբա-նական եղբայութեան և վանուց յատկացրած վար-չութիւնն՝ որպիսի և իցէ կարգագրութիւն առնեն հան-գուցելոյ կայից համար՝ որոնք վանուց են պատկա-նում, օտար տեսչութիւնք և բաղաքական իշխանու-թեան ներկայացուցիչներ: Այսպիսի պարականոնու-թիւնք միայն և եթ անիշխանական և անզլուխ տեղե-

րում կարող են յայտնուիլ և ոչ այլ ուրեք, ուր կարգ և կանոն կայ:

Լրագրներից քաղուածօրէն յառաջ բերուած հա-կասական մաքերի համար խօսելու և պնդելու հչինչ կարեորութիւն չ'ունիմ: Հասարակաց դատաստանի առաջին է անցեալը. ինչպէս կ'յօժարին՝ թող այնպէս դատեն: Միայն անդատապարտ խզով և սրտագէտ Աստուծոյ Երկիւղով պէտքէ վկայեմ. Նախորդ 1884 և 1885 թուականների կաթուղիկոսական ընտրու-թեանց ժամանակ ընտրին և ընտրին հակառակ չեմ եղած Տաճկաստանցի Հայոց Եպիսկոպոսաց թէկնա-ծութեանը՝ ինչպէս Արարատը ճգնում է ապացուցա-նել Թուրքիոյ հայ լրագրաց վկայութեամբ. այլ տըժ-գոհութիւն յայտնած եմ ընտրողական եղանակին՝ որ Պոլիս եղած է և ոչ ընդհանուր վիճակների պատ-գամաւորութեամբ սուրբ Էջմիածնի տաճարում՝ ըստ վաղնջական սովորութեան, որ պատմութեամբ նուիրագործուած է: Եւ այս միաբանասէր հոգւոյ և Եկեղեցական սահմանադրութեան անխախտ պահպա-նութեամբ այնքան նախանձաւոր և եռանդուն հան-դիսացած եմ, որ 1885 թուականի Հայրապետական ընտրութեան վեհարանում խմբուած նախապատրաս-տական ժողովում բարձրաբարբառ՝ ՚ի լուր համօրէն աշխարհական և Եկեղեցական պատգամաւորաց, աղա-ղակում էի. «Մուսաստանի և Տաճկաստանի ազգայ-նոցս միութիւնը պէտքէ լինի արդեամբ և ոչ սոսկ բանիւ: Ի՞նչ խորհուրդ ունի կոստանդնուպօլսոյ մեր-ազգեաց ժողովի եռանուն ցանկ ուղարկելն և պնդու-թեամբ պահանջելն՝ որ իւրաքանչիւր Եպիսկոպոս իւր

ստացած քուէով մայր՝ Աթոռումս կայանալիք ընտրուզական համագումարում թէկնածու համարուած լինի։ Եւ այս այն ժամանակ՝ երբ համազգային էջմիածնի անցեալ տարուայ ընդհանուր ժողովի երկրորդ ընտրեալ՝ Տէր-Մելքիսեդեկ արք եպիսկոպոսն կենդանի ասպարիզումն կանգուն կայ, այլ ոք եպիսկոպոս նորանից նախադաս համակարգել։ Ուրեմն, այս կը նշանակէ՝ որ այստեղի կայանալիք գումարումն միայն լոկ ձևականութիւն ունի և հարկադրուած է Պօլսոյ ժողովի որոշումն գործադրել։ Միութիւն է ցանկանում ազգն, միութեան նախանձաւոր էք և Դուք՝ նորա եկեղեցական և աշխարհական պատգամաւորներդ, օն ուրեմն սուրբ պահպանենք մեր նախնեաց նուիրական աւանդն. ոչ մի տեղ, ոչ մի քաղաք, ոչ մի անկիւն չայոց Դիտապետի ընտրողական համագումարի փայր չ'զաւանենք, կենդրոն չ'խոստովանենք՝ բացի սուրբ Լուսաւորչի աթոռն. բացի Աստուծոյ Միածին Որդոյ իջման խնկելի գարերայն, բացի նոյնահապետի հաշտութեան սեղանատեղին։ Եւ եթէ ինձ նման օր յառաջ, ժամ յառաջ կ'տագնապիք, կը փափաքէք արդիւնացած, կատարուած տեսնել այդ վաղադարենի բաղձացած միութեան սուրբ ուխտ՝ թողէք մի կողմ ընտրելի եպիսկոպոսաց անուանական ցուցակ և ցանկ, մատնացոյց եղէք Սոոյ և Աղթամարի կաթուղիկուներէն միոյն վերայ. հրաւիրենք նորան. գայ, բազմի յաթոռ գերերջանիկ Պարթևին, որպէս զի նորա այժմեան հակաթոռ Սիսն կամ Աղթամարն դադարի այլ ևս չայրապետ ունենալին։ Նորա մահուանից յետոյ՝ ածել բերել միւս կենդանի մնա-

ցած Հովուապետ՝ գարձեալ նոյն պայմանաւ. և այսպէս մի հոգւոյ պնդութեամբ ճարտարապետ լինիլ եկեղեցւոյ բարոյական շինութեանն. ՚ի սուրբ միաւորութիւն գումարել նոյնարիւն ժողովուրդ ուր ուրեք և պանդստին՝ որով փրկել նորան գարուս լուսաւոր ազգաց իրաւացի մեղադրութեան գատաստանի նշաւակ լինելին՝ իւր հրէշանմանութեամբն, ըստ որում երեք զլուխ ունի, և ՚ի կատարեալ առաջին կերպարանս վերածել։ Այսպիսի որոշմամբ երկնաւոր Սիօնն՝ երկրաւոր երուսաղէմի որդւոց առաջին և վերջին ապաւինավայր ապաստանն, կ'ըերկլիք, կ'միսիթարի և մեր սրբազն նախալուսաւորիչ Թաղէոս և Բարդուղիմէոս առաքեալ Քահանայապետների աթոռն իրաւամբ իւր սպոյ և լլկանաց տխուր հանդերձ և քօղ կմերկանաց և հարմարէն ՚ի նորոյ կազմազարդուի։ Ապա թէ ոչ՝ միութեան պատրուակով Տաճկաստանցի եղբարց առանձին ընտրական ժողով ունենալուն իրաւունք տալը կարող է ապազայում նոյնափիսի հանգամանք յառաջ բերել Պարսկաստանի-Հնդկաստանի և այլ պետութեանց ենթադրուած ազգայնոց մէջ, և այս՝ փոխանակ միութեան, բաժանումն կլինի. և մայր Աթոռիս ժողովս իւր միջազգային նշանակութիւնը կլորցնի։ Եթէ չայրապետաց ընտրութեան ժողովներն անուանուած են մեղանում ազգային եկեղեցական գումարումներ և պատկանում են եկեղեցական պատմութեան՝ պէտքէ համարուին նոքա սրբագումար և Հոգւոյն Աստուծոյ առաջնորդութեամբ ներգործողք. պէտքէ նոցանուամ լոեն ամէն անձնական դիտումներ և միտումներ, պէտք է տեղի չ'ունենան բռնադատութիւնք»։

Ահա սոքա են եղել իմ առարկութիւնք վաղանցեալ ընտրութեանց ժամանակ և սոյն իսկ ուղղութեան այսօր ևս հետեղ եմ և քարոզող՝ յուսալով որ վերջ՝ ի վերջոյ յաղթանակը էջմիածնի միաբար և շինարար համագումարինն է լինելու։ Այսուհետեւ դադար պէտքէ առնուն այլ և այլ քաղաքների նորագոյն, տարրող հրահանգներով կաթուղիկոսական ընտրութիւնք. պէտքէ իշխէ և թագաւորէ ազգային հնաւանդ սովորութիւնն, որպէս զի կենդրոնն առաձիգ նշանակութիւն և զօրութիւն ստանայ։ Գալով Տաճկաստանի եպիսկոպոսների ընտրելիութեան թէկնածութեան՝ պէտքէ ասեմ, դարձեալ վկայութեամբ Աստուծոյ և խղճիս ձայնին, թէ հոգելոյս Ներսէս սրբազն Պատրիարքի հոգեկան բարեմասնութիւններին՝ ի մօտոյ ծանօթ լինելով՝ 1872 թուին Սիսալցիսայ երկամսաչափ հիւրասիրելով, անտարակոյս հաւատ ընծայած եմ նորա չորս անգամ հիւանդութեան պատճառով տուած զրաւոր հրաժարականների անկեղծութեանն, որքան և Հայկակի նման մերկիմաստակ ամբարիշտները պնդում էին թէ՝ «քաղաքագիտութիւն-պօլիտիկայ է Ներսիսի հրաժարականներն»։ ուստի և ձեռնպահութեամբ ընտրողական քուէ չ'եմ տուած նորան։ Վաղահաս սգառիթ մահն սուտ հանեց բանսարկու քաղաքագիտութիւն ծախող Հայկակին և նմաններին՝ ճշմարիս հոգեորականի և քրիստոնէի պատկեր ցոյց տալով ողբացեալ Ներսիսի հոգւոյ անարատութեան և վարուց ուղղութեան մէջ։ Ամենապատիւ Խրիմեան սրբազն Մկրտիչ Արք եպիսկոպոսին ճանաչել եմ և խոստովանում եմ բաղմար-

դիւն եկեղեցական, անձնանուէր հայրենասէր, առաքինագործ քրիստոնեայ, բայց իշխանական բարձրութեան վերայ՝ իւր տարապայման գորովով, անյողգողգ կանգնելու անբաւական անձնաւորութիւն։ Չնայելով որ Նորին սրբազնութիւնն անտարակոյս ազգի միահամուռ ձայնատուութեամբ այս անգամ կընտրուի Հայրապետ, գարձեալ իմ կարծիք նորա հոգեկան գերազացութեանց և անձնական անձեռնհասսւթեանց համար չ'եմ թագուցանում. միով բանիւ՝ ոչ թէ նա Քահանայապետական աթոռին անարժան ոք է, այլ մեք անընդունակ ենք օգտուելու նորա բարեմասնութեամբք՝ ի չարն գործադրելով նորա անդրասահման գթութիւնն։ Այսպիսի իմացուածով և լրագրական հրատարակութեան միջոցով յայտնած եմ համոզմունք «Ճանապարհորդական տպաւորութիւնք» և ընտրական գործողութիւնք» անուամբ։ Ապագայ պատմութեան դատաստանից՝ խօսածներիս և գրածներիս մասին, չ'եմ ակնածում, անտարակոյս գիտեմ՝ այն առաւել շրջատես և արգարակին պէտքէ լինի՝ քան Դուք և Արարատ ամսագիրն հանդերձ խորհրդակցօք։

Երջանկայիշատակ Գէորգ կաթուղիկոսի ինձ հետ անդրապայման խստութեամբ վարման մասին ևս ասելիք չ'ունիմ, ըստ որում յառաջ բերուած իմ երկու յայտարարութիւնք և Սինօդի օրագիրը բաւական են խնդրի վերայ լոյս ձգելու։ Նոցա մէջ յայտնի երկում է՝ որ Վեհափառ Հայրապետն ամբաստանուած քահանայից ա) Ներում է, թ) քննական գործողութեանց գաղար է տալիս և զ) վերատին նոցա թողնում է հոգենոր կառավարութեան անգամութեան

պաշտօնի մէջ: իսկ ինձ ա) արձակում է փոխանորդական պաշտօնից, բ) կարճում է ոռօնիկս և զ) իրեն տեսած չլինելու առթիւ արգելում է եկեղեցի գնալ. այն ինչ ես իւր բարեհաճութեամբ և թոյլտուութեամբ սուրբ Յարութիւն օրը ներկայացած եմ եղել: Իմ թախանձագին խնդիրս էր՝ յանցաւոր համարուած տէրտէրներին երրակի շնորհ եղած ժամանակ, ինձ միայն կրկնակի պատժով վարձատրել և ոչ երրորդովն քրիստոնէական զգացմունքս վիրաւորել՝ Աստուծոյ անուան վառարութիւնն իշխանական հրամանի տակ առնելով՝ ինձ տաճար մտնելն արգելել: Զեղաւ ինձ այդ զիջումն և շնորհ, կրեցի պատիժն, տարագրուեցայ: Զղացի, զրաւորաբար թողութիւն խնդրեցի և ընկալայ ներողութիւն ու պաշտօնավարութեան իրաւունք՝ որոց մասին Արարատ ամսագրում հրատարակուած է իւր ժամանակին: Դորանք յայտնի էին Զեր սըբազնութեան, ուստի և բնաւին անտեղի վերստին յիշատակութիւնն: Բաւական են համկացողների ուշադրութիւնն և համակրութիւնն դէպի ինձ ձգել և այն ժամանակի լրագրական հրատարակութիւններն՝ որոնք հետաքրքիրներին ծանօթ են, թէ ի՞նչ պատճառով ինձ վերայ բարձրացան այնքան հալածանք և զրկողութիւնք: Բաւական են Զեր սըբրազնութեան և Արիստակէս եպիսկոպոս Սեղբակեանի առ իս ուղղած զրութիւնքը հանգուցեալ Գէորգ կաթուղիկոսի կոնդակի վերաբերութեամբ թէ՝ զուք այն ժամանակ ի՞նչ հայեացք ունէիք իմ անհնագանդութեան մասին, թէև այժմս նաւու առագաստն յայլուստ փչող հողմերին բանալով՝ բերաննիդ փոխած

էք, որոյ համար ունիմ ընդարձակ զրուած «Առձեռն վարձատրութիւն» անունով՝ ուր կան իսկութեամբ յիշուած նամականիք: Այսուհետեւ իմ համառօտ ասեւիքս են և պէտք լինին, նախ՝ ընդհանրապէս Երևանի վիճակի բազմաթիւ քահանայացուների ձեռնադրութեան մասին՝ որով անարդար ակնարկներ են լինում հոգելոյս Հայրապետի յիշատակին, և երկրորդ՝ մասնաւորապէս ինձ վերագրուած Սինօդական անկանոն գործողութիւնների և կաթուղիկոսական գոյքի գողութեան վերաբերեալ խուլ կասկածանքների և ակնարկութիւնների մասին:

Ե.

Անկանոն ձեռնադրութիւնների խնդիրը՝ սրբազն Հայր, մեր եկեղեցւոյ մէջ վաղուց նկատուած եպերելի թերութիւն է. և դորա համար ոչ միայն որոշ կանոններ կան, այլ և որոշ մեղաց տեսակ ու անուանագրութիւններ՝ որոնք ապօբինի ձեռագրութիւններից են յառաջանում: Թողնենք շատ հինը, նորագոյն ժամանակի համար և՛ այսինքն բարձրագոյն կարգագրութիւնն ստանալէն յետոյ, մեզանում անթիւ բամբասանքներ են եղած՝ թէ Յովհաննէս կաթուղիկոսի օրով ձեռնադրութիւններ շատ եղան՝ քան թէ Եփրեմի, Մատթէոսի միջոցով աւելի՝ քան թէ Ներսիսի, Գէորգի ժամանակ առաւել՝ քան թէ Մատթէոսի, և ահա ասուում է պաշտօնական հրատարակութեամբ՝ թէ Մակարի տնօրէնութեամբ աւելի եղած են՝ քան առաջները, բայց որքան ուղիղ են այս հասարակական եղած բամբասանք՝ որոշ յայտնի չէ:

Ես շատ վաղուց, տպագրական խօսքի միջոցով, խընդուրած էի սուլբ հջմբածնի Սինօղից՝ որ բարեհաճէր իւր բացման յիսնամեկին մի լաւ յիշատակ նուշիրել՝ հրատարակելով մի կանոնաւոր վիճակագրական տեղեկագիր և հաւաքածու իւր բոլոր՝ հրահանգութեան համար արձակուած հրովարտակների օրինակներով, թէ 1836 թուականին ողբան եկեղեցի, քանի եկեղեցական, ի՞նչքան ժողովուրդ, որչափ դպրոց և այլ աստուածահաճոյ հաստատութիւններ, ի՞նչ վանքեր և այլն, և այլն, ստացաւ պահպանելու, տարեցարի ի՞նչ յաւելումով կամ նուազուրդով կառավարեց դորանց, ի՞նչ աւելացրաւ իւրաքանչիւր տամամեկում և ողբան յառաջ գնաց բարեկարգութիւնը մեր եկեղեցոյ մէջ:

Այսպիսի հրատարակութիւնն ինքնին զուգակշիռ կ'լինէր ամէն մի Հայրապետի ինքնուրոյն և Սինօղի համաձայնութեամբ գործողութեանն: Եթէ ծանը համարուեց այդ գրական աշխատառութիւնը՝ գոնէ միմիւայն քահանաների ձեռնադրութեան մատենից քաղուած լինէր՝ (ըստ որում ամէն տարի որոշ արձանագրուում են ձեռնադրուածների անունները) մի ընդհանուր ցուցակ թէ՝ իւրաքանչիւր տարի ողբան քահանայ է օրնուել, ողբան վաղճանուել և որո՞ց ժամանակ: Այս տեղեկագիրը ձեռքի տակ ունեցող՝ մտովի համեմատելով ժողովրդի տարեկան աճման որոշ տոկոս՝ կարող էր գէթ վեր ՚ի վերոյ գաղափար կազմել անձնիւր Հոտապետի ջանքի մասին եկեղեցւոյ շնութեան և բարեկարգութեան վերաբերութեամբ. հոգևորականների վիճակի բարեոքման համար

և այլն: Պաշտօնական հրատարակութեան համար այս եղանակն առաւել վայելչական էր և միակողմանի լինելու իրաւացի բամբասանքից ազատ, քան տըրտընջեն ու պախարակելը: Եթէ ՚ի նկատի ունենանք Սինօղի բացման հարկագիր հաւաստի պատմութիւնն և վիճակագրական տեղեկութիւնների անհրաժեշտ կարեղութիւնը՝ ցաւօք սրտի պէտքէ ասենք, որ իւր յատկացած նպատակին տակաւին չ'է հասած հոգեսոր բարձրագոյն ատենի հաստատութիւնը և հասնելու էլ առանձին նախանձաւորութիւն չ'է ցոյց տալիս, ի՞նչ պէս շուտով փաստերով կտեսնէ իւրաքանչիւր հետաքըրքիր ընթերցող:

Երեսնի վիճակը իւր բացմամարդութեամբ՝ գրեթէ հինգհարիւր հազար հոգի, առաջին տեղն է բըռնում Ռուսահայերի թեմերի կարգում: Իբրև կաթուղիկոսական սեփական վիճակ՝ երջանկայիշատակ Գէորգ վեհափառ Հայրապետի մահուանից յետոյ 1882 թուից մինչև 1887-ի սկիզբները, քահանայի ձեռնադրութիւն չ'է տեսած, այլ արգելուած է եղել՝ ի՞նչ պէս սովորաբար ամէն Հովուապետի մահուանից յետոյ, իսկ եթէ եղել են՝ նոքա համարուել են խիստ կարիքի պատճառով բացառութիւն: Զորս տարի ձեռնադրութիւն չ'է եղած Հայրապետական ընտրութեան կրկնութեան առթիւ, չորս տարի ևս իմ փոխանորդութեան ժամանակ, ուրեմն ութ տարի միջոց. ութսուն և չորս քահանայ Երեսնի մեծ վիճակի համար ոչ թէ շատ է, այլ անզամ քիչ. տարեկան տասն հոգի: Հարիւր երեք տիրացուների առաջարկութիւնն ոչ թէ չափազանց է, այլ երկու հարիւրն ևս չափա-

ւոր է՝ վիճակի վեց հարիւր եկեղեցիների նկատմամբ։ Հետաքրքիր էր իմանալ՝ գերապատիւ Գառնակերեանց Գրիգոր սրբազն եպիսկոպոսն մի և կէս տարուայ մէջ քանի՞ քահանայացուի ձեռնադրութիւն է ինդըել։ Այդ ևս կարող էր մի տեսակ չափ դառնալ ժողովրդի պահանջման արդարութեան և իմ տարապայման գործողութեանը։ Շատ լաւ յայտնի է սրբազն Սինօդին՝ որ բոլոր հարցաքննական թերթերը կազմուած են իմ ձեռքով։ քննութիւններն եղած են անդամների ներկայութեամբ և վկայաբանութեամբ։ շատ անգամ նոյն իսկ քահանայացուների ժողովրդոց, ազգականների և կողմնակի պատուաւոր անձինքների առաջ։ Երբ անաշառ արդարութեամբ՝ իրեն հասարակութեան և հոգեոր վարչութեան մէջ եղած միջնորդ իշխանութիւն, ես թեմական ատենի միջոցաւ առաջարկել եմ սրբազն Սինօդին քննական թերթերը, լուծումն ստացել և ձեռնադրել, ես եմ գայթակղելի՝ թէ հրամանատուն։ Շատ լաւ յայտնի է նոյնպէս սրբազն Սինօդին՝ որ իմ վիճակի տիրացուների մեծ բաժնը ձեռնադրուած է սուրբ էջմիածին գերապատիւ անդամներից, բացի գերապատիւ ներուէս սրբազնէն, և այդ իմ մասնաւոր տրաունջներով առ հանգուցեալ հայրապետը թէ՝ «թող հրաման արձակող սրբազններն էլ անարժանների վերայ ձեռք դնեն ինձ նման և մեղսակից լինին նոցա տալիք գայթակղութիւններին»։ Դուք ինքներդ ասացէք, վիճակային ատեանն՝ որոյ նախազան էի համարուում, կարող էր ինդրատու ժողովրդի աղերսագրերին ընթացք չ'տալ և սակաւ է պատահել՝ որ կոնսիստորիայի դէմ բողո-

քել են Սինօդին տիրացուների գործերին ուշադրութիւն չ'գարձնելու համար և վերջինս հրամայել է առաջարկել, կամ ուղղակի ինքն է ինդիրն ընդունելով գործ շարունակել։ Ուրեմն, Դաւալու գիւղի Արսէն Տէր-հսահակեանցի ընդունակութեան միջակ թուանշաններով և կցորդուած «անուս» որոտախօս բառերով վկայականի գնահատութիւնն և նորա ձեռնադրութեան կոչուիլն ի՞նձ կ'կարմրացնեն հասարակաց դատաստանի առաջ՝ թէ Սինօդին՝ որոյ նախանդամ լինելու պատիւն ունէիք։

Երբ վերև գրուածները յայտնի են՝ այն ևս ծածուկ չ'է սրբազն անդամներից՝ որ ես գրաւոր գանգատ տուած եմ վեհափառ կաթուղիկոսին առանց իմ առաջարկութեան տիրացու ձեռնադրելու և անընդունակներին կարգ տալու հրամաններ ստանալուս մասին։ Այն ևս ծածուկ չ'է սրբազն անդամներից և առհասարակ ժողովրդից՝ որ իմ Երևան լինելուց յառաջ 30, 40, 50, 60 տուն ծուխ ունեցող գիւղերն ունեցել են երկու, մինչև անգամ երեք քահանայ։ Եթէ Բէկղզագլու գիւղի համար՝ որ 150 տուն է, երեք քահանայ ունենալէն յետոյ կոնսիստորիայն ինձնով հանդերձ յանցաւոր է համարուում չորրորդի համար առաջարկութիւն անելով, հապա ի՞նչպէս Բձնի գիւղն 50 տուն լինելով մի նորընծայ քահանայ ունենալով՝ երկրորդն ևս ձեռնադրուեց, իրեն իւր գառամեալ հօրն օգնական, և այսպիսով միաժամանակ այնտեղ գանուեցին երեք քահանայք։ սոյն հաշուով Բէկղզագլուն պէտքէ ունենար ինն քահանայ։ Ում ջանքերին է պարտական Բձնի գիւղի վեր-

շին տիրացուի օրհնութիւնն, իմ՝ թէ Զեր սրբագ-
նութեան, երբ առանձին իմն աշխատութեամբ յար-
գելով միջնորդների ընտանութիւնն, յաջողեցնել կա-
րացիք: Եւ դեռ վատահութիւն ունիք Արարատի
ազգային բաժնի ճարտար խմբագրովից՝ հոգելոյս Հայ-
րապետի դամբարանի ներկայութեամբ և իմ աքսորա-
կան բացակայութեամբ, գովասանական ակնարկու-
թեանց խունկ ընդունիլ: Վեհափառի յանձնարարու-
թեամբ Վաղարշապատի երկու ընծայացուներին ժո-
ղովրդեան առաջաւորների և սրբազն անդամների
ներկայութեամբ իմ հարցաքննութիւն անելուց յետոյ՝
երբ հրաման եղաւ ընդունակին ձեռնադրել և ան-
ընդունակին թողնել, ես վեղարս վերցրած միջնորդեցի
սրբազնագոյն կաթուղիկոսին և վերջինի համար ձեռ-
նադրութեան հրաման ձեռք բերի՝ թէ Դուք, որ այսօր
Հայաստանեայց եկեղեցւոյ համար նոր սմբ խրա-
մակարկատ, բարենախանձ Եղրաս էք ձեւանում: Ո՞վ
կարող է տարակուսել թէ՝ Արարատից ակնարկուած
և այլ շատ գեղծմունքներ նոյն իսկ Զեր թափանձա-
գին աղերսարկութիւնների արդիւնքն չ'են առ
գորովազութ Հայրապետն, որոյ առ Աստուած վերա-
փոխութենէն յետոյ՝ յանցանք են համարուում նորան: Ասացէք ինդրեմ, Երեմիա եպիսկոպոս, քահանայա-
ցուների արժանաւորութիւն գնահատելու մէջ Դուք
առաւել հմուտ, բարեխիղճ և խստապահանջ էք՝ թէ
առաջի Աստուծոյ և աղգին համարատուութեան
պարտիք ստանձնող Մակար Հովուապետն՝ որոյ շնոր-
հաց Զեր արժանեաց հետ համեմատեն արեելից արե-
մտեան հետ ունեցած հեռաւորութեանն կ'հաւասարի

ամէն ժամանակակիցների անբոնադատ վկայութեամբ:
Դարձեալ սասացէք խնդրեմ՝ ձեռնադրութեան շնորհ
բաշխելու ժամանակ իմ սակարկութիւններն և որոշ
քանակութեամբ ընծայացուից գրամ պահանջեն է
յայտնի ամբողջ Երևանի նահանդին, էջմիածնի միա-
բանութեան և շատ հեռաւորներին՝ թէ Զեր: Մարդ-
կային ամօթոյ զգացմունք չ'են թոյլ տալիս մեզ
առաւել ընդպարձակուելու:

Եթէ անսահման ձեռնադրութիւնների համար
անբաւական է Սինօդն, անբաւական է և Զեր սրբագ-
նութիւնն ու ինձ հոգելոյս Հայրապետի հետ հրա-
պարակ է բարչում պաշտօնական հրատարակութեամբ,
որպէս զի հայագի հասարակութեան արդարացի ցա-
սումն քարընկեց լիսի մեր յիշատակին, կոչման և
մարդկային արժանաւորութեան, Դուք՝ Սինօդ և Տե-
ղապահն, անմեղ էք ձեռնադրութեանց գործում՝ որ-
պէս ընծայացուների ընդունակութեան, նոյն և թու-
ոյն չափակութեան վերաբերմամբ: Եթէ արդար էք,
շատ վաղուց Երեանի նահանգապետների բազմաթիւ
գրագրութիւնք գտնուում են Սինօդի ատենումն, որով
առաջարկուում են մէկ ընդհանուր կարգ-շտատ սահ-
մանել հոգեկորականների համար իւրաքանչիւր քաղա-
քի և գիւղի եկեղեցիների նկատմամբ, որպէս զի և
քաղաքական վարչութիւնն ըստ այնմ հարկատուների
արձակումն տնօրինէ: Ինչու միանգամ ընդ միշտ այս
գայթակղութիւնը չ'է վերանում: Եթէ կաթուղիկոսն
էր պատճառ, այժմս նա չ'կայ, ի՞նչու չ'էք հրատա-
րակում նոյն իսկ Արարատի միջոցաւ՝ թէ այս ինչ
քաղաք կամ զիւղ այսքան եկեղեցականից աւելի չը-

պէտքէ ունենայ, թող այլ ևս ժողովուրդն ՚ի զուր
խնդրարկութիւնք չ'առնէ: Գէորգ կաթուղիկոսի օրե-
րով սահմանուած կարգը պահպանուեց ուղղութեամբ:
Իսկ թէ Սինօդ և Տեղապահդ ունիք Զեր բաժին յան-
շանքը ձեռնադրութեանց գործում, ինչու էք ուրեմն
ինձ վերայ միայն մատնացոյց լինում, և այն այն-
պիսի ժամանակ, երբ առաւել քան երբէք ակնկա-
լութիւն ունիմ հասարակաց հայոց և հոգեոր վարչու-
թեան կարեկից վերաբերման: «Անմեղն ՚ի ձէնջ նախ
նա ընկեցէ քար ՚ի վերայ դորա»: Ակամայ կամքով
զնում եմ այսուեղ Զեր գերապատուութեան տասն
հատ ինքնածեռագիր նամակների օրինակներն Խորէն և
Աղաջանեանց քահանաների անուամբ՝ որոց վաւերա-
ցուցած օրինակներն զանուում են մօտս՝ հանդերձ
այլ շատ նամակներով և պարոն Մատթէոս Տէր-
Պօղոսեանցի խոստմնագրով քահանացուի առաջար-
կութեանց մասին, դոքա կարող են նմուշ լինիլ
Զեր խօսքերի և վարուց համաձայնութեանն: Ահա
նորանք.—

«Արժանապատիւ Խորէն աւագ քահանայի.

«Արժանապատուութեանդ գրած նամակը ստացայ և նո-
րա մէջ յիշածդ տիրացուների ձեռնադրութեան հրամանը
«հանելով ուղարկեցի Զեր նամակարեր մարդոց ձեռամբ, իսկ
«մնացեալ տիրացուների հրամանները հետզհետէ կ'ստանաք»:
«Զեր բարեացակամ Երեմիա եպիսկոպոս»:

«՚ի 29-ն յունիսի 1879 ամի
«՚ի Ա. Էջմիածին»:

«Արժանապատիւ Խորէն աւագ քահանայի
«ողջոյն».

«Զեր գրած երկու նամակները ևս ստացայ, թէ փոշ-
«տայիր ուղարկածն և թէ մարդով: Առաջարկած տիրացու-
«ների հրամանները պատրաստուելով ուղարկուում է ընդ
««ձեռն նամակաբերիդ, ողորմութեամբ Ամենակալին եմ առողջ
«և աղօթարար կենացդ առ Տէր»:

«Երեմիա եպիսկոպոս»:

«Յուլիս 20 1879 թ. յէջմիածին»:

«Տէր Խորէն Արժանապատիւ աւագ քահանայ
«ողջոյն».

«Գրութիւնդ ստացայ ուղարկածդ անձանց ձեռամբ,
««փութացայ կատարել փափագածդ,» ձեռնադրել հրամայելով
«յիշատակեալ տիրացուին, սակայն առժամանակ մի պի-
«տոյ է Զեր անվրդով սրտիւ սպասել, քանզի տիրացուն,
«որոյ աղագաւ գրած էր նամակդ՝ տակաւին արքունի հար-
«կաց ներքոյ է և այսօր իսկ ՚ի պատիւ Զեր պատրաստել
«հրամայեցի նորա արձակման օրագրութիւնը, որը կարի
««փութով կ'ջանամ ուղարկել, ուր հարկաւորն է, և երբ ար-
«ձակման հրամանը ստացուի, Զեր կամեցածը կատարելու
«այլ ևս դժուարութիւն կարող չէ լինել:

«Տեղս չգտնուելու համար գրում եմ Զեր ուղարկել
«հաճեցէք քանի մի զոյգ ճորապ»:

«Զեր բարեացակամ Երեմիա եպիսկոպոս»:

«1879 թիւ, 21-ն սեպտ.

«՚ի ս. Էջմիածին»:

«Արժանապատիւ Խորէն քահանայի

«ողջոյն.

«Արժանապատութեանդ յիս ուղարկած նամակը
 «ստանալով սրտի ուրախութեամբ ստացայ, որի համար
 «կայտնեմ շնորհակալութեանս հաւաստիքը երկտող գրու-
 «թեամբ նամակիս, ընդ որս և վերաբերութեամբ նամակաւդ
 «յիշած տիրացուների, որոց համար շտապել պէտք է, ընդ
 «ողջունիւդ ընկալ ողջոյն»:

«Աղօթարար Երեմիա եպիսկոպոս»:

«ՅՅ-ն սեպ. 1879 թ.

«ի յէջմիածին»:

«Արժանապատիւ Խորէն աւագ քահանայ

«բարեկամ մեր.

«Եյն յայտնի է մեզ եթէ Դուք որքան պատուով և
 «յարգանօք կվերաբերուեք մեր զէպի Զեզ ունեցած անկեղծ
 «բարեկամութեանը, իսկապէս զիտեմք, զի մեր առաջար-
 «կութիւն և խօսք ընդունելութիւն կզտնեն Զեզ մօտ, ուստի
 «գոյն համոզմամբ ևս և Գեր. Գրիգոր եպիսկոպոս սոյն նա-
 «մակարեր Յարութիւնի *) և Խեչօյի համար կառաջարկեմք
 «Արժանապատութեանդ, զի յանձնառու լինելով քահա-
 «նայ դառնալու գործերի մէջ, որքան հնարաւոր է աշխա-
 «տէք կամ իրանց զիւղի վրայ և կամ իւրեանց զիւղի մեր-
 «ձաւոր գիւղերի վրայ, քանզի մեք նայելով Սինօգում զորա
 «գործերին, յետ մնացած է, ուստի մեք երկուս ևս կյայտ-

*) «Հէնց այդ Յարութիւնն էր, որ ինձ խարեց, թէ Զեզ և Գրի-
 «գոր եպիսկոպոսին տուած է 400, և յետոյ էլ Զեզ եր խարել թէ իրը
 «500 ըուբլի ինձ է տուել Զեր անունով, որին հանդուցեալ Գրիգոր
 «եպիսկոպոսը դուրս էր արել, թէ «քո խօսքին չեմ հաւասում»:

«Նեմը արժանապատութեանդ սրտացաւութեամբ օդնել
 «գորան, հարկաւ Դուք հոդ կտանէք և ապա ըստ այնմ
 «կպատասխանէք. մեք Երկուսս ևս ողջ եմք Աստուծոյ Մեծի
 «կարողութեամբ, որ և նոյն կցանկամք Զեզ և Զերոց»:
 «Աղօթարար Երեմիա եպիսկոպոս»:

«29 դեկտեմբերի, 1879 թ. յէջմիածին»:

«Արժանապատիւ Հայր Խորէն

«Պատուական եղբայր».

«Ախքալակու գաւառի Սատուսայ գիւղացի Ստեփան-
 «նոս քահանայ Տէր-Ղազարեան Տէր-Խաչատրեանցն եկաւ
 «յէջմիածին իւր որդույ ձեռնազրելոյ համար իւր ծերու-
 «թեան պատճառաւ և արդարեւ մենք ևս աչքով տեսանք
 «նորա խորին ծերռեթիւնը, որ անկարող կլինի և է հովուել
 «առանց օգնականի, իրեն հաւատացեալ ժողովուրդը, ուստի
 «զրելով եղբայրութեանդ կ'ինզրեմ, որ նորա որդու գոր-
 «ծերը, որքան կարելի է շուտով ուղարկեք Սինօգին:

«Յուսալով որ Դուք արդարեւ չեք զլանալ կատարել
 «այս իմ խնդիրն և շուտով կուղարկեք զործերը,

«Մնամ վասն Զեր բարեմաղթու

«Երեմիա եպիսկոպոս»:

«ի 12-ն մայիսի 1881 թ.

«ի Ս. յէջմիածին»:

1. Ծանօթութիւն արտագրողի:

«Հանգուցեալ Գրիգոր եպիսկոպոսին ուղղած ինքնա-
 «ձեռագիր, որ նորա (Խորէն քահանայի) նամակի մէջ էր
 «ծրարած. —

«Գերապատիւ Տէր.

«Մանասեանցի մասին այդպէս եղաւ, իսկ տիրացու «Յարութիւնի ձեռնազբութեան մասին, դարձեալ ոչինչ չըս- «տացայ, որի հայրն մեծ մեծ խոստումներ էր անում Զեր «սրբազնութեան միջնորդութեամբ ոչ ապաքէն ես էլ ու- «բիշներին եմ խոստացել մինչև գործին կատարումն եմ «տուել. թող իրանց խոստումնք կատարեն լիովին:

2. Ծանօթութիւն արտագրողի:

«Հանգուցեալ Մամբէ վարդապետ (յետոյ եպիսկոպոս) «'ի միջի այլոց գրում է (նոյն Խորէն քայանային) ««Եջմի- «ածին գրած նամակիս պատասխանը երկու օր առաջ «ստացայ: Զեր վերաբերութեամբ նա (Երեմիա եպիսկոպոսը) ««գրում է, որ Դուք իրեն 1000 ըուբլի էք խոստացած, «եթէ Դուք Զեր խոստումը կ'կատարէք՝ նա (Երեմիա եպիս- «կոպոսը) պատրաստ է»»:...

«Արժանապատիւ Հայր Տէր Սարգիս.

«Զեր Դեկտեմբերի 25-ին գրած նամակն ստացայ, ես «ուրախութեամբ պատրաստ եմ կատարել Զեր ինսդիրը «Արքահամ Տէր Արքահամեանցի գործի վերաբերմամբ, մի- «այն այստեղ բոլոր գործալարներին յայտնի է, թէ Դորա «գործի համար մինչև այսու մրգան փողեր է մսիսիլ, իսկ «գործը իւր դրութիւնից շարժված անդամ չէ, ուստի կիսըն- «դըրեմ յայտնել ինձ թէ՝ եթէ ես աշխատեմ և այդ գործա- «տիրոջ իւր նպատակին հասցնեմ, արդեօք մի նիւթ կլինի՝ «մէջ տեղ, որով կարողանամ և ես շահել իմ գործակցաց «սիրտը, այսքանս շուտով յայտնեցէք:

«Սիրոյ ողջոյնս հանդերձ օրհնութեամբ մատուցէք «Զերայնոց, շնորհաւոր նոր տարի»:

«Զեր Երեմիա եպիսկոպոս»:

«Ի 5 Յունվարի 1881 ամի ի Ս. Էջմիածին»:

«Զերդ Արժանապատութիւն

«Հայր Տէր Սարգիս.

«Վեճակիդ քահանայացուաց գործերը վերջացաւ, միայն «հրամանները յետածգել իմ տալիս, որպէս զի գուցէ աջո- «ղացնեմ և Զեր փեսայի հրամանը նոցա հետ միասին ու- «ղարկեմ:

«Ճոճկան գիւղացի տիրացու Աւետիք Վարդումեանցը «իւր գործի համար խոստացել է երկու հարիւր ըուբլի, և «գործը իմ աշխատութեամբ արդէն վերջացաւ և շուտով «հրամանը կստանաք: Կ'խնդրեմ յայտնէք հրամանի համար «և աշխատէք նախապէս ստանաք երկու հարիւր ըուբ- «լին, յետոյ յայտնէք գործի վերջաւորութեան մասին, և «դրամները շուտով ուղարկէք ինձ, միայն թէ ամենայն կերպ «աշխատեցէք առաջ փողերը ստանալ և յետոյ հրամանը «ցոյց տալ:

«Մեծայոյս եմ Զեր վերայ, որ անպատճառ կ'կատա- «րէք: Սպասումեմ «զույի» ստանալուն:

«Ողջոյն և օրհնութիւն կմատուցանէք իմ կողմից Զեր- «այնոց, մանաւանդ սիրելի կարապետիդ»:

«Զեր Երեմիա եպիսկոպոս»:

«Նամակս վերջացնելուց յետոյ՝ գնացի Մանկունուն ինսդիրը, «որ օրագիրը կաթուղիկոսին ստորագրել տայ, բայց նա «մերժեց, ուստի Դուք շատակեցէք մի նամակ գրել Մանկու- «նուն, ես ևս կաշխատեմ»:

«Յ31-ն Օգոստոսի 1881 ամի

«'ի Ս. Էջմիածին»:



«Արժանապատիւ հայր Տէր Սարգիս

«Նիկողայոս Խեչանեանցի պսակի գործի համար, որ
«գլուխ եկաւ Ձեր միջնորդութեամբ և իմ աշխատութեամբ*),
«կցանկայի ինձ յայտնի բաւական ստացած գումարիցդ ան-
«մասն չ'թողնէիք ինձ:

«Ողջոյն Ձերայնոց և հարցանողաց:

«Մնամ վասն Ձեր միշտ

«Աղօթարար Երեմիս եպիսկոպոս»:

«Ի 22-ն մարտի 1882 ամի

«Ի Ա. Եջմիածին»:

«Հնդ իսկականացն համեմատ են

Սարգիս աւագ քահանայ «Աղաջանեանց»:

Բայց և այնպէս, Եթէ ամէնքս չ'քմեղ լինինք՝
ի՞նչ տեղից ստանայինք ուսեալ քահանայացուներ յետ
ընկած գիւղերի համար. չէ որ նոյն իսկ սրբազնն
Սինօդն է անօրինած իմ առ հոգելոյս Հայրապետն
յայտարարութեան համաձայն և հրամայած ընծայա-
րան բանալ և պատրաստել տալ տիրացուներին: Այդ
մասամբ եղել է իմ ժամանակ և պատահել է՝ որ մի
ընծայացու երկու տարուայ ժամանակ չորս անգամ
քննութիւն է տուած և ապա արժանացած առաջար-
կութեան: Իմ ոչ միայն Երևանի վիճակն, այլ ուր և
գտնուած եմ, կառավարելու ջերմեռանդութիւնն և
սէրը, դպրոցների և եկեղեցիների, հոգեորականների
և երեսփոխանների հաշիւներն և թեմական ատեան-
ների գործավարութիւնը բարեկարգելու տենչանքն

*) «Ծանօթ. Սուտ է, աշխատողն ինքն չէ եղեալ բայց երկու հարիւր
«ըուրի իմ գիտութեամբ Մամբէէ վարդապետն իրան ուղարկեց, իսկ
««Ես իրեն պսակակատար քահանայ ստացել եմ քսան և հինգ բուրլի,
«այն ևս ցանկայը որ իրան ուղարկէի:

այնքան մեծ են եղած, որ Եթէ ուրիշ ոչ մի վկայա-
բանող չ'լինի՝ առաջի Աստուծոյ և մարդկան առանց
խղճահարութեան, կ'համարձակիմ ասել՝ որ սրբազնն
Սինօդից ջատագովութեան և վարձուց ակնկալու-
թիւն ունէի՝ քան Սրբարատի խմբագրութենէն պա-
խարակութեան և պարսաւի: Անպարապ աշխատու-
թեամբ իմ բոլոր գործավարութեան ժամանակ այն-
քան գրած եմ եկեղեցիների, դպրոցների և այլ հաս-
տատութիւնների բարեկարգութեանց մասին յանձնա-
բարութիւններ, յորդորներ և պատուիրաններ՝ որի
չափով Ձեր անձնաւորութիւն՝ ում հաճոյանում է
Սրբարատի աշխատակից բանաբաղն, իւր կեանքի մէջ
այնչափ անգամ կարգացած չ'է: Եկեղեցեաց ամէն
անգամ այցելութիւն գնացածս ժամանակ՝ թէ Ախալ-
ցիոյ, Աղէքսանդրապօլի, Նոր-Նախիջևանի փոխանոր-
դութեանց, թէ Աստրախանի և Երևանի առաջնորդու-
թեանց պաշտօնատարութեանցս միջոց, այնքան ար-
դար վրէժինդրութեամբ և աններող խոտութեամբ
Աստուծոյ սրբութեան յարկերի և նոցա նուիրած
սպասների մաքրապահութեան, զգեստուց և զարդուց
վայելչութեանց հոգ տարած և հրահանգած եմ զքա-
հանայս՝ մինչև առակ դարձած է ամէն տեղ իմ ան-
համբերութիւնն սուրբ տաճարաց անմաքրութեան
համար: Եկեղեցական գումարների կերչաց ժանիք-
ներէն կորդելու փոյթու և եռանդս այնքան յայտնի է
յիշատակուած յաջորդութեանց և թեմակալութեանց
քաղաքների և շինաց բնակիչներին՝ որքան և բաղ-
մաթիւ են հասարակաց անարգութեան և պատաս-
խանատուութեան յանձնածս եկեղեցականների թիւն:

Սոքա ոչ միայն իշխանութեանս են յայտնի, այլ նոյն իսկ Արարատի «ազգային բաժնի» սերմանաքաղին, որոյ առաջնորդական պաշտօնավարութեանց ժամանակ Շուշիի վիճակում տաճկաց Մուխտարը և Օսման փաշաների, կրկէների հերոսների և այլ բազմազան ծաղրանկարների շրջանակուած պատկերներն են եղել կախուած գիւղական շատ եկեղեցեաց պատերից, ինչպէս ականատես և կենդանի վկայ սրբազան Մեսրովք Արք եպիսկոպոս Սմբատեանցն կ'հաւաստէ: Իմ կառավարած եկեղեցեաց մէջ միայն Շահրիար աւանի աղօթատան երկու հազար բուրլեաց չափով գումարն տասնաւոր տարիներ յառաջ երեսփոխանի և Շահսաթունեանց տան մերձաւորների կոկորդ անցած են ըստ վաղաւուրց սովորականին, որոց պարտագրերն ամէն խնամով ժողոված և առաջնորդական պաշտօնս թողնելու տարին վիճակային կոնսիստորիային յանձնած էի՝ իրաւաբանի միջոցաւ օրինական կարգով պահանջել և յանձնել ըստ պատկանելոյն: Վերոյիշեալ բազմաթիւ վայրերու եկեղեցիք՝ իմ պաշտօնատարութեանց ժամանակ, կամ արձակուելէս անմիջապէս յետոյ, քննուեցան և անխընամ գտնուեցան՝ թէ Հայրապետական իշխանութեան հետամուտ գրիչն և «ամուսնական խնդրոյ» հեղինակն իւր առաջնորդական արթուն գործունէութեանց արտացոլութիւնք իմ նոյնպիսի պարտուց մէջ տեսնել ցանկացաւ, և այն՝ պարոն Միսակ Արամեանցին գրաւոր յարգանք յայտնելէս յետոյ: Այս, չար ժամանակն և մանուկ իշխանի կառավարութիւնն պատեհ առիթ են ներքնագործութեան սո-

վորածին զրպարտութեան և առասպելաբան նկարագրութեամբ քինախնդիր լինել: Ի՞նչ և իցէ հասարակական պաշտօնավարութեանս շրջանակում մեղաւոր լինելուս մասին՝ որոյ վնասն ընդհանուրինն է, իբրև պատասխան բաւական համարելով վերոյգրեալքը՝ քանի մի խօսք ասեմ և հոգելոյս Քահանայապետի յիշատակին ստուեր ձգող Արարատի ակնարկութեանց և հաշիւներ տպելու մասին:

9.

Եթէ Արարատը նկատենք որպէս պաշտօնական հրատարակութիւն և նորա մէջ տպագրուածները սըրբազան Սինօդի գործերից քաղուած և Զեր գերապատուութիւնից՝ իբրև Տեղապահից և պատասխանատուից թոյլատրուած, ինչպէս և է իսկ չենք կարող հարց չ'առաջարկել՝ ի՞նչ նպատակաւ է Ղարաբաղի և Երևանի վիճակների շատ ձեռնադրութիւնների յիշատակութիւնն: Ի՞նչ խորհուրդ ունի վանքերի և էջմիածնի կալուածների անխնամ և վնասարեր հոգացողութիւնների նկատողութիւնն: Եթէ հանգուցեալ Կաթողիկոսի յիշատակին ստուեր ձգել է՝ այդ անձեւ կառավարութիւնների բոլոր տնօրինութիւններն եղած են Սինօդում և ոչ ուղղակի վեհարանից, ինչպէս և Արարատն բան առ բան յիշատակում է հրամանների իմաստներն: Այդ մեղագրական արձանագրութիւնն կազմել տուող և յարձակուող քաջութիւնն ուր էր այն ժամանակ՝ որ չ'զիմագրեց իւր քուէով, կամ գոնէ իւր որոշ կարծիքն գրաւոր ունի թողած Սինօդի անարդար կայացըրած օրագրութեանց մասին գիւղերի կապալատու-

ութեան վերաբերութեամք և Զարեքայ անապատի վա-
նահօր արդարացուցման պատճառաւ։ Յետին աստի-
ճան ապուշն անդամ Արաբատի անփաստ գրուած-
ներից եզրակացնում է այս անսուտ ճշմարտութիւնն
թէ՝ ներկայ վարչութիւնն ցանկանում է իւր ապա-
գայ անհարագատ գործողութեանց համար ազգայնոց
առաջին հաւատարմութիւն և արտօնութիւն վաստա-
կել։ Ըստ որում՝ եթէ լինէին կաթուղիկոսական զեղ-
ծըմանց դէմ գրաւոր բողոք և անհամաձայնութիւն
Սինօդի որկ է անդամի կողմանէ, կամ Զեր սրբադ-
նութեան, այնքան անխիզ ստութիւնների կար-
գում շատ հեշտ էր մի ճշմարիտ գոնէ դիմագիր յայ-
տարացութեան օրինակ ապագրել։ Չապադրուեցաւ,
որովհետեւ չ'կար, և չ'կար, որովհետեւ համերաշխու-
թեամք գործած են Սինօդի անդամք՝ ընդ որս և
Դուք և վեհափառ Հայրապետ։ Ուրեմն, ուղիղ տրամա-
բանութեամք ասելու է, եթէ պաշտօնական Արա-
բատն Մայր Աթոռոյ գերագոյն կառավարիչ, եկեղե-
ցական Պետին համարում է անհարագատ, գող, նոյն
պայմանի տակ է զնում և Սինօդի համօրէն անդա-
մոց՝ որոնք լուծ են այդ զեղծմանց դէմ և ազգի
առաջ պատասխանատու են իրեն գողակից։ Եւ ար-
դարե, մերձաւոր գիտակներն և նոյն իսկ սրբագան Սի-
նօդի անդամք վկայում են՝ որ վեհափառ Հայրապետն
էջմիածնի գիւղօրէից կապալատուութեան վերջին վճի-
ռն վերապահել է իրեն միայն նորա համար, ըստ
որում Դուք ամէն մի աճուրդի ժամանակ ունեցել
էք Զեր սեփական սակարկող անձնաւորութիւնը,
որին պաշտպան է հանդիսացել պարոն պրօկուրօն

օրինական ձեռց տակ, ուստի և կաթուղիկոսն չ'կա-
մենալով զրկել Աթոռն՝ իւր նախատեսութեամք պատ-
շած եղած անօրէնութիւնքն է անում։ Երբ այժմս
պարսաւանաց քար է ձգուում անցեալի յիշատա-
կին՝ ի՞նչ օգուտ են խոստանում ներկայի այն
ձգտումներն՝ օրինաւոր համարուած ձեերի շնորհիւ,
Սինօդի նախանդամիդ բարձրացնել անհատական իրա-
ւոնքով անկախ գործողութեան ամբիոնի վերայ,
և ի՞նչ հաւատափ երաշխաւորութիւն կայ ապագայի
առաջն այսօրուայ եղական կամքով գործուածների
արդարանալու մասին, քանի որ ազգընափիլ հօտա-
պետի արածները դատավիետուելով՝ անկանոն և վա-
ստակար են նկատուում։ Ո՞վ է կշռել Կրիտիդայոսի
արդարութեան նժարում այժմեան գործողիդ հաւա-
տարմութիւնն և բարեխղճութիւնը համեմատութեամք
անցեալ վաստակաւորի աշխատութեանց, և վերջինիդ
աւելի ուղիղ գտել։

Միթէ յայտնի չ'են շատերին՝ որ տեղի ունե-
ցած անբաւականութիւնների մեծ բաժինն յառա-
ջացաւ նորանից՝ որ սրբազն անդամները ծախսա-
րաբներին արգելում էին աւելորդ և մեծագումար
ծախսարարութիւնք, ինչպէս նոր պարտիզան պահ-
պանելն տարեկան 300 ըուբլի վարձով, աւելորդ
ծառաներ վարձեն, պրօկուրօրի կացարան նորոգելն,
Զեր 600 ըուբլի սննդագրամի վերայ այլևս նոյն չա-
փով յաւելուածն, չ'նայելով՝ որ կերակրոց ամենա-
տեսակ նիւթեղէնք սաղցուում են Զեր կացարանում
սեղանի համար ազարակից և տնտեսարանից, և այլն,
և այլն։ Միթէ մոռացուած են ամէնքի համար՝ որ

սրբագան անդամները խստիւ պահանջում էին Մայր Աթոռոյ պարտապահներից, որոց մի մասն և Սինօղի պաշտօնատարների շրջանումն էին, իրենց տալիքն և Դուք թոյլատրում էիք անպահանջ մնան։ Ուրեմն, այպիսի տիսուր հանգամանքներում ոչ ոք մեղաւոր չէ, եթէ ոչ օրէնքն. ըստ որում որոշ շրջանակ չէ զծած ամենեցուն պարտուց և իրաւանց համար, այլ թողած է Զեկ նմաններին սահման հատանել իրենց համար քմահաճութեամբ։

Քանի որ էջմիածնի վանքն մուտք է գտած՝ նախնաւանդ վանական կանոններին հակառակ, մէկի փոխարէն շատ խոհանոցներ, միաբանութեան անդամներին առանձին քսակ և թոշակ, զանազան գոյնի և արժէքի ագանելիք, և այն, և այն. անհնարին է՝ որ տրտունչներ չ'իմին վեհարանի կարգէ գուրս ծախսարարութեանց մասին։ Այդ թոնթորանք եղելէն ամեն կաթուղիկոսի դէմ՝ սկսած գարուս սկզբից, անգամ ամենէն չափաւոր և ազբատիկ սեղան ունեցող Մատթէոս սրբազնագոյն Հայրապետի դէմ։ Տէր Մակար կաթուղիկոսն իւր սակաւորեայ գահակալութեան ժամանակ երկու անգամ պատրաստութիւն է տեսել պարսից արեգակնակայլ Շահի ընդունելութեան համար, թէև մի անգամ է հիւրասիրուած. իտալացոց արքայորդոյ. Գիրս նախարարի եղբօրն, կառավարչապետի, քանիցս անգամ նահանգապետի և այլ պատուաւոր այցելուների։ Դոցա անուամբ ջնուած իրեղէնք վեհարանին են յանձնուած այնտեղ հիւրասիրուելուն համար և նորա ծախսերի հաջուին են դրուած. թէև դոքա յատկապէս վանուց պատկա-

նած են եղել։ Այսու հանդերձ չ'կարողանալով արդարացնել վեհարանի տնտեսի անյագ յափշտակասիթութիւնն, պէտքէ ասեմ հոգելոյս Հայրապետն եղել է միշտ համեստ և ժուժկալ կերուխումի մէջ։ Եւրոպական ըմպելիք և սղագին անուշեղէններ կամ ազգի ազգի աղանդերներ անմատչելի են եղած և անգամ խորշելի, ուստի նորա անունով գնուածներն մեծ մասամբ միաբանութեան պատուաւոր անդամների սենեակներումն է գործադրուած, մանաւանդ նոցա հիւր ունեցած միջոց, քան թէ կաթուղիկոսարանում։ Գիւղացւոց պատուելիներէն շատերը սովոր են եղել այս և այն տեսակ եւրոպական ըմպելի իբրև գեղ վեհարանից ձրի ձեռք ձգել՝ քան շուկայից զրամով գնել։ Թէպէտե հասարակաց բամբասանքն մեծածախս գնուած անուշեղէնների, մրգեղէնների, աղանդերների և ըմպելիների գործադրութեան այլ և այլ տեղեր ևս են յիշատակում գիւղամիջին։

Վեհարանի այդ տեսակ անհաջու և շուայլ վատնողութեանց համար յիշատակութիւն արած ժամանակ ազգային բաժնի կարկատողն չ'է զանց արած ծանօթութեան մէջ ինձ յատկացնել մի պատմութիւն՝ որ ապացուցանում է որպէս թէ իրօք եղած են նոքա։ Ես ոչ ոքի ներկայութեան՝ որպէս հաւասար տեղեակ, չ'եմ ասած և յիշած կախէթու մի բուրլիխանոց գինու հազարաւոր շիշեր այս և այն տանից ծախուելու են հանուած, այլ ցաւօք սրախ Մինօղի ատենում կրկնած եմ՝ որ կան քանի մի անձնաւորութիւնք՝ որոնք իրենց համար արուեստ են արած զրբարտութիւնք և բամբասանք վեհարանի անուամբ

տարածել և մինն նոցանից գինու շիշերի պատմութիւնն է: Երբ 1891 թուականի ծաղկազարդ կիւրակէ օրն լուր են բերում՝ իրը Վաղարշապատի պարտիզի հիւրանոցում կախէթի լու սեաւ գինի են վաճառում՝ իւրաքանչիւր շիշն մի բուբլիի, և աւելացնում՝ են՝ Բէրքի ու Սմբատ-Մամիկոնի տանիցն է, որոնք ստացել են վեհարանից. Ներսէս սրբազնն եպիսկոպոսն իւր Թէոս ծառային ուղարկում է՝ ինչպէս և լինի, փաստի համար մի շիշ գինի գնէ և դառնայ: Որքան է լինում եպիսկոպոսի զարմանքն՝ երբ սպասաւորն գալիս և ասում է՝ սուտ է բոլորովին, Ապրիլի մէկի խօսքեր են: Եւ սոցա նման պատումներն անթիւ են և հրատարակուում են այն տանից՝ որոյ աշխարհալուր համբաւն բամբասարան է և բնակիչքն ազգային շահերի սրտացաւ: Բայց և այնպէս, այս բոլոր ասացուածների հանդէպ բաւական է միմիայն Զեր սրբազնութեան գովասանքն՝ տրուած վեհարանի տնտեսին գոների կնքելու օրն, այն տան ամենայն բարութեամբ լի և սպատարուն լինելու վերաբերութեամբ, մանաւանդ կախանատան՝ որոնք այլովքն հանդերձ հետդիետէ տեղափոխուեցան Զեր սենեակ և Վաղարշապատու քանի մի յայտնի բնակիչների տներ, որպէս զի ապագայումն առաւել նախանձաւորութեամբ քարածիդ լինիք յաւերժացելոյ յիշատակին:

Թող ներուի ինձ սոյն հատուածը կնքելու համար, աներկիւղ վստահութեամբ, մանաւանդ թէ ջրեմեռանզն բաւականութեամբ վկայել և յիշատակել՝ ի բարին հոգելոյս Տէր Մակար Հայրապետի յետագայ գորովալիր խօսքերն, «Սուրբ Աթոռոյս միաբա-

նութիւնը շատ վշտեր և խստութիւններ տեսած է, պէտքէ նորան միսիթարել և հայրօրէն ինամարկելու: Այս, վկայել՝ որ հասարակաց սեղանատան բարեկարգութիւն, հիւրանդաց ինամատարութիւն, միաբանութեան ոռնկադրամոց կրկնապատկութիւն, ճեմարանի առաջադիմութեան ուշադրութիւն, վարքու բարքի արթուն հսկողութիւն, հնաւանդ կարգաց անեղծ պահպանութիւն, լաւերին խրախոյս, վատերին արհամարհանք, վանական գոյքերի և եկամուտ արդեանց ինայօրէն գործադրութիւն՝ այլովքն հանդերձ նորա գիշերաջան հոգերին էին ըստ ներելոյ հանգամանաց, ուստի և մեծ մեղք Արարատի մրուտողներին իրենց բարւոյն գիտութեամբ կամակոր յիշաչարութեանց մասին:

Է.

Թէպեսև միտք չ'ունէի Արարատի մասնաւոր խնդիրների նկատմամբ արած ակնարկութեանց և նորանցից հանած մտացածին եղբակացութեանց պատասխանել բայց համառօտիւ յիշատակեմ յետագայքն, որպէս զի անձտութիւնք ուղղուած լինին: Զեր սրբազնութեան Բեսարաբիայի համար առաջնորդ նշանակելու լուրը սուտ չէ. նոյն իսկ Դուք ինձ խնդրած էիք Կաթուղիկոսին միջնորդել դեռ 1889 թուականին Զեր ուղարկել Թիշնե, ըստ որում ընդ երկար էջմիածին մնալով ձանձրացած էիք: Ես վեհափառ Հայրապետին միջնորդած էի և հաւանութիւն ստացած, ինչպէս և Զեր տեղեկութիւն տուած էր ինքն հոգելոյսը, բայց յետոյ, երբ ուրիշ միջնորդ

ևս՝ այսինքն պրօկուրօր, նոյն խնդիրը կրկնած էր, վշտացել էր և թողել անուշագիր։ Ոմանց ասելով՝ ինչպէս և հաւանականէ, Նոր-Նախիջևանից մասնաւոր նամակներով այդպիսի մտադրութեան մասին ակնարկներ են եղել՝ թէ 1882 թուի սրբայլոյս միւռնի օրնութեան ժամանակ, Նալբանդեանց Միքայէլի քոյր տիկին Բէրսարէ ընծայած է յանուն տաճարին իւր զուտ ոսկի կամարն և Զեր ծանօթութեամբ անյայտացել է ու նորան ընկալագիր չ'է տրուել այս տեղեկութիւնն Վահրամ Եպիսկոպոս Մանկունոյ միջոցաւ հասել է Տէր Գէորգ Վեհապետին, ուրեմն այդպիսի մի անուանարեկ անձնաւորութեան առաջնորդ կարգուեն պատուարեր, չ'համարելով իրենց, մանաւանդ որ նորա ցանկանում էին ունենալ դպրոցական կառավարութիւնից տեղեկութիւն ունեցող մէկ բանիմաց ոք և ոչ անզրագէտ, թախանձել են այդ որոշումն անկատար թողնել։ Ինչիցէ, Զեր տեղափոխութեամբ ոչ մի խումբ ինձ Տեղակալ տեսնելու չ'էր, այլ գերապատիւ Մեսրով սրբազն Արք Եպիսկոպոսին՝ որին նոյն խակ սրբազնագոյն Կաթողիկոսն առակաւոր ասացուածով 1890 թուականի միւռնօրների օրերում յայտնած էր և բացատրած այն առիթներն՝ որոնք Նորին Բարձր սրբազնութեան Շամախի գնալու պատճառ գարձան և Զեղանից ծածուկ չ'էին, ըստ որում Տէր-Յովսէփեանց պրօկուրօրի հեռատեսութեանց շնորհիւ Զեր համար ապագայի առաւել երկար ասպարէզ էր պատրաստուում սրբազն Սմբատեանցի բացակայութեամբ։ Որովհետեւ խօսքի կարգն եկաւ խումբ կազմա-

կերպելու մասին, ներեցէք սրբազնն Հայը, քանի մի հարցմունքներ առնել Զեզ. Ա. ճեմարանի խոռվութիւնն ումնով բարձրացաւ և ի՞նչ պատճառով պարոն պրօկուրօրը գաւառապետից Սինօդի գրած հաղորդագրութիւնն յետ ստացաւ և վերադարձեց Վեհափառին՝ որ որոշել էր աղմկարար լսարանականների արձակումն, և կամ խոռվարար աշակերտաց խնդրագրերը ով էր մատուցանում Կաթողիկոսին և թևածելով խնդրատուներին՝ միջնորդի գէր էր կատարում։ Բ. Արիստակէս եպիսկոպոս Սեղբակեանի «Ամուսնական խնդրներն» ինչու տպուեց աճապարանքով կից ճեմարանական խոռվութեանց՝ որոյ հեղինակներն օր և գիշեր Զեր, նորա և Գալուստ դպրի սենեկում խորհրդի էին գումարուում, տպուեց՝ և այն առանց ըստ սովորական կարգի, Կաթուղիկոսի կանխագոյն գիտութեան իբրև կրօնական խնդրոյ վերաբերուած հրատարակութիւն։ Գ. Վեհափառ Գէորգ Հայրապետի մահուան և Մակար Կաթուղիկոսի ընտրութեան գործն, նոյն խակ բարեյիշատակ Վեհապետի հոգին աւանդած օրն, ինչու Զեր սենեկից վեհարան եկաւ և ի՞նչ անհրաժեշտ կարևորութեան պատճառաւ տարուած էր Զեր կացարանն։ Դ. Ո՞վեր և ի՞նչ նպատակներից առաջնորդուած երևանի նորեկ նահանգապետ պարոն Ֆրէյգէին Կաթուղիկոսի մօտ ճաշելէն յետոյ, Ապրիլ ամսոյ սկզբներում, տանում շրջեցնում էին Էջմիածնի նորակառոյց տպարանն և ին ուսումնարան փոխադրուած Սինօդի տեղաւորութիւն, և առ սրբազնագոյն Քահանայապետն բաղրախառն տըրտուջներ արտայայտում թէ Սինօդական նոր շինու-

ածի չ'ձեռնարկելն ասլացոյց է առ կայսերահաստատքարձրագոյն ատեամն արհամարհանքի և անհամակրութեան։ Դոյնպիսի բամբասախառն զրոյցներ լինում էին մշտապէս ամէն ականաւոր օտարազգի այցելուների՝ առաջ, որպէս թէ ծերունազարդ Հովուապետի անժամանակակից հասկացողութեան վերայիւրեանց խելքով դորանով ստուեր բերեն։ Եւ Ե. Հովուապետի մահուանից երկամսեայ օրեր յառաջ սուս լրագրութեանց մէջ հրատարակելն թէ նա մերձ ՚ի մահ հիւանդ է, յիշողութիւնն կորցրած, և այն, և այն, ում ճարապիկ հնարիմացութեամբ էին և ի՞նչ նախատես խորհրդով։ Սորանք ամէնն ի՞նչ տեսակ նախապատրաստական կազմակերպութեան արդիւնքներ էին։ Թէ որքան ճշմարիտ է կաթուզիկոսական մահուան և ընտրութեան գործի Զերսենեկից դուրս գալն և Հայրապետի մահուանից քանի մի օր յառաջ Զեզ մօտ տարուին՝ կ'հաւաստէ իմ առաջարկութեամբ և պարոն Գաբրիէլ Սմբատեանցի վկայութեամբ Սինօդում կազմած արձանագրութիւնն։

Ես Սինօդի անդամներ առաջարկելու երբէք և երբէք խօսք արած չ'եմ, ոչ ատենումն և ոչ արտաքոյ, միայն Մայիսի 20-ին Սինօդում հարցրած եմ Զեր գերապատութեան թէ՝ դուրս խօսում են անդամների առաջարկութեան մասին՝ ուղիղ է թէ ոչ։ և պատասխան եմ ստացած. «Այդ իմ գործն է՝ առաջարկել եմ թէ ոչ, առաջարկելու եմ թէ ոչ, այդ մասին հաշուատու չ'եմ»։ Դորանից յետոյ նոյն իսկ օրն ուղարկուած է եղել Սինօդի չորս անդամներին հեռագիրը Տէր նախարարի անունով և 23-ին գրու-

թիւն պարոն կառավարչապետին կովկասու։ Նոյն իսկ գրուածքների իմաստն յայտնի ցոյց է տալիս՝ որ և միւս սրբազն անդամների ինձ հետ յօժարութիւնն եղել է Սինօդումն՝ իբրև կաթուզիկոսական ատեան և խորհրդարան, տեսնել միմիայն Նորա-ազգի Հայրապետի առաջարկած անձնաւորութիւններին։ Ուրեմն, չ'ը կարող տեղի ունենալ որկիցէ անդամի կողմանէ առաջարկութիւն Զեր սրբազնութեան՝ անդամոց պակասորդ թիւն լրացնելու մասին։

Քանի որ անգամոց առաջարկութեան վերայ առարկութիւն եղաւ՝ ՚ի դէպ եմ համարում յառաջ բերել այստեղ մի մասնաւոր պատմութիւն։ Մի օր, կարծեմ Մայիսի 8-ին, Սրբուակէս եպիսկոպոս Սեղմակեանի հետ առանձին տեսակցութիւն եմ ունենում։ Նա ինձ զարմանախառն յիշատակում է անդամներիս Պօլսոյ Պատրիարքին բողոք գրելը նորերի առաջարկութեան մասին և վշտանում է՝ որ այդ յատկապէս իւր դէմ թշնամանք է՝ յառաջացած անձնական հակակրութիւնից։ Ինչու Մակար Սրբ եպիսկոպոսն կարորդ էր Մամբրէ վարդապետին առաջարկել Սինօդի անդամութեան, իսկ Երեմիա եպիսկոպոսն՝ որ գարձեալ Տեղակալ է, չ'է կարող նոյնն առնել, ասաց նա։ Ես պատասխանում եմ։ Սրբազն եղբայր, թէ ես առ Զեզ համակիր եմ՝ բաւական է ապացուցանելու Աղափիրեանց Գրիգոր սրբազնի առիս նամակն՝ որով նա ինձ յիշում է 1889 թուականի մեր մէջ եղած ընտանի խօսակցութիւնն ապագայ ընծայացուի մասին և յանուանէ պնդում է Զեզ չ'ը մոռանալ, ըստ որում Գուր իմ ընտրելին էք։ Այս

բաւականին փաստ է՝ որ ես առ Զեզ մտերիմ եմ։ Մնաց Ներսէս սրբազնն. ես Կաթուղիկոսի եօթնօրէքի ճաշին ինձ մօտ կամենում էի Զեզ և նորան հաշտացնել, բայց գժբախտաբար Տեղակալ սըրբազնն ճաշի չ'գալով մի կերպ տխուր տպաւորութիւն արեց ինձ վերայ և ես չ'կարողացայ նպատակիս համնել։ Խնդրեմ, Դուք իմ և նորա մէջ միջնորդ հանդիսանաք ամէն աջ ու ձախ զրոյց դարձած առարկութիւնների մասին, և ապա նախազծած ծրագրով միամտութեամբ սրտի և հոգւոյ գործենք։ Իմ որոշակի դիտումնս է՝ միաբանութեան և Սինօդի անդամները հանդերձ Ուուսաստանի առաջնորդներով միևնոյն նպատակին համնելու ձգտին։ Յիշատակում եմ ապա Զեր երգումն Սինօդի ատենում առանց անդամների խորհրդին ոչինչ չ'տնօրինել և պատգամաւորներին տուած խոստումն՝ ամէն բան նոյնութեամբ պահպանել մինչև ազգընտիր Հայրապետի եկեղեցւոյ կառավարութեան գլուխ անցնելն։

Այս խօսքերից յետոյ սրբազն Արիստակէսն ասաց. «Լաւ եղաւ որ Երեմիա սրբազնն չ'եկաւ ճաշի, ես գեռ ոչինչ՝ ինձ կարողանում եմ պահպանել իբրև անտարեր, պաղարիւն ամէն մէկի հետ, ամէն ժամանակ նոյն անփոփոխ դիրքով կարող եմ մնալ, բայց ասացէք խնդրեմ, ի՞նչ էր այն օրուայ տարօրինակ և գաղտամիտ խօսակցութիւններն։ Ի՞նչ էին այն նահապետ աբեղայի, Պետրոս Սիմէօնեանցի, Ներսէս և Արիստակէս եպիսկոպոսների արծաթի դրացի, ոսկի բարեկամ, բոլեանտի հարևան և այլ

նման խօսքերն¹)։ Թէպէտե Մկրտիչ սրբազնն և այլք ձեանում էին չ'լսող, բայց ես անուշագիր չ'էի. գուցէ Երեմիա սրբազնն այդ խօսքերը չ'կարողանար տանել և անախորժ գէպքեր պատահէին»։ «Ես յետոյ իմացայ՝ որ մի խումբ մարդիկ՝ ինչպէս Պետրոս Սիմէօնեանց, նահապետ աբեղայն և իրենց դրացի Արիստակէս եպիսկոպոս Դաւթեանի կողմից նկատուած են եղել իբրև իմ երգուեալ կուսակիցներ։ Ինչեկցէ։ Դուք օր օրի վերայ ձգձգերով մեր առանձին մանրապատում խօսակցութիւնն և բացատրութիւն՝ սպասում էիք Տփխիսից մասնաւոր նամակի անդամոց առաջարկութեան գործը պիտի յաջողուի՝ թէ ոչ երբ ստացաք սպասուած տեղեկութիւնն, այլև մերժեցիք տեսակցութիւնն նոյն եպիսկոպոսի բերանով որ քանիցս ինձ առանձին ասած էր թէ՝ «չ'գիտեմ

(1) Երբ Օրմանեան Մաղաքիա սրբազն եպիսկոպոս բնակուում էր նախկին տեղապահական կացարանում Արիստակէս եպիսկոպոս Դաւթեան մոմատուն ասուած վերնայրկում, իսկ Գառնակերեանց Գրիգոր վարդապետայժմ եպիսկոպոս, նորա ներքնայարկում, Պետրոս Սիմէօնեանցի և նահապետ աբեղայի մտերժական խօսակցութեան ժամանակ նոցանից առաջինն անուանուել է բոլեանտի դրացի, երկրորդն ոսկի և երրորդն արծաթի։ Այս խօսքերի իմ սենեկումս յիշատակութիւնն ունկնդիրներին ապացոյց համարուեց կազմակերպուած մի խմբի ղեկավար լինելս և նոցա ջանահնարութեամբ վեհագոյն աստիճանի հասանելու հաւատընծայութիւնս։ Ողորմելի մարդիկ, որոնք արտայայտութիւն են հանրածանօթ առածին։ «Ընկերիդ ի՞նչպէս կ'ձանաչես. ի՞նչպէս ինձ»։

Երեմիա սրբազնն ինչու և վաղն է ձգում Զեր հետ տեսակցութեան խնդրի կատարումը»: Դառնամ այժմս ուղիղ նախագծած կարգին:

Ը.

Ինչ որ վերաբերում է Սինօդի առանձին մասներից հաղորդագրութիւններ արձակելուն՝ որոնց ազգային բաժնի հաւաքողն համարում է անհնագանդութեան և ինքնազլիսութեան ապացոյց Տեղակալական բացորոշ հրամանների դէմ, պէտքէ յայտնաշպէս վկայեմ: Ինչպէս Զեր սրբազնութեան, բոլոր անդամոց, ատենապղբին և գործավարներին լաւ յայտընի է, շատ, և շատ վաղուց սովորութիւն է եղել Սինօդում մասերից հրամաններ արձակել և անկախաբար գործել, և այն շատ անդամ մի և եթ անդամի յանձնարարութեամբ՝ առանց միւսների նախընթաց տեղեկութեան և համաձայնութեան: Իմ Երեանից Սինօդ փոխազրուելու օրից սկսած առանձին ջանք ունեցած եմ՝ յատուկ յանձնարարութեամբ Հայրապետի, ամենայն կարևոր խնդիրներ օրագրութեամբ վճռելու, որոյ նախարարակը յառաջագոյն կարգացուի բոլոր ատենականներէն և մինն ինքնաձեռագիր վերան մակագրէ «գրել յօրագիր», որպէս զի ապագայ տարածայնութեանց առաջք առնուի, և ոչ անդամներից իրաւունք չընենայ ասելու՝ ես այս ինչ գործին տեղեակ չ'եմ, առանց իմ վարկման է օրագիր կազմուել, և այս:

Բացի սորանից, պահանջած եմ՝ Երբ անհրաժեշտաբար մասներից պէտքէ թուղթ արձակուին՝

որով կամ կրկնուում են արդէն կազմուած օրագրով արձակուած հրամանի կատարումն պահանջել կամ լրացուցիչ տեղեկութիւններ հաւաքել կամ ուղղակի մի պաշտօնեայ-գործակալ կանչել, և այն, և այն, անպատճառ նախարարակը կարգացուի և բոլոր անդամք՝ օրագրութեան նման, նորա լուսանցում ստորագրեն իբրև համաձայնութեան ապացոյց և նշան-մակագրուի վերան «կատարել» բառս, և ապա յանձրնուի մատենավարին նորա հրամանն արձակելու: Եթէ պատահի այդպիսի դէպքում որևիցէ անդամի կողմից անհամաձայնութիւն, այն ժամանակ բազմութեամբ ձայնից 'ի կատար ածուին: Զերդ գերապատութեան բոլոր բացակայութեանց ժամանակ արձակուելիք օրագրութեանց և մասներից գնալիք արձակ պատուիրանագրութեանց նախարարակներն մատուցուած են Զեր տեսութեան և ստորագրութեան: Եթէ պատահել է որև է նախարարակի կամ օրագրի վերայ չ'էք բարեհանել ստորագրել՝ ձայների բազմութեամբ կօլլեցիալ ատենաներին սովորական ձեռվ կատարուած են, և ոչ միայնակ իմ կամահածութեամբ, ինչպէս Արարատի մէջ ճգնած են ցոյց տալ: Բայց թէ առանց ատենապետի համաձայնութեան Սինօդի՝ իբրև կայսերահաստատ հոգևոր բարձրագոյն ատենի, գործողութիւնք կհամարուին կամահածութիւն, առաւել հեշտ է, խղճի վկայութեան ընդունակ և հասարակաց կարծեաց ձեռնտու անձնահածութիւն, կամայականութիւն անուանել միայն և եթ Սինօդի նախանդամի առանց միւս ատենակալաց հաւանութեան արարքն:

Ահա այսպիսի յարգութեամբ ձայնի բազմութեան և նախարարակի վերայ նախըթացաբար անդամոց կողմանէ ստորագրութեան հրաման է վնացած էջմիածընի վանական կառավարութեան ըստ Արարատի նկարագրութեան՝ «Մայր Աթոռի միաբան ծերունի և հիւանդու Մինաս վարդապետի համար՝ որ Հաղարծնի աղքատ վանքիցն էր եկել և տպրուստ խընդրում» չընդունել, պատուիրելով նորան՝ վեհափառ Հայրապետի հաճութեամբ իրեն մասին եղած նախկին կարգադրութեան հնագանդի, և այդ ահա թէ ինչ յարգելի պատճառներով։ Նախ՝ Մինաս վարդապետ բնիկ միաբան է Բայազիտու Երեք խորան-Խւչքիլիսէ սուրբ Կարապետ վանքի։ Այդ տեղից Ներսէս կաթուղիկոսի ժամանակ սարկաւագական կոչումով էջմիածին է փոխուում և ձեռնադրուում վարդապետ, բայց մի միջոց մնալով՝ շրջմոլիկ կեանք սիրելուն համար, թողնում է էջմիածինն։ Ընդ երկար այս և այն կողմ դեգերելուց յետոյ՝ սուրբ Երուսաղէմի պատրիարքի միջնորդական գրով վերստին գալիս է մայր Աթոռում մնալու. սակայն վեհափառ Հայրապետն նորա անցեան աչքի առաջ ունենալով՝ հրամայում է գնալ Բայազիտու վանք՝ որի մասին և Սինօդից ստանում է գրութիւն։ Այստեղ ևս առ ժամանակ մնալով՝ պատճառ է բերում վանահօր իրեն չ'ընդունելն և եղանակին չ'տոկալը, վերադառնում գնում է նոր Բայազիտ քաղաք և շրջակայ գիւղերն իւր վաղեմի ծանօթների և աղգականների մօտ բնակելու, որոնք զգուած էին իրենից և առանձինն արտնջում։ Վանական կեանքին անսովոր այս վարմունքը յառաջ է

բերում միամիտ գիւղական հասարակութեան մէջ բամբասանք, գայթակղութիւն և բողոք առ գործակալ քահանայն, սա առ Կոնսիստորիայն և վերջինս առ Սինօդ։ Ընդ երկար գրագրութիւններից յետոյ հոգելոյս կաթուղիկոսն զիջանելով վարդապետի թափանձանաց՝ յանձնարարում է Սինօդին կարգել նորան Սևանայ վանքին միաբան։ Ստանում է հրամանն, գնում է ամարային երեք ամիս ժամանակ մնում անապատումն և գարձեալ աշնանային օդոյ խստութիւնն առիթ բերելով՝ Բայազիտ քաղաքն է փոխառուում, ուր հանգիպելով Հաղարծնի վանուց վանահայր Պօղոս վարդապետին, գնում է նորա վանք և սորա միջնորդութեամբ առ Զեղ՝ առանց Սինօդի հրամանի, հակառակ Հայրապետի հաւանութեամբ նախորդ անօրէնութեան, ընդունուում է միաբան սուրբ էջմիածնի։ Եւ երկրորդ՝ Մինաս վարդապետի ընդունելութեան առիթն ոչ թէ նորա կարծեցեալ «ողորմութեան և կարեկցութեան կարօտաւոր հիւանդագին կացութիւնն էր», ինչպէս կարկատում է Արարատի ազգային բաժնի սերմանաքաղն, այլ վառն վառաց Զեր սրբազնութեան և խմբի ապագայում միաբանութեան կողմից ծայնատու լինելու հաւանականութիւնն՝ իբրև ծերունի-վաղաւուրց միաբան։ Եւ այս վերջին հանգամանք չ'էր ծածկուում անդամոց նախատեսութիւնից՝ որքան և Դուք ձևանում էիք կարեկից և գթառատ խնամակալ, որպիսի շնորհ բնաւին չ'էք ցոյց տուած առ Մայր Աթոռոյ հարաբնաւի գատ, կարօտաւոր և ծերունի միաբաններն. հաւասար լինելով՝ որ նոքա Զեր ընդունակութիւն և արժանիք

լաւապէս գիտեն:

Երբ յայնուեց Մինաս վարդապետի միաբան համարուելու նպատակ՝ յառաջ բերեմ այստեղ միքանի նմանօրինակ իրողութիւններ, որովք կարդարանայ հասարակաց կարծիքն և անդամների՝ մանաւանդ իմ և Ներսէս սրբազնի, նախատեսութիւնն թէ՝ Դուք, սրբազն Տեղակալ, Մինօդի տնօրինութիւններ և հաւաքական համերաշխ ձայնից վճիռներ արհամարհում էիք եղակի գիտաւորութեամբ և ջանահնարութեամբ ընտրողական կարելիութիւն պատրաստելու յօդուտ Զեղ և Սեղբակեան սրբազն աշակցին: Քանիցս անդամ՝ յիշում էք անշուշտ, յանձնեցիք Մինօդին՝ որ մասնից բացարձակ հրաման գրուի և Եփրեմ արեղայ Սուքիասեանին Նոր-Նախիջևանի սուլքը Խաչ վանքի վանահայրութիւնից կանչուի սուլքը էջմիածին: Անդամներն օրինաւոր պատճառ գտնելով՝ որ նա վեհափառ Հայրապետի հաճութեամբ և օրագրական սահմանադութիւններով կարգուած է վանահայրութեան պաշտօնի, և յատկապէս նախազան տեղւոյն հրկիզուած դպրոցական և այլ շէնքեր վերանորոգելու յանձնաժողովին, չ'կարողացաւ համաձայնիլ սոսակ ձեռվ նորա փոխադրութեան: Հակառակ նոցա բերել տուիք և նորա տեղ կամեցաք ուղարկել Պետրոս վարդապետ Այվազեանին, որ ըստ աւագութեան կարող էր ձայն ունենալ միաբանութեան կողմից և Զեղ ձեռնուու չ'էր. բայց նա Նախիջևան չ'գնալով՝ ուղարկուեց Ագուլիսի Թովմայ առաքելոյ վանքն: Յովսէփ վարդապետ Խարազեանին՝ որ նոյնպէս ձեռնուու չ'էր Զեղ, գիտմամբ Ղարսի

յաջորդ կամեցաք նշանակել, թէև անդամներն առաւել յարմար էին համարում—Ամատունի Սահակ արեղային: Երբ Խարազեանցն չ'յօժարուեց գնալ՝ նշանակեցիք Գեղարդայ վանքի վանահայր և Նահապետ արեղային ուղարկեցիք Ղարս, այն ինչ նորա մասին՝ ըստ նախընթաց Զեր համաձայնութեան, չորս անդամոց ստորագրութեամբ օրագիր էր կայացել ուղարկել Նոր-Նախիջևան քաղաք, իբրև առաւել յարմարաւոր տեղական գպրանոցի վարչութեան համար: Նոյնպիսի նպատակով Եղիշէ վարդապետին ուղարկել տուիք Հառիճոյ վանքին վանահայր և Սահակ վարդապետ Բաղդասարեանին պատժելով՝ հեռացրիք Սևան, ապա Սաղինու վանք, որպէս զի Զեղ ճանաչողներն հեռուից անվտանգ լինին: Գէորգ վարդապետ Մարտիրոսեանին՝ որ դարձեալ Զեր կուսակցութեան չ'էր պատկանիլ, ուղարկեցիք Հոփիսիմէի վանք, իսկ Գեղդարդավանից Վարդան վաղապետին փոխադրեցիք էջմիածին: Հեռացրիք Անտօն վարդապետ Վարդապարեանին Խորվիրապի վանք և Գրիգոր վարդապետ Տէր-Ստեփաննոսեանին բերել տուիք սուլք Գայիանէի մենաստանն: Սոցա ամենի վերայ աւելացրէք իմ և Ներսէս սրբազն եպիսկոպոսի Զեր բողոքով տարագրութիւնն, այն ժամանակ կամբողջանայ մէկ հասուն խորհրդով և նախամտածուած յատկագծով գործառնութիւն: Փոխադրուած աւագագոյները միաբանութեան կողմանէ ձայնատու կ'լինին, իսկ կըտսերագոյնները՝ նորեկ, անծանօթ պատգամաւորների մօտ երթեւեկութիւն առնելով կ'տրամադրեն նոցա սիրտ խարեպատիր գովասանական ասացուածներով

գեղի Զեզ՝ իբրև Մայր Աթոռոյ շահերին հաւատարիմ, շինարար, տէրութեան հաճոյական, բարոյական և արդարասէր մարդ: Մինչդեռ վանական կանոններով ամէն միաբան իւր վանքից հեռանալու իրաւունք չունի, և ազգի Քահանայապետների մեծ ջանքն է եղել անխախտ պահպանել այդ օրէնք, որպէս զի ամենայն վանօրայք շինութեան մէջ մնան: Դուք՝ համարելով Զեր անձն լիազօր կաթուղիկոսական Տեղապահ, մի տարուայ մէջ բոլոր մերձակայ և հեռաւոր վանքերի վանահայրներ փոխարկեցիք, և այս ոչ արդարանալի աննպատակ պատճառներով: Այլ թէ ի՞նչ չափով ես իրազգաց էի Զեր գաղտամէտ դիտումներին՝ հարցը էք Զեր մտերիմ Սիմէօն վարժապետին. նա կ'պատմէ թէ քանի անզամ Տփխիսեցի Անտօն վարդապետի սրբազնագոյն Նէրսէս աշտարակեցի Կաթուղիկոսի հրամանով վանքի պարապի ուռենիք արմատափի խըլելու առակաւոր պատմութիւնն արած եմ և յաւելացրած. «Զխորհուրդն, զոր խորհին, խափանէ Ցէր»:

Արարաաի ազգային բաժնի վաստակաւոր ժողովողը Սինօդի մասներից գրուած մէ քանի մասնաւոր գործեր՝ որոնք օրագրութեան կարևորութիւն չունէին, այլ կրկնութիւն էին և հարցմունքներ, յառաջ բերելով՝ կցորդում է. «Ստորագրել է Սուքիսսեպիսկոպոս», «Ստորագրել են Սուքիսս և Նէրսէս եպիսկոպոսներ և այն»: Այդ միամէտ աղաւնի և անմեղ գառն ձեացող լուսանկարին կ'հրաւիրեմ սիրով՝ ինչու այլև յառաջ չ'ես տանիր աշխատութիւնդ այդպիսի անկանոն գործողութիւնների թուարկութեան մասին, չէ որ լոյս կ'տեսնեն և յետազայ

պարականոն գրութիւնք չորս անդամների ստորագրութեամբ: Ա. Առաջազրութիւնով Հաշուարարական մասին պատուիրուում է Սինօդի ծախսարարին առանձին յանձնարարութեանց աստիճանաւոր Ռուբէն Մելիք-Ադամեանցի ոռձկի երրորդական մասն՝ նորա Մայր Աթոռին հասանելի հինգ հարիւր ըուբի պարտքի համար, յետ պահպանել ամսէ ամիս մինչև նորա բոլոր պարտքի լրանալն, և յետ պահած զրամն հետզհետէ յանձնել Աթոռոյ գանձապահին: Բ. Նոյն մասի առաջազրութեամբ յանձնուում է վանական կառավարութեան պահանջել պարոն պրօկուրօրից աթոռապատկան տան երկամեայ չորս հարիւր ըուբի վարձը և ներկայացնել ատենին, որք առ կենդամնութեամբ և յետ մահուան Հայրապետին քանիցս պահանջուած էին բանիւ և գրով, բայց չ'էին վճարուած: Այս մասին՝ սրբազն, Դուք և պարոն ատենադպիր Փիլիպպոսեանցն լաւ կ'մտարերէք՝ որ ես պնդում էի. «Պրօկուրօրն արգար օրինաց ճիշտ գործադրութեան հոկող է, երբ օրէնքն իւր պարտիք չ'վճարողին յանցաւոր համարելով՝ պատժի կ'ենթարկէ, պարոն պրօկուրօր իւր տալիք չ'հաստոցած՝ արդար օրինաց ուղիղ գործադրութիւն պահանջող չ'է կարող հանդիսանալ»: Գ. Պահանջել նախկին պրօկուրօրի պաշտօնակատար կոստանդին իւղբաշեանից իւր առանձին ձեռագրով առ սուրբ Աթոռն ունեցած ութ հարիւր ըուբի պարտքն և հասուցանել գանձարանին: Սիալ չ'հասկացուի, նոր պրօկուրօր պարոն կանչելիի նոյն չափ պարտքն և նոյնապայման ձեռագրով՝ պահանջելու համար ապօրինի կարծուած անօրէնութիւն չ'եղած:

Դ. Վեհարանի նոր պարտիզանն՝ երեք հարիւր ըուլուլի տարեկան ռոճկով, աւելորդ համարելով՝ պատուիրել վանական կառավարութեան արձակել։ Ե. Խնայողութիւնն յարգելով՝ պատուիրել ծախսարարներին առանց նախընթաց թոյլտութեան Սինօդի մեծագումար ծախսերի վերանորոգութիւնք չառնել, որոյ մէջ էր և պարոն պրօկուրօրի տան անկարիք, միայն շքեզութեան համար նորոգութիւնն։ Զ. Առանց կաթուղիկոսի ընտրութեան, հաստատութեան և նախընթաց հաճութեան վանահայրեր չաեղափոխել, և կուսակրօն վանականներ ընդգունել, մանաւանդ այնպիսի անձաւորութիւնք՝ որոնք գտնուում են ոստիկանական տեսչութեան հսկողութեան ներքոյ և այն, և այն։

Վերջին երկու կէտերն խիստ առաւել նշանակութիւն և կշիռ ունին, նախ՝ ըստորում սուր Աթոռն ընդհանրապէս նոր շինութեանց կարևորութիւն ունի և ոչ խարխուլ շինուածոց ընդգայր նորոգութիւն։ Ճեմարանի պահպանութիւնն և միաբանութեան կեցութիւնն պահանջում են անհրաժեշտ ծախքեր. իսկ գանձարանումն այնքան ազատ գումար չ'կայ, որոյ յուսով սկսուածներն կարողանան աւարտ առնել, առանց ճեմարանի անունով անձեռնմխելի համարուած աննշան գումարին ճեռք տալու և առանց երուսաղէմացւոց նման ազգային հաստատութիւնն պարտուց ենթարկելու։ Մանաւանդ որ Սինօդն չ'ունի այն մեծ վստահութիւնն ազգի տառաջ՝ ինչպէս ազգը ընտիր Հայրապետն, նուիրաբերութիւն ինդրել և յաջողիլ ստանալ։ Եւ երկրորդ՝ նոյն իսկ սրբազնագոյն Գէորգ և Մակար Դիտապետք առանց ընդերկար

նախապէս փորձառութեան չ'են ճեռնադրած սոսկական աշխարհականների՝ ինչպէս հայր Բաստամեանցին, հայր Ստեփանէին, հայր Նահապետեանցին, սրբքազան Սուրբէնեանցին և այն։ Գէորգ կաթուղիկոս իւր սեփական իրաւունք համարելով էջմիածնի վանքում միաբան ընդունելն, նոյն իսկ Մայր Աթոռոյ ժառանգաւորների ուսումնարանից ընթացաւարտներին՝ որոնք Տեղակալ Գէորգ Արք-եպիսկոպոս Վեհապետեանի հրամանով ճեռնադրուած էին, երեք ամբողջ տարի միաբան չ'կամեցաւ ճանաչել, մերձակայ վանքերն ուղարկեց։ Մակայն Դուք՝ երեք հոգելոյս Հօտապետի յիշատակը պատուելու համար, վանական կարգերի և սովորութեանց հսկառակ, անփորձ և ճեմարանից անհանգիստ բնաւորութեան համար արձակուած կան Խօջայեանցին ընդունեցիք և արեղայ ճեռնադրեցիք. գուցէ ապագայումն պարծենալու համար՝ որ Հայոց եկեղեցւոյն ընծայեցիք այնպիսի մի արտակարգ արժանաւորութեամբ օժտուած հոգիորական։ Այժմս խղճի մտօք ասացէք, Դուք առաւել անհնազանդ էք եղեղեցւոյ գլուխ Հայրապետների տնօրէնութեանց և Մայր Աթոռոյ վաղաւուրց սովորութեանց գէմ՝ թէ ես աւելի ըմբոստ եմ Զեր կարծեցեալ Տեղակալական իշխանութեան առաջ։

Մի կարեոր ինդիր, որոյ լուծումն օգտարեր է Սինօդի գործավարութեան եղանակին և գոյութեան նպատակին. երբ Տեղական երկու և աւելի ամիսներով՝ հիւանդութիւն պատճառաբանած, տանից գուրս չ'է գալիս և պրօկորօրի պաշտօնակատարը չ'է թոյլատրում օրագիր կազմել նորա բացակայութեան հա-

մար, առարկելով՝ որ նա կաթուղիկոսի փոխանորդէ, ինչպէս նոյն իսկ Հայրապետը միշտ բացակայ լինելով Սինօդից՝ ստորագրում է կամ ոչ կազմուած օրագիրը, նոյնպէս և նախանդամն կարող է առնել։ Այսպիսի ժամանակ՝ հարցնում եմ Զեր սրբագնութեան, Սինօդը փակ կ'համարուի, թէ առանց նախագահի և արձանագրութեան նորա բացակայութեան մասին՝ իբրև եկեղեցական գերագոյն ատեան, ձայնատութեան իրաւամք միւս բազմաթիւ անդամոց ներկայութեամբ իւր համարարդուած գործերին ընթացք կ'տայ։ Այս եղանակն առաւել վայելչական էք՝ թէ առանդին բանակցութեանց առիթ գարճելով՝ արտաքին միջամտութիւն և հրանանդ խնդրելն։ Այս փափուկ խնդրոյ վերաբերութեամբ շատ յառաջ գնալ չ'եմ ցանկանում, միմիայն յայտնում եմ իմ զարմանքս թէ՝ ի՞նչպէս քաղաքական բարձրագոյն իշխանութիւնն Զեր գերապատութեան սենեակ՝ ուր լինում էին ամենայն տնօրէնութիւնք, օրինաւոր հաստատութիւն ձանաչեց, և սրբազն Սինօդի ատեանն՝ ուր չորս անդամների համաձայնութեամբ, խաչաւետարանի, պատկեր-զերծալի ներկայութեամբ միշտ վճռուում էին խնդիրներ, համարեց ապօրինի կազմութիւն։ Թերեւ լրջամիտներին շատ լաւ յայտնի են դրդումներն ու խլրտմունք՝ որոց յաջողութեան պատճառաւ մեր վարմունք անապանդութիւն համարուեց, մեր աքսորուեցանք և Սինօդի շրջանումն ծառայողներ Հայաստանեաց եկեղեցւոյ Վեհապետի անմիջական հնթագրութենէն հանուելով՝ ստորագրուեցան կովկասու կառավարչապետի և այլադաւան

ազանց հոգեոր գործերի բաժնի գլխաւորին, ինչպէս և առաջուց իբրև ծանօթութիւն յիշատակեցի վերևն թէպէտ և մանր ու խոշոր շատ և շատ ասելիքներ կան, որոնք Զեր հասկացողութեան չափի անձկութիւնն, կառավարչական հանձարի բացակայութիւնն և օտարին գործիք լինելու տխուր իրականութիւնն և պատրաստականութիւն կարտայայտեն, սակայն ես բաւականանալով յիշատակուած սակաւներով՝ ապագային կ'թողում ընդարձակ խօսելիքս և կ'զառնամ այլ միւս մեղադրանքի՝ զոր Սրբարատի խմբագրութիւն Զեր հաւանութեամբ և յատուկ պատուիրանատուութեամբ՝ ինչպէս հաւանական է կարծել գրուածոց բարձրաթուիչ ոճէն և արտայայտութեանց իշխանապիրական եղանակէն, բարդած է ինձ վերայ հաւասար Սինօդի ատենում անկանոն գործողութեանց։

Թ.

Գալով Սրբարատ ամսագրում իմ տպագրել տուած տեղեկութեանը կաթուղիկոսական կայքի գողութեան մասին և նոյն պատճառով յօղուածագրի բազմիմաստ հարցապնդումներին և կասկածաւոր, թէական ակնարկութիւններին՝ Զեր գերապատուութեան բացարձակ յայտնում եմ։ Նախ՝ Սինօդի գործերումն են այսօր ինչէս իմ տուած յայտարարութիւնն, նոյնպէս և նորա հիման վերայ եղած գրագրութիւններն՝ որոնք բոլորն ևս օրագրական նշանակութիւն ունին, և Սրբարատի մէջ յառաջագոյն տպագրուած ատենական գործերից ծանօթութիւնները մշտապէս նոյն վերնագրին են ունեցել. այսինքն «քաղուածք յօրագրունագրին» են ունեցել. այսինքն «քաղուածք յօրագրու-

թեանց Սինօդի»։ Եթէ այդ վերնագիրն անուշադրութեան սխալ լինի՝ այնուամենայնիւ եղելութիւնները դորանով չ'են հերքուում։ Եղելութիւններ՝ որոնք մինչև այսօր բերանացի պատումներով յայտնի են ամէնքին¹⁾։

1) Հայրապետի մահուանից յետոյ Սինօդի սրբազն անդամների հաճութեամբ Արքարատ ամսագիրը մի համառօտ տեղեկութիւն կամեցաւ տալ ազգայնոց, սակայն Տեղակալ Երեմիա եպիսկոպոսն թոյլ չտուաւ այն տարածելու, այլ հանեց, միայն արտասահման գնացած քանի մի օրինակների մէջ մնացին։ Ահա նորա բովանդակութիւնն։ —

«Հանգուցեալ Հայրապետի պատուական նշխարք վայելուչ «հանդիսիւ ի հող տապանի հանգուցանելուց յետոյ՝ Սինօդի «սրբազն Առենակալները, ինչպէս Բարձրագոյն հաստատեալ «կանոնադրութեան 32-րդ յօդուածի ցուցմանց համաձայն «զգուշացած էին Վեհարանում գտնուած աթոռապատկան կահակարասեաց, Նորին Սրբութեան սեպհական գոյից և պաշտօնական թղթոց, նոյզէս և ապրիլի 24 սկսան ցուցակագրել «առանց թոյլառութեան կողմնակի մասնակցութեանց։ Առաջին իսկ օրն իր զարմանքն բանիւ յալտնում է զերապատիւ Սուքիաս եպիսկոպոսն անդամակցաց Վեհափառ «Կաթուղիկոսի արկղումն ակնկալութեան հակառակ աննը «շան գումար գտնուելու մասին և ապա ստիպում է Յակովը «Կիրակոսեանին յայտնի իսկութիւնն։ Նա առածինն խոստովանում է թէ իւր ձեռքումն գտնուում է տառն և մի «հազար բուրբիթ արժետումսեր, որոնցից ըստ պատուիրանի «Վեհափառ Հայրապետին պէտք է չորս հազարն տայ Տիմիւ «սում գտնուող երկու քահանայից, իսկ մնացորդովն իրան «համար մի բնակարան շինէ։ Այս յայտնագործութիւնից յետոյ Արքարան Սուքիաս եպիսկոպոսն հրաւիրում է նորան բերել այդ գումարն և յանձնել վանքին, երբ նա յանձն չէ «առնում՝ այն ժամանակ, ապրիլի 25-ին, յետագայ ծանուցագրով հասուցանում է ի տեղեկութիւն Արքարան Սինօդի։ «Յեղեկեան աւուր գերապատիւ անդամք Արքարան Սինօ-

երկրորդ՝ Բերքի տանը Յակովը արկղների բացուելու ժամանակ իմ, Ներսէս եպիսկոպոսի, Սահակ վարդապետ Բաղդասարեանի և Սահակ աբեղայ Ամատունոյ ներկայութիւնն անպաշտօն կերպով չ'էր, այլ յանձնուած Սինօդի Տեղապահիդ և միւս անդամ «զիդ ընդ գերազնիւ պրոկուրօրի բարձեալ զինիք գրանց ««Վեհարանի ձեռնարկին ի ցուցակ բերել զկայս հանգուցեալ ««Հայրապետի ազգիս, յորմէ ընդ անշան և չնչին իրաց ««յայտնեցաւ մի հազար ութ հարիւր բուրլի գումար, յորոց ««հօթնեատամն արժետումսը։ Այսպիսի անսակնունելի իրողութիւն շուարեաց զիս, ըստ որում ի 1857 ամէ և ցայսօր լինելով հոգեգաւակ նորին Սրբութեան մերձաւոր գիտակ եմ ««Նորոյն կարողութեան, պարզեաբախշ ձեռաց առ իւրմն ըստ ««մարմնոյ և առ օտարս, ևս և ջերմեռանդ հարազատութեանն առ Սուքի Աթոռս և ակնունէի տեսանել գէթ զերեսուն ««հազար բուրլիս յարկեղ նորին նաև զկերպասիս և զարծաթեղէնս։

««Որովհետև զերեեցայ ի յունոյ, ուստի ի հանդարտութիւն խղճիս կոչեցի ի հարցափորձ զպարոն Յակովըն Կիրակոսեան, որ խոստովանեցաւ, զի հանգուցեալ Հայրապետն ««շաբաթու աւուրբք յառաջ քան զմանն յանձնեալ է ի ձեռս ««իւր զտամն և մի հազար բուրլեաց արծաթոյ արժետումս ««յաղագս յիելոյ ի նոցունց առ Արքէն քահ. Բագրատունի ի ««Տիմիս զերկու հազար արծաթիս, առ Գիւտ քահ. Աղանձանց նոյնչափ, իսկ զմնացորդն տալ ի գին միոյ տան ի ««բնակութիւն ինքեանն։

««Գիտելով քաջ զնեսատես զգուշաւոր վարժունս նորին ««Օծութեան և յիշելով զկտակագիր նորին՝ յորում ստորագրութեալ են գետ յամին 1883 գերապատիւ Արքուտակէս և ««պիսկոպոս Սեղբակեան և Մամբրէ վարդապետ Սահակ ամանց, զիստովանութիւն պ. Յակովը գտանեմ թերի, զի ««ոչ յայտնեցան գրաւոր հաւաստիք առ այն. յայտ սակս ««զկերոյգրելոցն հասուցեալ ի գիտութիւն Սրբազն Սինօ-

ների կողմից, թէև շտապողութեան պատճառաւ օրադիր կայացած չ'է: Ուրեմն և մեր Բերքի տաճն ծանօթացած տեղեկութիւնները ըստ մասին Սինօդական են համարուում, թէև գրաւոր հրաման չունենալով՝ գրաւոր ևս պատախանած չ'ենք Սինօդին: Բայց
 ««գիդ՝ մատուցանեմ ընդ սմին զթուահամարս տոկոսաբեր ««գրամաթղթոց հանգուցեալ Հայրապետին՝ զծանօթ եղեալսն ««ինձ, որում կարէ վկայել և Սրբազնն ներսէս եպիսկոպուսն, և յարգոյաբար ինգրեմ՝ փութալի ձեռու առնուլ ըզ» ««հարկաւոր միջոց յաղագս ի յայտնութիւն բերելոյ զկու ««բուռան և սրբելոյ զյիշատակ անուան հանգուցելոյն ի բազ» ««մադիմի իրաւացի բամբասանաց ազգայնոց»»:

Զանազան կարգի տոմսակների թիւն է 54, իսկ գումարն 26625: Դոյն յայտարարութեան հիման վերայ Յակովը «յանձնուում է արդարադատութեան և նորա քեռորդի Բերքի տունն հետախուզուելով՝ գտնուում 11 հազարի դրամատոմսեր, կերպասեղէններ, արծաթեղէններ, մատանիներ «և այլ առարկայք, որոնք չեն կարող նուիրուած լինել և ապատկանել մի սպասաւորի. ուստի և երկուսն էլ բանտարակուեցին մինչև հեռաւոր քննութեան և վճռահատութեան վախճանն:

«Ինչպէս ստուգութիւնից յայտնուում է վանքապատկան «իրեղէնք, որոնք գտանուում էին Վեհաբանումն զործացըրութեան համար, ամբողջովին պահպանուած են, բացառութեամբ քանի մի արծաթեղէն սակաւարժէք անօթների, «կորուստն վերաբերում է հանգուցեալ Հայրապետի գրամոց, ևանկար կերպաս, տուի և բամբակի կտորեղինաց, զանազան արծաթի կահուց, բաժակների, ափսէնների, ընչատուցիների, մատանիների, բաժակակաների, մուշտակի, և այլն: «Քահանայական կամ վարդապետական խաչերի, մասնաւութիւնների և այլ եկեղեցական նուիրաց կորուստ բնաւին «չը կայ, հակառակ լրագիրների անտեղեակ հրատարակութեանց: Զը կայ կորուստ և կաթուղիկոսի պաշտօնական»

ամէնքին յայտնի է՝ որ այնտեղ ապացուցուած էջմիածնապատկան սակաւ իրեղէնք յայտնուեցին, իսկ եկեղեցական խաչ, մասնատուփ և մասունք չ'ենք տեսած: Մնացորդ շատ արծաթեղէնք տակաւին չ'են ապացուցուած թէ՝ ում են պատկանում. ըստ որում Յակովին ասում էր իմն են, գնած եմ:

Երրորդ՝ Արարատից գուրս կորզուած ծանուցագիրն ես առանձին նամակներով և ոչ մի տեղ չ'եմ ուղարկած, բացի Պօլոյ ամենապատիւ Պատրիարքին: Արդարկ, գրած, պատրաստած ունէի թղթեր մի օրինակ բովանդակութեամբ ազգային լրագիրների խմբագրութեանց, թեմական առաջնորդների և Պատրիարքների անունով, սակայն՝ ափսոսալով պէտքէ ասեմ, թողի և չ'ուղարկեցի, որոնք իբրև ապացոյց ժամանակին կարող են առաջարկուիլ ուր որ պէտքէ, եթէ գուրս կորզուած թերթերի թիւն պակաս է՝ Դուք և «թղթերի, ըստ որում ամեն ելեմտական մատեանների համաձայն ցուցակագրուած և պահպանուում են վախճանեալ «Գէորգ չորրորդի թղթոց և գործոց մօտ: Հաւանական կարծ «եօք անյայտացած է Վեհափառ Հայրապետի կտակագիրն, «որոյ մասին բազմից ինքն պ. բժշկին, իւր գիւանագպրին «և այլոց ակնարկած է, իսկ վերջին ժամանակ ստացած էր «գանձարանից Յովհաննէս կաթուղիկոսի հրիտակն ի նկատառութիւն որպիսի հանգամանքերը գուշակել են տալիս «կտակագրի գոյութիւնն:

«Որպէս զի հեռաւոր և մերձաւոր ազգայինք լրագրական «անհիմ կամ նպատակաւոր հրատարակութիւններից չը «գաղթակղուին, հարկ համարուեցաւ առ ժամս վերոյիշեալ «յայտնութիւնք ծանուցանել Սրբազն Սինօդի կողմանէ. «ապագայումն նոր լրաց տեսած իրողութեանց համար ընթերցողք անտեղեակ չեն մնալ»:

բանաքաղն պէտքէ իմանաք՝ որ Արարատն հրատարակուած լինելով Զեր իսկ նախընթաց թոյլտուութեամբ նոյն յօդուածը միջին ուղարկուած է արտասահմանի բոլոր բաժանորդներին երկու երեք օր յառաջ։ Դորանից յետոյ Դուք Զեր մենտոր բանաքաղից խրատ առնելով՝ հրամայում էք գուրս կորզել այն թերթերն և միաբանութեան վերայ բաժանուած համարները յետ ժողովել։ Այս մասին խմբազիր Արիստակէս եպիսկոպոս Դաւթեանի բացատրական յայտարարութիւնն բացորոշ ցոյց է տալիս՝ զոր գեռ չ'էք յանձնած քննութեան և պատասխանատուութեան, ինչպէս սպառնում է պաշտօնական ամսագիրն։

Զորբորդ՝ նոյն իսկ կաթուղիկոսական արկղի բացուած օրն՝ երբ կէս օրուայ ժամն 12-ին վերադառնում էինք իւրաքանչիւր որ իւր սենեակ, վեհարանի սանդուվների վերայ Ներսէս և Արիստակէս սրբազններին յայտնեցի իմ զարմանքս աննշան զումար յայտնուելու համար և Յակովիրին հետո առած տուն տարայ, ուր տեսաւ նորան պարոն Ամբարդանեանցն ինձ այցելած ժամանակ և ինձանից յետոյ գնաց պարոն պրօկորդին։ Նոյն օրը Յակովիրին ես ձեռքից բաց չ'եմ թողել, հետո ՚ի միասին տարել եմ վեհարանի սեղանատուն ճաշելու, այստեղից լճակի վերայ շրջագայելու և հարկաւոր ծանօթութիւնք ստանալու։ Ապա թէ երեկոյեան թէյից յետոյ նորան ճամսապարհ տալով՝ Ներսէս սրբազնն եպիսկոպոսից ստացել եմ արքունի տոմսերի թուերն, որովհետեւ նորա ձեռքով են ստացուել շատ անդամ նորանց տոկոսներն և գիշերուայ 10 ժամին կացարանս դառնալով՝ պատրաս-

տել եմ յայտազրի նախարարակն, հանգստացել և առաւօտուն ամսոյ 25-ին, Զեր Գերապատուութեամն ներկայացել և պատմել եղելութիւնն։ Ես չ'էի կարող վեհարանում նոյն իսկ արկղի բացման ժամանակն, պաշտօնական անձինքների ներկայութեամբ, առանց օրինաւոր ապացոյցների, Յակովի օձիք բռնել, պահանջ յարուցանել և նորան յամառութեամն մատնելով՝ յափշտակուած ժոյքը կորստեան տալ, ինչպէս սովորական երեսոյթներից յայտնի է փորձուածներին։

Հինգերորդ՝ եթէ Յակովիր 11000 ըուբլին յանձնալու վանքին՝ այլ ևս ինձ վերայ չ'էր մնալ նորանից բողոք բառնալու կամ ոչ պատասխանատուութիւնը և պարտաւորութիւնն։ Այդ բանը նա կարող էր անել՝ ով որ՝ իրեւ վանքի իրաւանց տէր, ձեռք կմեկնէր և նորանից կստանար որպէս ժողոնք այն զբանները։ Ես ինչպէս Զեր սրբազնութեան սենեկումն ասացի, նոյնն այժմս ևս կրկնում եմ, բողոքող անձնաւորութիւն լինելով՝ այդ խնդրում դատաւորի կամ հաշտարարի իրաւունք և դեռ չ'եմ կարող ունենալ։ Այս սուուգութիւնն ամէն մի փոքր ՚ի շատէ բանիմացի յայտնի է՝ որ ամբաստանողն ամբաստանելոյն իրեւ հակակիր՝ ոչ մի օրէնքով չ'է կարող բաղպասահման վճառատու լինիլ։

Եւ վեցերորդ՝ եթէ ես ամբողջ մի օր Յակովի վերայ տալիք բողոքս ուշացնելով՝ պատասխանատու եմ՝ իրեւ Մայր Աթոռոյ ժառանգաւորներէն մէկն, հատա Դուք՝ Երեմիա եպիսկոպոս, իրեւ Տեղապահ և վանուց զրկանքներն պահանջելու տէր, ինչպէս կարգարանաք՝ երբ ամիս անցնելուց յետոյ էք յայտնում

միւս մնացորդ՝ որպէս թէ կաթուղիկոսական, տումսակների թուերն։ Ի՞նչպէս կարդարանայ և պարոն պրօկուրօրն՝ որ գեռ 1889 թուականին՝ կաթուղիկոսի ինֆլուէնցիայով ծանր հիւանդութեան ժամանակ յանձնարարութիւն ունէր նախարարից հսկել նորա կայից վերայ, և բժշկից միշտ զեկուցումն ստանալով հիւանդի դրութեան մասին՝ յայտարարել ում որ պէտքն է. իսկ մահուանից յետոյ Սինօղի կնքով չբաւականանալով՝ և իւր դրոշմն դնում էր վեհարանի դռներին։ Գիտութեամբ էր արդեօք Զեր և պարոն պրօկուրօրի ընդ երկար միջոց լուսութիւնն՝ թէ անգիտութեամբ։ Վայել չ'է Դաւիթ մարդարէի սադմուն յիշել այստեղ. «Եղիցին նոքա իբրև զշուն համբացեալ, որք ոչ կարացեն հաջել»։ Այսօր անտարակուսելի յայտնի իրողութիւն է՝ որ նոյն իսկ իմ յայտարարութիւնս տուած օրը պէտք էր Յակովի արկղներից հանել 30000 ըուբլին, ինչպէս և ամբողջութեամբ եղել էր։ Բայց սորա և նորա ձեռք անցան պահպանելու անունով և այլ ևս յետ չ'դառնալով՝ ժառանգութիւն դարձան ճարպիկներին, որպէս զի արդարանայ հասարակական առածք. «Գողն գողից գողացաւ, Աստուած վերեն զարմացաւ»։

Սրբազն Տեղապահ, Դուք այս ինդրում վարուեցիք այնպէս, ինչպէս վարուած էիք որբազնագոյն Գէորգ Հովուապետի գոյքի գողութեանց յայտնագործելու մասին։ Դուք առանձին գաղտնի յանձնաժողովի անդամներ կարգեցիք, որոց մինն էր և Սեղբակեան եպիսկոպոսն. աշխարհալուր գլուխիւններով գիւղերում և քաղաքներում տներ որոնել տուիք, որ-

քան կարելին էր շատ անձնաւորութիւնների երես աշխատեցիք մրոտել և պատահած մասնաւոր գէպքը հրապարականախատ առնել և ապարդիւն դուրս գալ աշխատանքի ասպարէզից։ Այդպիսով միջոց տրուեց հսարագէտ մարդկանց իրենց բաժինն և վիճակ ունենալ նոյն գողոնքից և ապա Զեր առաջին պարծենալ իրեկ ազգային սեփականութեան անկորուստ պահպանութեանը նախանձախնդիր վերահսկողներ։ Ի՞նչ էք կարծում, ովարոն քննչի նման և պարոնայք գաւառապետ և պրօկուրօր չ'ունեցան իրենց բաժինն այդ աւարի մէջ, որոյ ձեռքէ ձեռք անցնելու մանրամասնութեանցն քաջածանօթ էին։

Այս բոլոր ստոյգ տեղեկութիւններ յիշատակեւ լուց յետոյ՝ ներում եմ ինձ մի համեստ հարցմունք։ Եթէ Դուք՝ գերապատիւ սրբազն Հայր, այնքան նախանձախնդիր էիք ճշմարտութեան և հասարակաց միաք խաղաղ պահպանելուն անստոյգ հրատարակութիւնների վերաբերութեամբ՝ որ բարեհաճեցիք Սրբաթիւնների գործերից քաղուածներ խմբագրելն թոյդիւանական գործերից քաղուածներ և լուսարել այլ և ազգային լրագրութիւններ, չ'էք կարող կցորդել քմահած բացատրութիւններ, չ'էք կարող արդեօք Զեր պատասխանատուութիւնն շնորհել և իմ արդեօք այս պատասխանատուութիւնն շնորհել և իմ կազմած տեղեկութեանը՝ նորա վերնագիրը միայն փոխել տալով, բառեր ու հատուածներ հանելով ինչ- պէս միշտ արած էիք կաթուղիկոսին վերաբերուած պէս միշտ արած էիք կաթուղիկոսին վերաբերել գրուածների մէջ, և ապա թոյլատրէիք տպագրել իրեկ միաբանութեան կողմից ազգին տուած մի իրեկ միաբանութեան կողմից ազգին տուած մի հանգստացնող համբաւ։ Շատ լաւ կարող էիք, սա-

կայն չ'արիք նորա համար, որպէս զի ես և Ներսէս սրբազն՝ որպէս միջանկեալ նախադասութիւններ, դուրս ձգուէինք և ինքներդ ու Արիստակէս եպիսկոպոս՝ որպէս գործողութիւն ու Ենթակայ, մօտենայիք միմեանց: Այդ շատ լաւ զիտէր և Մշակը իւր բռնած գիրքով, մասնաւանդ որ Դուք՝ Սեղրակեան և մշակական համախոնք Զեզ համար մեր վերաբերութեամբն եղած, հասած էիք համարում Յիսուսից իւր աշակերտաց ակնարկած ժամանակն, յորում զմեզ սպանանեն Աստուծոյ պաշտօն մատուցանել կ'նշանակէր:

Փոքր ինչ խոսորիմ ուզիդ կարգից: Հոգելոյս Հայրապետի մօտ քանիցս անզամ թախանձանօք խընդգրարկու եմ եղած տարիներ յառաջ, տակաւին Երևան եղածս ժամանակ և վերջերն, Մատթէոս և Գէորգ կաթուղիկոսների սեփական կայքի հետ պատահած գէպքերն աչքի առաջ ունենալով. կանոնաւոր կերպով կարգադրել իւր ունեցածի մասին, կամ առ կենդանութեամբ բաշխել իւր մարմնաւոր ազգականներին՝ քանի մի մերձաւորների զիտակցութեամբ, կամ կտակաւանդութեամբ տնօրինել: Առ այս միշտ պատասխան եմ ստացած. «Միամիտ կաց, ոչ ոքի դժբաղդութեան առիթ դառնալու չ'եմ և չ'եմ դարձած»: Ինձ նման և պարոն բժիշկ Զարգարեանցը թախանձել է՝ որ Նորին Սրբութիւնն, որպէս մահկանացու իւր գոյքի մասին կարգադրութիւն առնէ: Նա ևս ինձ նման պատասխան է ստացել. «Միամիտ կաց՝ պարոն բժիշկ, ամենայն ինչ կարգին է, իմ մահուանից յետոյ ոչ չի տուժիլ:» Իսկ երբ իւր ըստ մարմնոյ

ազգականները մշտական թախանձ են կրկնել առ ինքն ապրուստի մասին, նորա սովորական պատասխանն է եղել՝ անգամ Սահակ վարդապետ Բաղդասարեանցի նեկայութեամբ. «Եօթանասուն տարի է սուրբ Եղմիածնի միաբան եմ, նորա հաց և ջրով մեծացած և մարդ դարձած, մեծ բան է արգեօք՝ որ ես մի տասն հազար բուքի հոգեբաժին թողնեմ այդ ազգային նուրբական հաստատութեան: Ինչու էք ներում ձեզ՝ ձեռքէ եկած աշխատանքով չ'ապրել, այլ արտաքին, կողմանկի եկամուտ ունենալ»:

Բացի յիշատակուած բերանացի առաջարկներ և խոստումներ՝ արդէն մահուանից երկու ամիս միջոց յառաջ գանձարանից պահանջել և իւր մօտ էր երջանկայիշատակ Յովհաննէս կաթուղիկոսի կտակագիրն՝ որով և հաստատուն յոյս տուած էր սրբազան անդամներին թէ՝ ինքը զիտէ ինչ սէտքէ մնօրինել: Մանաւանդ Տփխիսի սուրբ Գայիանեան օրինական ուսումնարանին որոշած 5000 բուբիանոց տոմսակի քսան տարիներից ՚ի վեր գոյութիւնն ու պատմութիւնն շատ անգամ ինձ մօտ կրկնած և քանիցս իւր կտակաւանդութիւնք 1864 թուին Տփխիս, 1882 թուին Ղրիմու սարբ Խաչի վանքում և 1883 թուին Կայսեր թագադրութեան գնալու ժամանակ՝ Տփխիսում, ինձ և շատ մերձաւորներին պնդագոյնս հաստատել էին և համոզել՝ որ նա ունի կտակ, կամ գոնէ զրաւոր որոշումներ իւր ունեցածի մասին: Ուրեմն, այսպիսի հաւաստիք ինձ խրախոյս ունենալով՝ ինչ մեծ յանցանք իմ գործել ամէն տեղ եղած պատշաճից կանոնին և սովորութեանց համա-

ձայն ասել. «Կաթուղիկոսարանի կնքուած դռները
թէ ոչ բառասուն՝ գոնէ եօթն օրից յետոյ բացուին»,
և այն 'ի պատիւ տեղոյն և Հայրապետին, այն ինչ
հասարակ քաղաքացու մարմնաւոր ժառանգորդներ
տարիներ յետոյ են ժողովուում կողոպուափ շուրջ
տնօրէնութիւն առնելու։ Միթէ հաւանական չէ կար-
ծէլ՝ որ բարեյիշատակ հանգուցեալն ունէր կտակ,
բայց նոյն իսկ մահուան մերձեցած օրեր, որին
առաւել զիտակ կ'լինէր Յակովին, յափշտակու-
եցան անխղճաբար և առիթ դարձան՝ այլ հոգածու-
թեանց հետ միասին, Նորին Սրբութեան յանկարծա-
հաս մահուան, ըստ որում իբրև տարապայման հա-
մեստ և պարկեշտ մարդ, իւր տան գաղտնիք զգու-
շանում էր այլոց պատմել, ինչպէս քանիցս անգամ
հազարաւոր ըուբլիներ իւր սեղանի դարանից բար-
ձուած ժամանակ՝ չկամենալով սպասաւորներին հա-
սարակաց կասկածանքին ենթարկել, բաւականացել է
ինձ, Ներսէս սրբազանին և այլ մտերիմների իբրև
տրտունջ պատմել և լոել. Միթէ նոյն իսկ Յակովիի
Զեր սենեկումն ասած խօսքերն «11000 ըուբլին
կ'վերագրձնեմ, եթէ անդամք ինձ ձեռագիր կ'տան՝
որ այլևս պահանջ չ'ունին ինձանից», ակնյայտնի
ապացոյցներ չէին նորա յանցաւորութեան և ստու-
թեան թէ Վեհափառից բարձուած են ոչ միայն 11000
արծաթ, այլ աւելի շատ հանդերձ արծաթեղէններով
և կտորեղէններով։ Եւ եթէ Յակովին յայտնի չ'էր
Հայրապետի օրհասական կացութիւնն՝ ինչից ստի-
պուած նա շաբաթներ յառաջ իւր ունեցածն տեղա-
փոխում էր իւր քրոջ տունն, որին ականատես վկայ

են բոլոր վեհարանական սպասաւորները, սուբհան-
դակներն և գոապաններն. իսկ ով կարող էր յայտնել
նորան այդ հաւանականութիւն, բացի պարոն Զար-
գարեանց բժշկէն։

Գալով այս առարկութեան, «Կաթուղիկոսի կայք
օրէնքն եկեղեցական կհամարի՝ թէ անձնական», ան-
տարակոյս հաստատամութեամբ՝ հիմուելով մեր
եկեղեցական պատմութեան, սովորութեան և կանոն-
ների ցուցմանց վերայ, պէտքէ ասեմ։ Առ կենդա-
նութեամբ հայոց եկեղեցւոյ իւրաքանչիւր կուսա-
կըրօն վանականի գոյք իւր անձնական սեփականու-
թիւն է համարուած և իւր հաճոյից համաձայն նա-
տէր է մատակարարելու ուր և ում կամի, յետ մահուան
դառնում է այն ժառանգութիւն եկեղեցւոյ և վանուց։
Այսպէս է սուբրե Իսահակ Պարթեկի կանոնական որո-
շումն. այսպէս է եղել բոլոր Հայրապետաց և առաջ-
նորդաց կացութիւնն։ Նոյն իսկ Կայսերական օրէնքն
այսպէս ձամնաշած էր և է։ միայն բարեյիշատակ
Գէորգ Կաթուղիկոսի թախանձանօք՝ ազգայնոց պա-
հանջին համաձայն, Աղէքսանդր Երկրորդ Ռուսաց
կայսրն հաճեցաւ մասնաւոր փոփոխութիւն զնել այս
օրինական ցուցմանց մէջ՝ ասելով. «Առանց կտակի
վաղճանող վանականի գոյքն պատկանում է այն վա-
նուց, որոյ ինքն միաբան է եղել»։ Լաւ մտառելու է
«առանց կտակի» բառերն՝ որով կամեցել է օրէնքն
նախ՝ մերժել մարմնաւոր ժառանգների պահանջողու-
թիւնք, որպիսիք ցայսօր Ներսէս կաթուղիկոսի ազ-
գականաց կողմանէ շարունակուում են, և Երկրորդ՝
ըստ քօղով հաստատել, որ հոգեորական անձն իւր

խնայողութեամբ ձեռք բերած ստացուածի կատարեալ տէրն է ըստ հաճոյս կարգադրել որպէս և կամի՞նչ կենդանի է:

Հոգելոյս Հայրապետի կայից մասին առ նորա կենդանութեամբ ոչ մի օրէնք չ'էր կարող վճռել իբրև եկեղեցական և Յակովին այդ գիտէր անշուշտ պնդելով թէ «Ի՞նքն կաթուղիկոսն իւր մահուանից քանի ինչ օր յառաջ է ինձ նուիրել այդ գրամներն, ևս գողացած չ'եմ»: Իսկ էջմիածնապատկան կայք, կարասիք, ոսկեղէն և արծաթեղէն ոչինչ չ'է յափշտակուած վեհարանից՝ դարձեալ կասեմ շեշտելով, բացի բանի մի սակաւարժէք ոսկեղէն և արծաթեղէն, ըստ որում նոյն իսկ Կաթուղիկոսական կայից ցուցագրութեան օրն սրբագան անդամք արծաթեղինաց մէջ պակասորդ բան չ'գտան՝ բացի մի արծաթի սրճամանից, ինչպէս կ'մտարերէք և Գուք: Իհարկէ այսպիսի ուշադրութիւնն կարող էր անուանուիլ «անզամոց կողմանէ զգուշաւորութիւն»: Բ'նչ կայ այդ տեղ Արարատի ազգային բաժնի խծբծողին զարմանալու և հարցեր առաջարկելու: Աւրեմն մի ամբարիշտ քարընկեցութիւն էր այդ Զեր սրբազնութեան և Սեղրակեան Արիստակէս եպիսկոպոսի կողմանէ հանդուցելոյ յիշատակին՝ ձայն տարածելով, «աւել գրած սըրբած են վեհարանն, վերից ներքի մի խորի կտոր չէ մտացած»: Այս իմաստներով հրատարակութիւններ լինում էին Մշակում և Հայրենիքում ոչ առանց Զեր և Սեղրակեանի նախագիտութեան և որոշ դիտումների: Այս այնքան յայտնի ծշմարտութիւն է վանականի կայից մասին՝ որ յետին անմիտն կարող է վը-

կայել թէ՝ Երեմիա եպիսկոպոսն իւր կենդանութեան ժամանակ իւր տամանաւոր հազարների տէրն է, ոչ ոք կարող չէ զայնս վանքական համարել, ուստի ինչպէս կամենայ՝ այնպէս կ'տնօրինէ: Ապա թէ ոչ վանուց սեփականութիւն մասնաւորի մօտ չ'պէտք գտնուի, այլ իւր գանձարանում, և սուրբ Աթոռն ունի իւր գանձարանն: Նոյնպէս տէր ենք մեր ունեցածին ես, Արիստակէս եպիսկոպոս Սեղրակեան և այլք:

Դ դէպ ժամանակին ասածներս ըմբռնած են այս այբուբենական ծշմարտութիւններն, որովհետեւ Զեր սրբազնութիւն գուսումն մանկութեան թողել և անտեղեալ է արդարութեան տարրական սկզբունքներին, ուստի առ Զեր միանգամ ևս կատարեմ իմ թերաւարտ ուսուցչութեան պարագ՝ յուսով ապագայ լիածենն վարձատրութեան՝ ներկայ հատուցումն սակաւ համարելով: Վաղադարենի սովորութիւն էր առ հայո՛ երբ մի վիճակի նոր առաջնորդ կնշանակուեր՝ նորան ընդունած ժամանակ ազգային առաջաւորներն և եկեղեցական սեփականութեանց կառավարիչներ կ'ապային նորա ձեռք վանքերի և եկեղեցիների սահցուածոց, կայից և գոյից ցուցակ և փոխարէն կ'պահանջէին առաջնորդի կարողութեանց նոյնպիսի նուևխայ, որպէս զի երկուքն ևս միօրինակարար հաւատացուին նորա կառավարութեանն և այլ վիճակ փոխադրութեան ժամանակ իւր ստացուածք իրեն յանձնուին, իսկ մահուանից յետոյ մնայ եկեղեցիներին: Այս մտօք և Բարձրագոյն կարգադրութեան մէջ էին, նախ՝ այն հատուած, որ փոխուած է այժմ, «առաջնորդի մահուանից յետոյ նորա գոյիք մնայ իւր վիճակի

եկեղեցեաց՝» ինչպէս Սերովէ Արք եպիսկոպոսինն մնացած էր Աստրախանի վիճակին, և երկրորդ՝ այն հատուած որ կայ և ցայսօր. «առաջնորդն պատասխանատու է եկեղեցական դրամոց և կայից կորստեան»։ Շատ բերդերի և ագարակների տէր եպիսկոպոս և վարդապետ առաջնորդներ է ունեցել մեր եկեղեցին. նոքա կամ հայրենի ժառանգութեամբ և կամ անձնական վաստակով էին ճոխացած. բոլորն առ կենդանութեամբ վայելել են ունեցածնին, բաշխել են ըստ հաճոյս ում և կամեցել են։ Նոյնպէս կտակաւ թողել են կամ մերձաւոր աղջականների և կամ եկեղեցիների ու վանքերի. ոչինչ օրէնք նոցա վերայ բռնացած չէ։ Վկայ են սորան հազարաւոր ձեռագիրների և տաճարների արձանագրութեանց յիշատակարանաձև ցուցմունքներն։ Վասն այնորիկ էր՝ որ Հայոց աղջն պարսկական և արաբական խաների և գործակալների աւարառու յափշտակութեանց օրերն ինչաեղ հարուստ եպիսկոպոս կամ վարդապետ էր գտնում, Հայրապետական գանն նորան էր յանձնում, որպէս զի Մայր Աթոռն թափէ պարտապահների ձեռքից։ Այս սովորութեան մէջ այնքան էր յառաջ գնացած՝ մինչեւ որ ոչ թէ կաթուղիկոսի մեռած ժամանակ հարուստին և բանիւք զօրաւորին էր հետամուտ, այլ աղքատ և անզօր կենդանի Հայրապետին անգամ մերժում էր աթոռից բռնակալների ձեռքով և կարողաւորներին տալիս այն նուիրական աւանդն պահպանելու։ Քիչէ պատահել արդեօք և այժմ ևս չկայ օրինակ՝ որ շատ մենաստաններ իրենց միանձանց պարտազրով և տոկոսով դրամներ են

պարտական և անշուշտ կ'համառւցանեն նոցա առանց պատճառաբանելու թէ՝ նոքա միաբան են վաճուց, ժառանգաւոր և ուխտեալ իրենց կայք թողուլ տաճարին։

Արդ, եթէ Հայոց ազգն պատմական հաւաստիքներով և խղճի վկայութեամբ իրազեկ լինէր թէ՝ հոգեւորականի կայքն առ կենդանութեամբ նորա առանց այլ և այլի վանքական է, նա կարող էր գէթ մի օրինակ ընծայել մեզ՝ կենդանի եպիսկոպոսից կամ վարդապետից ունեցածը բառնալ և եկեղեցւոյ պիտոյից գործադրել։ Ո՞վ չգիտէ՝ որ Մակար Կաթուղիկոսն իւր ունեցածներից քրոջ թոռների անունով մի մի հազարական բանկային տոմսակներ էր առած և իւր մօս էին գտնուում, որոց տոկոսը վայելում էր ցմահ։ Այդ տոմսակների տասնամեայ կտրոններ սպառուած լինելով՝ Յակովի ձեռքով ուղարկուած էին Պետերբուրգ փոխարկելու նորի հետ՝ գարձեալ նոցա անուամբ։ Դոյն տոմսակները իւր մահուանից յետոյ ստացուած էին Վաղարշապատի փօշտայումն։ Ես կարծում եմ ոչ մի օրէնք չ'է կարող նորանք էջմիածնի սեփականութիւն համարել և հանգուցելոյ ազգականների ձեռքից կորզել, որքան և ամբողջ Մայր Աթոռոյ միաբանութիւնս պնդենք, վկայենք երդմամբ՝ որ նոյն տոմսակների գումարն պատկանում էին երբեմն հանգուցելոյն։ Տարակոյս չ'կայ, օրէնք և գատարանք մեր վկայութիւնն կ'յարգեն, ճշմարիտ կ'համարեն, բայց չ'են կարող Մակար Կաթուղիկոսին եկեղեցական սեփականութեանց վատնիչ համարել իւր գրամները ժառանգաւորաց թողնելու մասին, ըստ որում գիտեն

նոքա թէ՝ առաջնորդութիւնն ոռձկաւոր պաշտօնատարութիւն է համարուում և ժողովրդից իւրաքանչիւր հոգեորականի տուած ժամոցադրամն նոցա անձնական հոգեոր մշակութեան վարձ է ճանաչուում, իսկ Տէր Մակարի այդ կարողութիւնը նոյն տեսակ ստացուածք են և ոչ յափշտակութիւնք: Օրէնք և գատարանք Զեր գերապատութեան կայից վերաբերութեամբն անգամ, որ առաւել խիստ պէտքէ լինին՝ (ըստ որում Դուք վաստակած էք տաճարի կրտսեր և աւագ լուսարարութեանց պաշտօններում, կամիմ ասել ուղղակի եկեղեցւոյ սեղանի, սրբոց մասանց և սրբալոյս միւռոնի սանի մօտ դրուած գանձանակներից), չեն կարող խիստ դատաստան առնել և Զեր Մարգար եղբօրն նուիրած այգին և տունն յետ ստանալ, էջմիածնին սեփականել: Մակայն Դուք բարեհաճեցիք օրէնքից և գատարանից խիստ լինելով՝ հանգուցեալ Հայրապետի համբաւն արատաւորել՝ թոյլատրելով հրատարակել Արարատում այսպիսի տողեր. «Եթէ մի Հայրապետի տարեկան 20 հազարից աւելի ծախսերը կարող է հոգալ էջմիածնը, եթէ նորա «մասնաւոր ծախուց» համար Մայր Աթոռի գանձարանը պարտաւոր է չորս հազար բուրքի փող տալ, միթէ այդ Հայրապետի ունեցածը մասնաւոր սեփական կայք համարուելու էր»: Իւրաքանչիւր միաբան, մանաւանդ Սինօդի անդամ, իւր կշռով ծախս է նստում Մայր Աթոռին յայտնի կամ անյայտ կերպով, միթէ նոցա ունեցածն առկենդանութեամբ վանքապատկան է համարուում: Այն ինչ լաւ յայտնի է շատերին՝ որ վեհարանի ծախքերի

մեծ մասն լինում էին հիւրոց և նոյն իսկ միաբանից համար, որոնք մշապէս շահուած են Յակովի թուլութիւնից: Ո՞չ թէ քսան և չորս հազար, այլ հարիւր հազարներ են ծախսուում արքունի գանձարանից և եկեղեցական գումարներից ոուսաց մետրապօլիտների, էքպարինների և առաջնորդների համար, բայց և այնպէս նոցա կայք սեփական և մասնաւոր են համարուում օրինաց յառաջ և ժառանգներին մատչելի: Ռուսաստանում օրինաց ներգործութիւնն միօրինակ է հասարակաց հպատակաց համար առանց խարութեան:

Թերևս զարմանաք ոոյն տողերս կարդալով և ինձ նման վարանիք, թէ մեր նուիրական ուխտին և երդման հակառակ է այդ: Ըստ որում Վասուծոյ սեղանի առաջ, եկեղեցւոյ ուխտի ներկայութեան յառաջադրած ենք Զերեղեայ որդուոց նման «թողուլ զամենայի զնալ զկնի հետոց Քրիստոսի»: Ազգ, բարենայն և գնալ զկնի հետոց Քրիստոսի: Ազգ, բարենայն արենակից, աշխարհ, հարստութիւն, փառք կամ, արենակից, աշխարհ, համարեցանք, որպէս ուրացանք, անհայր, անմայր համարեցանք, որպէս զի եկեղեցւոյն պատկանինք, ուրեմն մեր գոյք՝ որ տաճարի սեղանոյ փշանքներէն է և յանուն Յիսուսի աշակերտի շնորհուած՝ ինչպէս կարող ենք և կ'համարձակինք մեր ուրացած և օտարացած ազգականաց թողնել: Դորա պատասխանն վաղանցեալ ժամանակի թողնել: Դորա պատասխանն վաղանցեալ ժամանակի թողնել: Դորա պատմութիւնից հարցնելու է, իսկ համար՝ իհարկէ պատմութիւնից հարցնելու է, իսկ համար՝ գարերիս և ներկայ օրերիս համար շատ վերջին գարերիս և ներկայ օրերիս համար հոպարզ և բացայայտ է, Ահա, Կախ՝ նորա համար հոպարականն իւր կայից տէր է, ըստ որում հակառընը կանչութեան ուխտին՝ կայք ստանալու իրառական անընչութեան ուխտին՝ կայք ստանալու

ւունք է ձեռք բերած ժամանակի ձախորդ հանգամանքների շնորհիւ: Եւ երկրորդ՝ չարաչար խոտորած է վանական իսկական կանոններից առանձին քսակ, զգեստուց տարագ, խոհանոց, ծառայ և այլն ունենալով: Ուրեմն՝ քանի որ նորամուտ անպատճենութիւնք չ'բարձուին և էջմիածնի կամ այլ վանուց միաբանք չ'մտնեն վաղեմի վանական օրէնքների ծրագրած անձուկ շըջանակ՝ իւրենց անիրաւ կերպով ստացած հարստութեանց անիրաւ կերպով և մատակարարութեան տէր են, որքան և կարծեցեալ պետական օրէնք և հասարակաց կարծիք բաց աչօք հսկեն նոցա վերայ: Տարակոյս չ'կայ՝ որ շատ արդարութեամբ վարուողներ ևս կլինին իւրեանց կայից հետ, ազգից ստացածն նորա հաստատութեանց թողնելով, բայց իմ խօսքս արտուղութեանց մասին էր:

Ներում եմ այստեղ մի արդարացի հարց առաջարկել Զեր գերապատուութեան և Սեղրակեան որբացանին՝ իրու Արարատի «ազգային բաժնի» հաւաքողի: Երբ 'ի զիտութիւն ազգայնոց հրատարակել հարկ համարուեց թէ՝ աթոռապատկան կայք, գոյք, ոսկեղէն, արծաթեղէն, և այն, որոնք գտնուած էին վեհարանում, չ'են համեմատուած ցուցակների հետ և ստուգուած՝ ինչեր են պակաս, ինչու նորա հետ 'ի միասին չ'ծանուցուեց՝ որ վեհարանի էջմիածնապատկան կահ-կարասեաց ցուցակն՝ զոր վարած էր Մամբէ սրբազն եպիսկոպոսն և մանրամասն արձանագրելով ամենայն ինչ՝ յանձնած էր 'ի պահպանութիւն Սինօղի, ինչ զիւթական գաւազանի հարուածով աներևութացած էր զործերից: Հուսկ ուրեմն

երբ ես և Ներսէս եպիսկոպոս այնքան պնդութեամբ հոգւոյ հարցախնդիլ լինելով զտնել տուփնք այն ժամանակաւ մատեան և գրեթէ ամէն ատենական նիստի պահանջում էինք համեմատել վեհարանի զոյքն և ստուգել պակասորդներն՝ ի՞նչ պատճառով զանցառութեան տրուեցան և չ'համեմատուեցան, որպէս զի ումից արժանն էր կորուստն ապացուցաբար պահանջուէր: Երբ Դուք այնքան հարցախնդիր էիք՝ որ Բերքի փեսայի տանից սրբազնագոյն կաթողիկոսի և Յակովի լուացած սպիտակեղէնք, սեղանոյ սփոսցներ, անձեռոցիկ և այլն 'ի վայելս անձին ստանալով թողիք Զեր սենեկում և օպայած շապիկները յանձնեցիք Զեր սպասաւորին հագնելու, ի՞նչ ծանրութիւն համարեցիք բանաւոր հրաման տալ ցուցակագիրներին՝ համեմատութիւն կազմել նոր և հին մատեանների մէջ: Երբ Դուք այնքան ընդարձակ և համբերատար սիրտ ու հոգի ունէիր Ամատունի Սահակ արեղայի և վեհարանի սպասաւոր Թաղէսս Յովսէփիւնի մէջ ծագած վէճը՝ Յակովի կօշիկների մասին, խաղաղել, առաջնոյն ձեմարանից արձակուած եղբօրորդւոյն պարզելով այն 'ի վայելումն՝ քան վերջնոյն, չ'էիք կարող արդեօք՝ զոնէ մեր աքսորանքից յետոյ, համեմատել տալ վեհարանի կայից հին և նոր ցուցակներն և պակասորդները յականէ յանուանէ տպագրելու յանձնել Արարատի «ազգային բաժնին» քան թէական անկարկներ անել իմ հասցէին: Յարմար չէ այժմ Զեր նման երախագէտ, պարտավճար բարեկամի համար Դաւիթ մարգարէի խօսքով առ Աստուած աղաչաւոր լինել, «Փրկեա զիս՝

Աստուած իմ, 'ի թշնամեաց իմոց,և 'ի հալածչաց իմոց՝ ապրեցն զիս»:

Չմուանամ ասել՝ Մշակ լրագրի թղթակից պարոն Եղեկեանց տակաւին էջմիածին էր՝ երբ իւր հեռագիր տպուած ուսացուեց, դորանով առաջին անգամ կասկած յայտնուեց Յակովին գողակիցներ ունենալու մասին։ Պատշաճ եղած նկատմունքն արի նորան, բայց ոչինչ ներգործութիւն չունեցաւ, ըստ որում համախոհից խորհրդարաններ երկու են՝ էջմիածին և Տփիսիս, ուր լինում են վառ երևակայութեան արտադրութիւնների արձանագրութիւններ։ Ուրեմն Մշակում տպուած անհաւաստի լրի համար նորան դիմել ներքելու մտօք՝ ոչինչ խորհուրդ չունէր, այլ տարապարտ աշխատութիւն՝ քանի որ ամէնքին յայտընի է Մշակ լրագրի սովորութիւնն՝ իւր անարդար հրատարակութեանց ներգումն չտպագրել իւր թերթում։ Տփիսիսի երբեմին առաջնորդը կարողացել էր հեռաւորների և մերձաւորների մէջ Մակար կաթուղիկոսի համար՝ գեռ շատ վաղուց, համբաւ տարածել և հաւատ հաստատել թէ՝ նա իւր Վրաստանի թեմակալութեան օրերում ունեցել է 70000 ըուբլի, որ կարող էր 100000 արծաթի համանել մինչև մահուան ժամանակն։ և այս հնարովի զրախնդիր ստութիւններն առիթ դարձան Զեր նախանձաւոր հետագոտութեան՝ որով ես և Ներսէս սրբազն Եպիսկոպոս՝ տակաւին քննական գործողութիւնք չ'աւարտուած՝ արժանացանք «անբարեյոյս» պատուամեռ կոչման, և այն քաղաքական իշխանութեան կողմից առանց օրինաւոր ապացոյցների և հաստատութեանց՝ որք

ամենայն գործում անհրաժեշտ պայմաններն են արդարագատութեան։ Սոյն տիսուր յիշատակաւ կփակեմ և Փետրուար ամսականի վերաբերմամբ առարկութիւնս։

Փ.

Մարտ ամսականի մէջ տպագրուած Տփիսիսեցի ազնուական Խաչատուր Բարսեղեան Ելիարովի և Վարդուհի Ստեփաննոսեան Ամիրեանցի Եօթներորդ աստիճանի արենակցական չ'հասութեան օրագրի համար պէտքէ վկայեմ ճշմարտութեանն։ արդարե, Սինօդի չորս անդամներս անթոյլարելի և Հայաստաննեայց եկեղեցւոյ Պետին վերապահելի ենք համարել։ Պարոն պիօկուրօրի առաջադրութեան մէջ յիշատակուած երկու նոյնպիսի Եօթներորդ աստիճանի արենառութեան չ'հասութիւնների թոյլատութիւնն եղած է նախընթաց հաճութեամբ հանգուցեալ Հայրապետի, որ ըստ սովորութեան քանի մի նմանօրինակ չ'հասութիւններ միանգամայն լուծանելով պատուիրում էր թոյլատութեան հրամանները հետրզնետէ ուղարկել, թէպետև օրագրերը յետոյ էին կազմուած, որոնց վերայ չ'կար նորին Սրբութեան ստորագրութիւնն։

Մի բան բաւականին հետաքրքիր է իմանալ, Սինօդի ատենադպիրն՝ որ չափազանցութեան է հասցընում իւր զգուշաւորութիւններն ամէն մի ինդիր գնոելու ժամանակ, ինչու չ'է յիշատակել նոյն երկու օրագրութիւնների մէջ՝ «թոյլատրի ըստ նախընթաց բարեհաճութեան հոգելոյս Հայրապետի», այլ դրած է «ոչ յօրինակ այլոց» սովորական խօսքերն, և անդամ-

ներս միամիտ հոգւով՝ առանց խորաքննին նախատեսութեան՝ ստորագրել ենք։ Այս հարցմունքի ամենաճշշգրիտ պատասխանն է, այդ սկզբանութիւն է յատկապէս, այսինքն մոգութիւն, խորամանկութիւն, խարդախութիւն, որպէս զի ապագայ լինելիք այնպիսի չ'հասութիւնների համար Զեր սրբազնութեան ձեռքում նոքա գենք դառնան և անդամոց համար լինին հարկագրութիւն՝ հու հնագանգութեամբ ճանապարհ տալու և այլ օրինագանցից, ինչպէս և պարոն պրօկուրօրը մատնացոյց եղած նոցա վերայ պահանջումէ։ Ամէն ուշադիր եղողներին սուրբ Եղմիածնի մէջ արդէն յայտնի են, ինչ չ'հասութեանց թուղթ ստացուի Սինօպում՝ նախապէս նորանց տէրերի հետ բանակցութիւններ կ'լինին Զեր յայտնի գործակալների միջոցաւ, և ապա ընթացք կ'արուին նոցա։ Վեհափառկաթուղիկոսին քանիցու այդ մասին մասնաւոր նամակներով ազգարարած են Տփիփից, որպիսի նամականիք Դուք ձեռք ձգելու եռանդուն փոյթ ունէիք նորա մահուանից յետոյ։

Պարոն պրօկուրօրի Ելիարովի պսակագրութիւնը բաց ասելու մասին կազմած օրագրին չ'ստորագրելու երկրորդ պատճառն ըստ իւր ասութեանն է որ «Սինօփի չորս անգամներս չ'նուունելով գիւանատան մէջ Զեր սրբազնութեան՝ իրեկ կաթուղիկոսական Տեղապահի, առաջարկութեամբ կազմուած օրագիրը, նոր օրագրութիւն ենք կազմել տուել»։ Արդարե, երբ չորս անգամներս իմացանք՝ որ Դուք Զեր սենեկում նըստած ժամանակ՝ առանց ատեան իջանելու, կոչել էք պարոն ատենադպրին և պսակի թոյլտուութեան օրա-

վիր կազմել տուել, և այդ երբ պարոն Ելիարեանց Տփիփից եկած ներկայացել է Զեզ, իսկոյն ատեան ժողովուելով՝ պատուիրեցինք նոր օրագիր կազմել և բացասութիւն առնել։ Եւ այս այն օրն՝ երբ պարոն պսակատէրն մի օր յառաջ Զեր յօժարութիւնն առած հետևեալ օրն Սինօփի ատենում անպատշաճ, ծաղրածու կերպով անհրաժեշտաբար հրաման էր խընդըրում պսակագրութեան համար և անվայել խօսքերով հոգեսոր Բարձրագոյն ատեանը կամայականութիւն և աշտութիւն ունեցող էր համարում, առանց յարգելու անգամների պատասխանն՝ որ եղած չ'համների թոյլտուութիւնը Վեհափառ Հայրապետի կամքով և հրամանովն էին։

Իգուր է պարոն պրօկուրօրի արդարացուցիչ պատճառաբերութիւնն՝ որ պարոն Ելիարեանցն անդամոց բացասութեան պատճառով վրդովուած իմ անձնաւորութեան գէմ սկսել է բոնական միջոցների գիմել։ Արդէն ես ունիմ ապացոյցներ՝ նոյն պարոնն այն օր, երբ գժբախտ դէպքը պատահեցաւ, իրեն իսկ պրօկուրօրի տանն է եղել։ Այդտեղ լաւապէս հրահանկուրի տանն է թէ՝ ինչպէս պէտքէ վարուի ինձ նման մի գուել է թէ՝ ինչպէս պէտքէ վարուի ինձ նման մի կրքոտ մարդու հետ, որպէս զի իւր դատը կարողական վաստակել և հրապարակական նախատանաց արժանի իրողութիւններ յառաջ բերել։ Բայց այդ օր նորա հաշիւ սխալ գուրս եկաւ։ Ես պատշաճից կանոնէն չ'խոտորելով՝ պարոն աղմկարարի ներկայութեամբ՝ որ իմ պատւոյ գէմ արշաւանք գործեց գրագրանցում, իւրապէմների վերայ հսկելու պարտականութիւն ունեցող ոստիկանական աստիճանաւորի կամութիւն ունեցող ոստիկանական աստիճանաւորի

ձեռքով արձանագրութիւն կազմելն պահանջեցի: Սակայն և այնպէս, իբրև անձն հոգեորական, կազմած արձանագրութիւնը թողի անստորագիր և ներողամբութեան արժանացրի երեք հազար ասպարէզ ճանապարհ եկողին Մերվից իւր գործի համար և թերեւ նոյն թուանշանաց չափ ՚իգուր դրամ ծախսողին, որոց մասին նա տրանջել էր շատերի մօտ:

Զարմանում եմ, ի՞նչու պարոն պրօկուրօրն՝ երբ իւր առ Սինօդը թղթակցութեան նիւթ է շինում ինձանից ատենազպի ձեռքով ելիարովի օրագիր պահանջելն և չ'ստանալն, անյիշատակ է թողնում իմ պատամխանն: Եթէ նորա պահանջն ինձ յայտնել է ատենագիրն՝ անտարակոյս հազորվել է նորին գերազնութեան և իմ տուած անդրագարձն: Ըստ որում նա այդ մասին խորին լուսութիւն պահպանելն է հարկաւոր համարել, ես ևս առ ժամանակ վարագոյն առ կախ կ'թողում մինչև որ ապագայն հետաքրքիր հասարակութեան՝ առաջ ամեն ինչ մերկապարանոց կրանայ և ձեական գերակատարների դիմակը կ'վերցնի: Մըրազան Հայր, ես ոչ միայն Մըրաբատի սպանագին ազգարարութիւնից եմ խրախուսուած՝ որ անցեալ բոլոր եղելութեանց համար կ'լինի մանրամասն հարցախնդրութիւնն, այլ ուղիդ բանի ազգեցութեամբ հաւասարի եմ՝ որ արդարութեան պարագ լիովին վճարուած չի լինի՝ եթէ քաղաքական կամ եկեղեցական իշխանութեանց կողմանէ օրինաւոր ստուգութիւնք չ'լինին և իւրաքանչիւր ոք ըստ արժանեաց հատուցումն չ'ստանայ: Այս պահանջնում է Աստուածային արդարագատու-

թիւնն, պահանջնում է երկրաւոր իշխանութեան օրէնբարութիւնն, պահանջնում է և իւրաքանչիւր անձնաւորութեան խղճմանաց գիտակցութիւնն:

ԺԱ.

Արարատի Ապրիլ ամսականում հրատարակած կրկնակի օրագրութիւններից և նորան վերաբերուած զանազան յայտաբարութիւններից՝ Ազքիրմանցի Մկրտիչ Երամեանի չ'հաս պսակի վերաբերութեամբ արգէն բաւականին բացատրուումն այն գեղեցիկ օրինապահութեան նախանձախնդրութիւնն՝ որով զինուորուած Զեր գերապատուութիւնն, պարոն ատենագիրն՝ իբրև պաշտօնակատար պրօկուրօրի, ամէն ջանքեր գործադրեցիք արտաքին լոկ օրինական ձեերի տակ յաջողեցնել նոյն չ'հասութեան թոյլուութիւնն: Յիշում էք Դուք՝ որ այդ գործի համար եռուսնդում միջնորդութիւն անող Վարդանեանց Տըրդասն և Եղիազարեանց Վասիլն նախապէս Զեր հաճութիւնն էին ստացած, և ապա ինձ խաբած միւսների հաւանութիւնն առնելու մասին: Յիշում էք և այն՝ որ Սինօդից պարոն Փիլիպպոսեանցի միջոցաւ հազորդունք են ամէն մանրամասն տեղեկութիւններ պսակատիրոջ թէ՝ արգէն օրագիրը ստորագրուած է և հրամանն շուտով կարձակուի՝ այն ինչ գերապատիւ Արիստակէս եպիսկոպոս Դաւթեան չ'էր ստորագրուած, որպէս զի նա պաշտօնապէս զիմէ պրօկուրօրին և նախարարին Սինօդի վերայ բողոքելու և իւր

նպատակին հասնելու։ Սակայն այս գործի միջում
եղած անարդար վարմունք յայտնուելով Սարգիս
սրբազն եպիսկոպոսին և Բարդուղիմէոս վարդապետին՝
պահանջում են քննութիւն։

Ուրախալի է՝ որ Զեր յուսալի Սինօդի վերջին
կազմութիւնն անդամ յանձն չէ առնում Հայրապետա-
կան իրաւանց գէմ արշաւանք կազմել և պրօկուրօրին
այդպիսի խնդիրներում վճռահատութիւն պահանջելու
հարկադիր ոք ճանաչել, ըստ որում զուտ եկեղեցա-
կան է հոգեոր իշխանութեան վերապահուած՝ անդամ
և պետական օրենքով։ Հետաքրքիր էր տեսնել շու-
տով այդ մասին նախարարութիւնից ուղարկուած
անաշառ քննիչ։ Դորանով կիմացուի՝ որ Դուք և
պրօկուրօրն օրինակելի անշահասէր գործողներ էք:
Իսկ թէ որեիցէ պատճառաբանութեամբ լուսութեան
տրուի, կամ թողուի կաթուղիկոսին անօրինել, յայտ-
նապէս կծանուցուի՝ որ Զեր սրբազնութիւն և պրօ-
կուրօր՝ ուր տեղից արժանն է, ներշնչուած էիք հո-
գելոյս Հայրապետի մահուանից առաջ և յետոյ ցայ-
սօր ամէն ինչ ՚ի վնաս Հայաստանեաց եկեղեցոյ
բարոյական շահերի գործել և խոչնդուաներին հե-
ռացնել գործողութեան ասպարէցից։

Ներկայ յօդուածու չեմ կարող վերջացնել առանց
ամբողջովին մէջ բերելու յետագայ անամօթ ստու-
թիւնն։ «Մի քանի օրից յետոյ այդ պատկի հրամանը
յանուն կոնսիստորիային Հայոց Բեսսարաբիոյ դըր-
ուումէ ատենում սուրագրուելու համար բայց սըր-
բազն Սուքիս եպիսկոպոսը պատառում է այդ
հրամանը օրագրի սկագութեան հետ միասին և պա-

հանջումէ գատաստանական մասի գործավար Բենիա-
մին Տէր-Գրիգորեանից իսկական օրագրը և տալիս է
սրբազն Սարգիս եպիսկոպոսին, որն և առնելով
գրիչը ջնջում է իւր ստորագրութիւնը այդ օրագրի
մէջ։ Անամօթ ստութիւն եմ ասում, ըստ որում
գորանից անմիջապէս յետոյ յառաջ է բերուած ու-
ղիղ եղելութիւնն, որոնք մանըամամն նկարագրուած
են սրբազն Արիստակէս եպիսկոպոս Դաւթեանի և իմ
յայտարարութեանց մէջ։ Ի՞նչ հարկ կար ինձ այնքան
կրքոտ և վաղվաղկոտ, նախապաշարուած և անշրջատես
ցոյց տալ մի թերթ թուղթ պատառելու համար, քանի
տակաւին նա չէր ստորագրուած և չէր համարուիլ
պաշտօնական հրաման։ Քիչ է պատահած Սինօդումն՝
ոչ թէ անդամի, ատենագորի և գործավարի ստորա-
գրութիւններով վաւերացած հրամաններ են պատա-
ռուած անուշագիր մնացած սիալների պատճառով, այլ
նոյն իսկ և շատ կաթուղիկոսի և պրօկուրօրի ստորա-
գրութիւն ունեցած օրագրեր, որոց փոխարէն նորերն
են գրուել։ Թերևս այսպիսի զայրացկոտ ցոյց տալով
ինձ՝ պաշտօնական տեղեկութեան համառօտղն ցան-
կացել է, նաև՝ հաստատել իւր Հայրենիք լրագրին տու-
ած տեղեկութեանց ճշմարտութիւնն, իմ՝ Սինօդի ատե-
նումն իբրու թէ ամէն ժամանակ աղաղակ և վրդով-
մունք յարուցանելու մասին, և երկրորդ՝ բացերեսակի
արտափայլել Զեր սրբազնութեան սառնարիւն և օրի-
նապահ գործավարութեան եղանակ, ինչպէս որ շատ
անգամ Մշակ լրագրի գովութեան նիւթ է գարձած
պարոն Ռուբէն Մելիք-Աղամեանցի պատմութեամբն։
Սակայն այդպիսի գէպքերում առաւել յաջողակ նկա-

բիչ կ'մնէր նա, եթէ Զեր ինքնաձեռագիր միայն տասնաւոր բառերից բաղկացած մակագրութիւններն իրենց անհեթեթ սխալներով արտահանէր և հրապարակ դնէր: Այն ժամանակ յայտնապէս կ'ճշմարտուէր՝ օրէնք և գիր չ'գիտեցող նզովեալների կարգին ով է պատկանում:

ԺԲ.


Գերապատիւ սրբազնն Հայր, վերջացնելով Արարատի անձիշտ հրատարակութեանց մասին առ Զեղ ուղղած սակաւատող նամակս՝ պատմական անցքերի և գործողութիւնների գեռ ևս նորութեամբ չ'մոռացուած ժամանակ զօրեղ գործողների կենդանութեան և իւրեանց պաշտօնական ազդեցութեան շրջանակում փառացի բազմած միջոց՝ ցանկանում եմ հրատարակել այս ՚ի գիտութիւն ամէնքի՝ յոյս ունենալով սուրա մասին լինելիք տարակուսութիւնք կ'յաջողէ ինձ Աստուած փարատել պաշտօնական գրութեանց ազացոյցներով, որոնք այժմս պակասում են ինձ աքսուրավայրումս, զի կ'հաւատամ «Ճինէ Տէր զերուսադէմ և զցրուեալն իսրայէլի ժողովէ, բժշկէ զբեկեալ սիրտս և պատէ զամենայն վէրս նոցա», և յանուն ճշմարտութեան Զեր սրբազնութեան և այլ յիշատակուած անձնաւորութեանց բարեմտութիւնն եմ հրաւիրում՝ վկայել արդարութեանն և իրաւանց, որպէս զի ապագայի յիշատակարանք ուղղահայեաց ակնարկ ունենան անցեալ իրականութեանց մասին և

ոչ սխալ: «Ո՞չ երկոտասան ժամ է աւուրն, որ գնայ ՚ի տունջեան ոչ գայթակղի»:

Զեղ յանձնելով Յիսուսի Քրիստոսի անյիշաչար գիրութեան և ողորմութեամն, մնամ Զեր գերապատութեան խոնարհ աղօթակից:



20 Ապրիլի 1892 ամի
Արեօլ քաղաքում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0163250

